

5755

ԱՐԱՄ ԵՐԵՎԱՆ
ԴԱՐԻՍ — ԱՐԱՄ

ՆՈՐ-ԶՈՒՂԱ



ԵՐԵՎԱՆ — ԶՈՒՂԱ

Տպարան Ս. Ամենափրկչիան Վանքի

1919.

1798

1412

~~5755~~

4698



1298


Հղվածք անդամ չէր ընդունվում .

Արամ Երեմեան

Ղարապ — Արամ



ՆՈՐ-ՋՈՒՂԱ



Նոր—Ջուղա

Տպարան Ս. Ամենափրկչեան Վանքի

1 9 1 9

9778

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.	Առաջարանի տեղ	Երես
2.	Նոր-Ջուղան և հայերը	6
3.	Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան Վանքը	10
4.	Ս. Ամենափրկչեան Վանքի Մայր-եկեղեցին	13
5.	Նոր-Ջուղայի Ս. Եկեղեցիները	18
6.	» » Առաջնորդական-Խորհրդարանը	21
7.	Ս. Ամենափրկչեան Վանքի Թեմակալ-Առաջնորդները	23
8.	» » Տպարանը	34
9.	» » Մատենադարանը	39
10.	Նոր-Ջուղայի դպրոցները	
	ա) Ազգ. Գեներոնական դպրոցը	43
	բ) Ս. Գառարինեան օրիորդաց դպրոցը	45
	գ) Գէորգ Քանանեան դպրոցը	47
	դ) Ս. Ամենափրկչ. Հոգևոր գիշերօթիկ դպրոցը	56
	ե) Ս. Գառարինեան Որբանոցը	58
11.	Նոր-Ջուղայի Բարեգործական Ընկերութիւնները	
	ա) Հայունեաց բարեգործ. ընկերութիւնը	60
	բ) Աղբատախնամ »	70
	գ) Հայոց Արանց բարեգործ. »	70
	դ) Ս. Գառարինեան Արհեստանոցը	71
	ե) Գանանց կարմիր Խաչի Միութիւնը	72
12.	Նոր-Ջուղայի Գրադարան-Ընթերցարանները	
	ա) Ռաֆֆի գրադարան-ընթերցարանը	75
	բ) Երկունք գրադարանը	76
	գ) Գեներոնական գրավաճառանոցը	77
13.	Նոր-Ջուղայի Լրարերը	78
14.	» » Ազգ. Թատրոնը	84
15.	Գործիական երաժշտութիւնը Ջուղահայերի մէջ	90
16.	Աշխատանքի երկը Նոր-Ջուղայում	93
17.	Արհեստները Նոր-Ջուղայում	97

Այս իմ առաջադրուքը
ՆԻՒՐՈՒՄ ԵՄ

Միջագետքի տարագիր հայ ժողովրդին:

Ա. Ե.

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Մեր այս ժողովածուի նպատակն է, ցոյց տալ տարա-
գիր՝ Զուղահայ ժողովրդի դարերոր սեղծագործութեան պատկերը:

Թէ յիշեալ ժողովուրդը որ աստիճան նպաստել է քաղաքա-
կրթութեանը, ուրիշ խօսքով քաղաքակրթութեան պրօցէսի մէջ ինչ
դեր է խաղացել, ահա մենք այս գրքոյկով կը պատկերացնենք այդ,
այնպէս, ինչպէս նրանք կան և ոչքան մեր ոյժերը ներել են:
Այժմ այսքանը կասենք, որ Զուղահայ ժողովուրդը յարմարելով մի-
ջավայրին՝ զարձել է քաղաքակրթութեան համեստ ներկայացուցի-
չը, և եթէ ոչ գերակշռող, գէթ պատկառելի դեր է խաղացել:

Գուք կրտսնէք այստեղ նրա ընդհանուր ոգին, ձգտումները,
նրա կուլտուրական արժէքները և ստեղծագործութեան գեղեցիկ
էջերը, որոնք պատիւ են բերում ամբողջ հայութեան:

*
* *

Այս ժողովածուի մէջ ամփոփւած են մեր այն յօդւածներէն,
չատերը, որոնք լոյս են տեսել Բագրի ՀԱՐԻՍ և «Թատրոն և Երա-
ժշտութիւն» թերթերում: Անշուշտ այս աշխատութիւնն ունի իր
թերութիւններն ու պակասութիւնները, բայց սա լինելով իմ ա-
ռաջին աշխատութիւնը, լիայոյս ենք, որ ընթերցող հասարակու-
թիւնը ներողամիտ աչքով կը վերաբերուի:

Պարտք ենք համարում նաև ասել, որ գրքոյկը կազմելիս օգ-
տուել ենք զանազան պարբերական հրատարակութիւններից, բրօ-
շիւրներից և այլ աղբիւրներից:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

ՆՈՐ-ՋՈՒՂԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Ներածութիւն

Նոր-Ջուղան Սպահանի հայաբնակ արւարձանն է, որը փռւած է նրանից երեք քառորդ ժամ հեռաւորութիւն ունեցող մի ընդարձակ դաշտի վրայ և իր գեղեցիկ պանօրամայով ունի խիստ բանաստեղծական տեսք: Արւարձանի աջ կողմից բարձրանում են լեռներ ու բլուրներ, բարձր չեն այդ լեռները, մերկ և միանգամայն զուրկ են կանաչութիւնից: Արւարձանի միջից անց է կենում մի փոքրիկ առակ, որը շրջապատւած է չինարի, հացի, թթի ծառերով, որոնք գարնան կանաչելով բանաստեղծական տեսք են տալիս: Փողոցները համեմատաբար կանոնաւոր են, տները լաւ, կոկիկ, մեծագոյն մասն աղիւսաշէն է, մեծ մասամբ մի և երկու յարկանի: Կան փոքրիկ հրապարակներ, փոքրիկ շուկաներով: Օդը բարեխառն է և թէև ամառը միքիչ շոգ՝ սակայն առողջարար է: Տեղացի հայերը Շահ-Աբբասի ժամանակից գաղթած (1605). Արարատեան դաշտի տարագիր հայութեան բեկորներն են, որ կենտրոնանալով օտար այս հորիզոնների տակ, կարողացել են պահպանել իրենց լեզուն, կրօնը, եկեղեցին, գրականութիւնը, ազգային առանձնայատկութիւնները, և քաջելով գէպի մտաւոր և բարոյական վերածնունդ՝ ստեղծել են իրենց համար մի նոր կեանք, նոր կուլտուրա, գրականութիւն և տնտեսական կեանք: Նրանք կտրւած և կղզիացած լինելով հարևան քաղաքակիրթ ազգերից, միանգամայն նւիրւած են իրենց տնտեսական-կրթական գործերին: Պարերի խոշտանգումներն ու սարսափները չեն կարողացել ջնջել նրա կենսունակութիւնը, նրա հոգեկան ձգտումներն ու իդէալները: Այսքան հեռու, անհարազատ մի

միջավայրում, նրանք զարգացել ու առաջադիմել և ստեղծել կրթական-կուլտուրական մի նոր աշխարհ՝ նոր մտքերի, յոյզերի և հոգեկան ապրումների: Դրան ապացույց է նրանց կրթական-կուլտուրական նպատակներով կազմաւորվելները, գրադարան-ընթերցարանները, դպրոցները, նրանց հոյակապ վանքը, եկեղեցիները, մատենադարանը, տպարանը, թատրոնը և այլն: Կա մի մեծագործութիւն է: Եւ այսօր կուլտուրայէս տւելի բարձր լինելով հարեւան պարսիկներէց, այժմ կանգնած են յառաջադիմութեան ճանապարհի վրայ:

Սոսոււմ են բաւական մաքուր՝ գրական լեզուով և ունին իրենց առանձին բարբառը: *)

Զգեստ: Ծեր կանայք և մարդիկ ունին իրենց ռւբոյն՝ նահապետական տարազը, իսկ նոր սերունդը հագնոււմ է կիսաւրոպական.

Բուսականութիւն եւ Մրգեր: Նոր-Ջուղայի շրջակայքում բնութեւն տաք գօտու համարեա բոլոր բոյսերը, օր. բամբակ, ծխախոտ, խաշխաշ, բանջարեղէններ, ցորեն, գարի, և այլն: Իսկ այգիներում աճում են դեղձի, ծիրանի, խնձորի ծառեր, խաղողի որթ, նշենի, թուփ և այլն: Յայտնի են Նոր-Ջուղայի չորացրած մրգերը:

Կենդանիներ: Կենդանիներից մասնաւոր անձեր պահում են ձի, էջր, կովը, ոչխարը և այլն:

*) Ահա նմուշներ նրանց բարբառից:

— Գոր աս:

— Գոնլաո ըտէնց բան անես:

— Բա դօր կելնի:

— Խըարաս ինչ է ելէ: Սրահի արի, ընչուք տսեմ քեզ:

— Խնդրում ամ՝ երբօր դնաման ելնես, տսես:

— Լէվա, կապիմ:

— Բասկի ֆիքր աս անում:

— Որդի ֆիքրը ջան կը կտորի:

Նոր-Ջուղան բաղկացած է 610 տնից, 3748 շնչից և 8 թաղերից՝

№	Թաղ	Տուն	Արաւ	էգ	Շունչ
1.	Մեծ-Մէյդան	84	230	251	481
2.	Փոքր	59	155	167	322
3.	Չարսու	80	274	275	549
4.	Յակովբջանեց	47	152	146	299
5.	Ղարադէլ	23	55	61	116
6.	Քօչէր	106	315	295	610
7.	Դաւրէթ	138	450	474	924
8.	Երևան	73	231	216	447
Ընդամենը		610	1862	1386	3748

Նոր-Ջուղայի տեսեսական դրութիւնը: Նոր-Ջուղայում կենքի թանգութիւնը հսկայական չափերի է հասել և օրէցօր ժողովրդի տառապանքը սաստկանում է հացի, շաքարի, իւղի, բրինձի և այլ կենսական մթերքների առասպելական թանգութեան կամ բացակայութեան պատճառով: Այնպէս որ պարենաւորման խնդիրը դարձել է մղձաւանջ և հիւժոււմ, մաշում է Ջուղայի հայութեանը: Մանաւանդ շատ ողբերգական է տեղիս չունեւոր դասակարգի գրութիւնը: Նա տառապում է պարենաւորման ճգնաժամից: Կան բազմանդամ ընտանիքներ, որ օրական ցամաք հաց չեն կարողանում զտնել և տառապում են մի կտոր հացի համար: Նրանք խեղդում են կեանքից և հիւժոււմ, քայքայւում դաժան սովի ճիրաններում: Այսպէս Նոր-Ջուղան կանգնած է սովի գրանը: Քաղաքում ցորեն չկայ, այլուր չկայ: Ալիւրի բեռը տալիս են 30 թումանով, ցորենը 25. և այն էլ գժւարութեամբ է ձարւում: Միւս կողմից ամեն կարգի անհրաժեշտ կենսական մթերքները մեծ գժւարութեամբ են ձարւում և արդէն իրենց գներով առասպելական չափերի են հասել: Այսպէս՝ սուլի լիտրը տալիս են 14 զուանով, բրինձը՝ 26, իւղը՝ 60, շաքարը՝ 40, պանիրը՝ 45, լուբիան՝ 17 միսը՝

12, իսկ մանուֆակտուրային և կոշիկեղէնը արդէն անասելի չափերի են հասել: Այս պատկերի վրայ աւելացնենք անվերջ աւազակութիւնները, հրէշային անարխիան և երթևեկութիւնների բացակայութիւնը, որ աւելի սոսկալի կացութիւն է ստեղծել թէ գիւղերի և թէ քաղաքի ազգաբնակչութեան համար: Այսպէս Նոր-Ջուղայի վիճակը շատ անմխիթար է և բնակչութիւնը, մանաւանդ նրա չքաւոր դասակարգն ապրում է տնտեսական ծայրայեղ կացութեան մէջ:

Գաղթականութիւն: Տնտեսական այդ անապահովութիւնը Ջուղահային դարձրել է տարագիր և ահա ժողովուրդը յուսահատ լքում է իր տունն, իր հայրենի օջախը, հայրերի գերեզմանն ու եկեղեցիները և գիծում է գէպի Հնդկաստան, Նասերի, Սինգափուր, Ջավա՝ այն բոլոր վայրերն, ուր կարելի է մի կտոր հաց ձեռք բերել: Եւ գաղթում են նրանք շարան-շարան, ամբողջ բնուանիքներով: Այդ գաղթականութիւնը գէպի Հնդկաստան, Ջավա նոր չէ սկսել, արդէն 100 տարի կը լինի, որ հայերը գիծում են գէպի այդ հեռւոր երկրները, սակայն ամենամեծ հոսանքն սկսել է միայն այս վերջին երկու տարիների ընթացքում: Այս երկու տարւոյ ընթացքում գաղթողների թիւը հասնում է 426 հոգու: Նրանք գաղթում են և այլևս վերադառնալու ոչ մի յոյս: Սա մի մեծ չարիք է պարսկահայերի համար, որ պիտի առաջն առնելու աշխատել:

Ահա 1914—17 տարեշրջանի Նոր Ջուղայից գէպի Հնդկաստան և այլ տեղեր գաղթողների ցուցակը՝

№	Թաղ	Արական	Իգական	Ընդ
1.	Երևան	27	18	45
2.	Կարլս	42	38	80
3.	Գոշէր	31	55	86
4.	Չարսու	62	26	88
5.	Յակոբբեյ	19	8	27
6.	Փորր-Մէլլան	37	27	64
7.	Մեծ-	16	20	36
		234	192	426

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԶԵԱՆ ՎԱՆՔԸ

Նոր-Ջուղայում, հայերը նշանաւոր են իրենց այս ու այն կողմ փռւած հռչակաւոր, պատկերազարդ եկեղեցիներով և վանքով: 1606 թւին կենտրոնանալով նրանք Նոր-Ջուղայում, հիմնում են բազմաթիւ եկեղեցիներ և մի վանք: Այդ եկեղեցիները և վանքը լուռ վկաներ են Ջուղահայ ժողովրդի գեղազիտական ու ճարտարապետական տաղանդին, որոնք իրենց գեղեցկութիւնով հիացմունք են պատճառում ամեն մի օտարականի և հազարաւոր նւիրական զգացմունքներ առաջ բերում:

Այդ սուրբ վայրերից ամենանշանաւորն է Ս. Ամենափրկչեան վանքը, որը գտնւում է Մեծ-Մէլլան թաղում: Դա 17-րդ դարի ճարտարապետական ընտիր, հոյակապ և պատկառելի մի հնութիւն է, որ իր փառահեղ տեսքով կազմում է մի յուշարձան Ջուղահայ ժողովրդի կրօնամիտ տիք ոգոյն, մի կոթող նրա անցեալ փառքին: Այդ վանքը մեծ չէ, նա փոքր է իր արտաքինով, բայց իբրեւ ճարտարապետական մի շէնք, իր արտաքին խորհրդաւոր և գեղեցիկ կառուցւածքով, իր ինքնատիպ պարզութեամբ և ամբողջութիւնով ներկայացնում է մի գեղեցիկ գործ: Պատկառելի այդ կոթողը գեղեցիկ ապացոյց է տարագիր-պանդուխտ ժողովրդի տոկուն աշխատասիրութեանը, նրա ստեղծագործութեանն ու կենսունակութեանը:

Այցելուն առանձին հիացմունքով և հպարտութեամբ է նայում դարերի այդ փառահեղ մնացորդի վրայ, տկամայ կանգ է առնում այդ հսկայ կոթողի առաջ, խորասուզւում անցեալի պատմութեան մէջ և համակոււմ է մի շարք պատմութիւնից մնացած տխուր յիշողութիւններով:

Այս հաշակաւոր շինութեան հիմքը դրւել է 1606 թւին, երբ հայերը առաջին անգամ Նոր-Ջուղա են հաստատուում: Նրան տալիս են հին Ջուղայում ունեցած «Ամենափրկիչ» վանքի անունը: Սակայն սկզբնական այդ կառուցւածքը լինելով շատ անպաճաճ և անշուք, 50 տարի յետոյ՝ 1654 թւականին քանդուում և հասարակութեան օժանդակութեամբ ու Գաւթ առաջնորդի ձեռնբերեցութեամբ, ինն տարւայ ընթացքում կառուցւում է այժմեան փառաւոր վանքը:

Վանքի եկեղեցու արեւմտեան դրան վրայ գտնւում է մի յախճապակեայ դրով արձանագրութիւն, որը անհրաժեշտ եմ համարում առաջ բերել. որովհետեւ վերաբերում է վանքի շինութեանը:

«Հիմնարկեցաւ Ամենափրկիչ Վանքս ի թիվն ՌճԻ ի թագաւորութեան երկրորդ Շահարբասին, և կաթողիկոսութեան Տիառն Փիլիպպոսի, ի ձեռն սուրբ ուխտի առաջնորդի Գաւթի վարդապետի, կամակցութեամբ և տրօք Ջուղայու ժողովրդոց, և աւարտեցաւ ՌճԹ. Գ. ամի: Որքան պատարադ և պաշտօնք որք ՚ի սմա կատարի՝ լիցի մասն և բաժին հարկ կենդանեաց և ննջեցելոց»:

Իսկ 1916 թւին Վանքի արեւելեան կողմը կառուցւեցաւ մի նոր շինութիւն, որ բաղկացած է 14 սենեակներից: Շինութեան ծախքը հոգացել է հարասա հնդկաբնակ Նոր-Ջուղայեցի պ. Յովհաննէս Պալստանեանը:

Այս Վանքը փուլած է մի ընդարձակ, հարթ տարածութեան վրայ, որի արեւմտեան և հիւսիսային կողմերից բարձրանում են հայոց տները, իսկ արեւմտեան մասում գտնւում է մեծ դուռը, որի վրայ յախճապակեայ զարդանկարով դրօշմւած է Վանքի շինութեան պլանը: Դռան երկու կողմերում, քառակուսի քարերի վրայ կանգնած են 5 կանգուն բարձրութիւն ունեցող. բոլորակ երկու զոյգ քարէ սիւներ, որոնք առանձին խորհրդաւորու-

թիւն են ներշնչում այցելուին: Դռան առաջը տարածւում է փողոցը, որի միջով հոսում է մի փոքրիկ առու, որը շրջապատւած է հսկայ սօսիներով:

Վանքը շրջապատւած է հասաւորիսպով: Հարաւային պարսպի երկայնութիւնն է 122' և լայնութիւնն արեւմտեան կողմից 63 ոտնաչափ: Իսկ ճանապարհը գէպի հարաւ տանող պարսպի երկայնութիւնն է 124' և լայնութիւնը 66 ոտնաչափ: Երկրորդ պարսպի երկայնութիւնն է 107' և լայնութիւնը 101 ոտնաչափ: Վանքի արեւելեան կողմում տարածւում են երկու փոքրիկ պարտէզներ, ծածկւած գեղեցիկ վարդի թփերով և չորս բարձր նոճիի ծառերով: Նստւում ես, այդ վիթխարի, մէկը միւսից աւելի գեղեցիկ հրականերին, որոնք քամիի բարակ, մեղմ շքնկշմկոցի հետ, յստի քեզ դարերի պատմութիւնն են անում և հազարաւոր նւիրական յիշատակներ արթնացնում:

Արեւելեան միւս երեսում գտնւում են նոյնպէս մի պարտէզ և գիշերօթիկ աշկերտների սերտարան-ննջարանը:

Վանքն ունի մի մայր եկեղեցի, տպարան, մատենադարան: Պահւում է գիշերօթիկ Հոգևոր մի դպրոց: Վանքում գտնւում է նաև առաջնորդ-խորհրդարանը և հոգարարձական խորհրդարանը:

Վանքի հասոյթը: Վանքն ունի իր սեփական կալւածները և այգիները: Անշարժ կալւածներն են՝ 26 կրպակներ և խանութներ, մի հրապարակ, մի անտառ և մի տուն:

Վանքի աւանդական նւէրները շատ աննշան են և ամբողջ մուտքը չի ծածկում ելքը, դրա համար էլ վանքը հազիւ կառավարւում է:

Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Վանքի առաջնորդարանի և զանգապատան երեսների մէջ կանգնած է Մայր-Եկեղեցին, Դա մի փոքրիկ եկեղեցի է, բարձրաշէն, գեղեցիկ զմբէթով և յաղթական խաչով: Եկեղեցու շինութիւնը սերտ կերպով կապւած է երջանկայիշատակ Յովսէփ Արեւամաթացու անւան հետ (նրա մասունքը ունենալու պատճառով): Ամեն մի Զուղայեցի օրհնանքով է յիշում այդ անունը և որի տօնի օրն էլ կատարւում է վանքի տօնախմբութիւնը: Եկեղեցու երկայնութիւնն է մինչև ընդարձակ բեմը մօտ 53 ոտնաչափ, իսկ լայնութիւնը 41: Ունի նաև կամարաշէն, յախճապակեայ զարդանկարով մի սեղան, որի լայնութիւնն է 15 ոտնաչափ և երկայնութիւնը 25, իսկ դասից բարձրութիւնն է 2 և կէս կանգուն: Սեղանը ներքնայարկ է, ուր որպէս մասունք պահւում են երկու բազմերօխտ առաջնորդների՝ Խաչատուր Կեսարացու և և Դաւթի շիրիմները: Սեղանի մօտ, հարաւային կողմը կայ մի խորան, ուր գտնւում են եկեղեցոյ անօթները և զգեստները: Կայ նաև մի փոքրիկ գաւիթ, ուր պահւում են բուրվառ, խունկ, ձէթ, ածուխ և այլն:

Եկեղեցու բոլոր պատերը, ներսից, բարձրաբերձ կաթողիկէից մինչև երկու արշին մնացած յատակին, ամբողջապէս ծածկւած է իւղաներկ պատկերներով և ոսկեզօծ ծաղկանկարներով: Իսկ ամբողջ եկեղեցու շուրջը, յատակից մինչև նկարների մօտը ծածկւած է գեղեցիկ զարդանկարւած յախճապակիով: Այդ բոլորը ցոյց են տալիս, որ պարսկաստանում ևս եղել են նշանաւոր գեղարւեստագէտներ և նկարիչներ, որոնց աշխատանքները դեռ, մինչև այսօր, մնում են եկեղեցիների պատերի վրայ:

Այդ պատկերները նկարչութեան արւեստի ամենափայլուն կերտածներն են: Նրանք նկարազարդւած են այնպիսի հմտութեամբ և վարպետ վրձինով, այնպիսի սքանչելի նրբութեամբ և ճաշակով, որ զարմանք են պատճառում և շղթայում իւրաքանչիւր այցելուի սիրտն ու հոգին: Այդտեղ դիտողի առաջ պատկերացւում է գեղարւեստական ամբողջ մի աշխարհ: Այդտեղ նկարչութեան և ծաղկանկարչութեան արւեստը հասել է իր կատարելութեան ամենաբարձր գագաթնակէտին: Թէ երբ և ո՛ւմ ձեռքով են նկարւել այդ իւղաներկ պատկերները և ոսկեզօծ ծաղկանկարները, հարցը դեռ մնում է վիճելի: Կարծիքներ կան, որ «դա երևելի պատկերահան Զուղայեցի վարպետ Մինասի գործն է, որ նկարչութիւնը սովորել է Փերիայում, մի ֆրանսացու մօտ՝ իր նուրբ ու սքանչելի գործերով մեծ հռչակ է ստանում և ապա դառնում է Մահի պալատական նկարիչը»: (Աէօ) Իսկ պատմութիւնն այդ նկարների գործը վերագրում է «տիեզերալոյս» Յովհաննէս անունով մի Զուղայեցի վարդապետի: Սակայն ծաղկանկարների նրբութիւնը, գոյների փայլն ու աղնւութիւնը և բոլոր նկարների գեղարւեստօրէն բանաւորը, իսկ ոմանց էլ շքեղութիւնը և կատարեալ նրբութիւնը պարզէ պարզ ցոյց են տալիս, որ դա աւելի իտալացի վարպետ նկարիչի գործ է, և արդէն նկարների մէջ մեծագոյն մասով նկատւում է իտալական ոճը-գէմքերը մաքուր, ածիւած, զգեստները կլասիք: Նկարների փայլն ու հիւսւածքը, նրանց մէջ թափնւած սիմուլիզմը՝ այս բոլորը դարձնում են պատկերները գեղարւեստական մի-մի գոհարներ և դրժւար թէ այդպիսի մի գործ տեղացի հայի գործ լինի:

Այդ պատկերներն ունին սիմվոլ-ալլեգորիկ բովանդակութիւն-Ս. գրքի ուսուցումը կամ պատկերաւորումը: Այդտեղ իշխողը հայկա-կրօնական գեղարւեստն է, որի նիւթը փրցւած է հին և նոր կտակարանների և ազգային-եկեղե-

ցական պատմութեան էջերից: Այդտեղ դուք կրտսնէք զեղեցիկ, կենդանի իւզանկարներով երևակայական տեսարաններ, ալլեգորիա, հրեշտակներ, սատանաներ, վիշապ և այլն: Այդտեղ պատկերներն առանց զրքի կուսուցանեն ձեզ Ս. զրքի բովանդակութիւնը, քրիստոնէական պատմութիւնը, սկսած աշտարակաշինութիւնից մինչև Քրիստոսի երկինք համբարձումը:

Պատկերներ: Գմբէթի վրայ ահա դուք կը տեսնէք ութը իւզաների զեղարւեստական նկարներ, վերցւած հին ուխտից՝ 1. *) Աստուծոյ ստեղծում է Ադամին: 2. Եւայի ծնունդը Ադամի կողմից: 3. Երանց ճաշակելն արգիլւած պտղից: 4. Տերնեկով իրենց մերկութիւնը ծածկելը: 5. Երախայի արտաքսումը: 6. Աբէլի մահը: 7. Մնոգները սղջում են Աբէլի վրայ: 8. Աբէլի և Կայէնի պատարադր:

Միւս պատի վրայ դասի առաջ կան չորս կարգ պատկերներ:

Ա. Գր. Լուսաւորչի չարչարանքները:

Բ. Գարրիէլ հրեշտակապետի աւետումը: Հրեշտակն աւետում է հովիւներին Յիսուսի ծնունդը: Յիսուսի ծնունդը: Մոզերի երկրպագութիւնը: Հերովդէս կոտորել է տալիս Բեզդէէմի մանուկներին: Սիմէոն ծերունին Յիսուսին գրկում է: Յիսուս Ս. տաճարում: Յովնանու քարոզչի մկրտութիւնը: Սատանան փորձում է Յիսուսին: Հրեշտակներն երկրպագում են Յիսուսին: Այլակերպութիւնը: Յիսուս Ծաղկադարցի տօնի օրը մտնում է Երուսաղէմ: Սեղանաւորները դուրս են արտաքսում Ս. Տաճարից: Մանաւան: Ընթրիքը: Յիսուսին բռնում են: Յիսուս քանոնադաւանի մօտ: Յիսուսին կապում են սիւնին և սկսում են ծեծել: Պաշտօնի առեանք: Խաչելութիւնը: Յիսուսին խաչից ցածն բերում: Քաղումը: Յարութիւնը: Համբարձումը: Սուրբ Հոգոյն յանձնելը: Աստուծոյ ծածկի վերափոխումը:

Գ. Արրահամի հրեշտակներին հրաբարկելը: Յովսէփի վաճառքը: Արրահամը Զաղարին արձակում է տնից: Մէքիթեգեկի պատարադր: Իսրայէլացիների չարչարանքը Նոյի պատումը: Իսրայէլացիները դուրս են ելնում Նոյի պատումից: Սոգոմոն արքայի օծումը:

*) Տես Էջմեղացի պատմ. Բ. հատոր:

Տապանի Բորդանան զեւրից անցնելը: Հրեշտակներ ծեծում են Բաղամի էշին: Ղովիլը Սոգոմոն: Մովսէսի Աստու պատգամ բերելը: Նրքբովի կործանումը: Չուլածու հորթը: Եղիսէի բժշկութիւնը: Զաթիկն Նոյի պատում: Դաւթի փախուստը: Սոգոմոնի երկու մանուկների դատաւանքը: Մերերի Ծաղանի տոբումը: Յովսէփի Պետափրիա կնոջ հրապարակը: Պոնտէ օձը: Դանիէլն առիւծների դրոմ: Յովնան ձգւում է ծովը: Փարաւոնի կարմիր ձովից անցնելը: Արրահամ ողջակէզ է անում Իսահակին: Մովսէս չուր է բղխեցնում վրիպի: Մորենին վառում է:

Դ. Աշտարակի շինութիւնը: Կործանւելը: Յակովբի սրգիների ճիւղաւորւելը: Դանիէլի տեսիլը: Ստեփանոսի քարկոծումը: Նաւն իբրեւ եկեղեցու նշան, որի թիաքարներն առաքաւաններն են: Զրհնողը: Նոյի տապանից ելնելը:

Եւրի սրանցից՝ հիւսիսային կողմը կայ վերջին դատաւանի պատկերը՝ վերեւում գրախտը, իսկ ներքեւում դժոխքը, իր ահւելի տեսարանով: Այդտեղ դուք կրտսնէք հուր, բազմազգիւնեան վիշապներ, կատաղի զեւեր, սատանաներ և այլն: Վիշապների բերանից դուրս են գալիս բոցեր և հրեշտակները վերեւից մեղաւորներին դցում են այդ առհելի դժոխքի մէջ:

Եկեղեցին հարուստ է արծաթեայ սրբազան անօթներով և թանկագին զգեստներով:

Զանգակատներ: Ս. Տաճարի արեւմտեան դռան մօտ՝ 4 քալ հեռու, քարէ սալաշատակի վրայ՝ հինգ կանգուն բարձրութիւն ունեցող չորս բոլորակ քարէ սիւների վրայ կանգնած է երկաթեան, հոյակապ զանգակատունը, որ զարդարւած է 4 զեղեցիկ զանգակներով: Արանցից երկուսը կախւած է վերին յարկից, իսկ երկուսը՝ ցածի: Այդ զանգակատունը կառուցւել է վանքի շինութիւնից 38 տարի յետոյ, 1702 թւին, Յովհաննան աղա Զամալեանի ծախքով: Վերի յարկի վրայ հանգչում է իր յաղթական խաչով փոքրիկ դմբէթը, որ իր հոյակապ արտաքինով մի տեսակ խորհրդաւորութիւն է տալիս:

Ձանգակատան դիմաց, Ս. Տաճարի վրայ կանգնած է մի
յարկանի, փոքրիկ դմբէթով և խաչով. մի ուրիշ զանգակա-
տուն, որից կախւած են երկու փոքրիկ զանգակներ:

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Բացի վանքից, Նոր-Ջուղայում կան նաև 12 կանգուն
եկեղեցիներ, որոնք նոյնպէս նշանաւոր են իրենց արտաքին
պարզ կառուցւածքով և ներքին պատկերազարդ նկարներով
ու քանդակների նրբութեամբը: Այդ եկեղեցիները մի-մի կո-
թող են Ջուղահայերի կրօնամիտիք ոգոյն և ցոյց են տա-
լիս, որ շատ մեծ է եղել Ջուղահայ ժողովրդի հաւատը և
ջերմեռանդութիւնը, որ հեռաւոր այս հորիզոնների տակ
նորից կարողացել է կանգուն պահել իր սուրբ տաճարները
և դա պատիւ է բերում Ջուղահայ ժողովրդին:

Ահա այդ եկեղեցիները՝

1. Ս. Ասուածածնի եկեղեցի: Գտնւում է Մեծ-Մէյ-
դանի թաղումը: Կառուցել է տեւ Մահգեսի խօջա Աւետիք
Բաբաքեանը 1613 թւին, Մահաբբաս թագաւորի և թեմիս
առաջնորդ Տէր Գալթի օրով: Եկեղեցին պատկերազարդ է:
Երկայնութիւնն է 68, Իսկ լայնութիւնը 35 ոտնաչափ: Ու-
նի Ս. Յակովբա անունով մի փոքրիկ մատուռ և մի զան-
գակատուն: 1841 թւին վերանորոգւել է Տէր Յովհաննէս
Գալստանեանի ծախքով:

2. Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցի: Նոր-Ջուղայի
բարձրաշէն եկեղեցիներից միւնը: Գտնւում է Փոքր Մէյդա-
նում: Այս եկեղեցու մասին չկայ ոչ մի յիշատակագիր, մի-
այն այսքանը յայտնի է, որ շինուել է 17-9 թւին և նորոգւել
է Տէր Յարութիւն քհնյ. Յակովբեանի ծախքով 1790 թւին:
Եկեղեցին պատկերազարդ չէ: Երկայնութիւնն է 57, լայն-
ութիւնը 27 ոտնաչափ: Ունի փոքրիկ մի մատուռ:

3. Ս. Ասեփանոսի եկեղեցի: Նոր-Ջուղայի ամեն
մեծ եկեղեցին է, որ գտնւում է Յակովբեանեց թաղումը:
Շինուել է խօջա Յակովբեանի և հասարակութեան ծախքով:



Եկեղեցին պատկերազարդ չէ: Երկայնութիւնն է 81, իսկ լայնութիւնը 58 ոտնաչափ: Նորոգւել է 1848 թւին, Տէր Յովսէփ քհնյ. Տէր Գրիգորեանի ջանքերով:

4. Ս. Յովնաննէս Մկրսչի Եկեղեցի: Գտնւում է Չարսու թաղումը: Երևել է 1621 թւին, Եաճաքբաս թաղաւորի և թեմիս առաջնորդ Խաչատուր կեսարացու օրով: Կառուցել է տւել խօջա Եղիազար: Եկեղեցին պատկերազարդ չէ: Երկայնութիւնն է 53, իսկ լայնութիւնը 56 ոտնաչափ: Ունի մի մատուռ և փոքրիկ զանգակատուն, որը կառուցւել է 1841 թւին, Պօղոս Անդրէասեանի ծախքով:

5. Ս. Նիկողայոսի Եկեղեցի: Գտնւում է Ղարազէլ թաղումը: Այս եկեղեցու մասին չկայ ոչ մի յիշատակագիր, միայն այսօրն յայտնի է, որ շինւել է 1670 թւին: Եկեղեցին պատկերազարդ չէ: Երկայնութիւնն է 39, իսկ լայնութիւնը 22 ոտնաչափ: Ունի մի մատուռ: Նորոգւել է տիկին Մարիամ Յակոբ Յարութիւնեանի և օր. Թադևոսի Մանուկեանի ծախքով:

6. Ս. Ներսէսի Եկեղեցի: Գտնւում է Քօչէր թաղումը: Յայտնի չէ թէ ով է շինել, այդ մասին չկայ ոչ մի յիշատակագիր: Կարծիքներ կան՝ թէ շինւել է 1667 թւին, Գրիգորեան Աւետիքի ծախքով: Եկեղեցու երկայնութիւնն է 62, իսկ լայնութիւնը 35 ոտնաչափ:

7. Ս. Մինաս Եկեղեցի: Գտնւում է Գաւրէմ թաղումը: Երևել է Հասարակութեան Հանգանակութեամբ 1659 թւին, Եաճաքբասի թաղաւորութեան և Գաւրիթ առաջնորդի օրով: Եկեղեցին պատկերազարդ չէ: Երկայնութիւնն է 65 և լայնութիւնը 52 ոտնաչափ: Նորոգւել է երկու անգամ՝ առաջին անգամ 1847 թւին, ապա Յովսէփ Ամիրեանի ծախքով, իսկ երկրորդ անգամ 1853 թւին, Մարգար Սուքիասեանի և Եղիազար Գասպարեանի ծախքով: Եկեղեցին ունի մի փոքրիկ զանգակատուն և մի գաւիթ, որ

1853 թւին ծառայելիս է եղել իբրև դպրոց:

8. Ս. Սարգսի Եկեղեցի: Գտնւում է Երևան թաղումը: Երևել է այս եկեղեցին ժողովրդի ծախքով 1656 թւին, Գաւրիթ առաջնորդի օրով: Եկեղեցին պատկերազարդ է և ուղիղ գետնից ծածկւած է յախճապակիով: Երկայնութիւնն է 65, իսկ լայնութիւնը 60 ոտնաչափ: Ունի փառաւոր և ծաղկազարդ մի զմբէթ: Այս եկեղեցում կան մի քանի ձեռագիր աւետարաններ:

9. Ս. Կասարիճէի Եկեղեցի: Այս եկեղեցին գտնւում է Չարսու թաղի Կուսանաց Վանքումը: Վանքը շինւել է 1623 թւին, խօջա Եղիազարի ծախքով, որ 1702 թւակային ունեցել է 32 կոյսեր, իսկ այժմ ունի ընդամենը 3 կոյսեր՝ կոյս Մարիամ, կոյս Թադևոսի և կոյս Հռիփսիմէ: Վանքի Հասոյթը կազմում է՝ արքայական պարզե (տարեկան 35 թուման), դրամագլխի տոկոս, կալածներ, գիւղական և այլն նւերներ: Այս վանքում գտնւում է Նոր-Ջուղայի «Հայուհեաց Բարեգործական Ընկ.» խնամքին յանձնւած «Իշխերթիկ Որբանոցը», «Գորգագործարանը» և «Իգմիրլեան գրադարան-ըթերցարանը»:

Վանքի եկեղեցու մասին չկայ ոչ մի յիշատակագիր և յայտնի չէ թէ ով է շինել: Եկեղեցին շատ փոքր է: Երկայնութիւնն է 35, իսկ լայնութիւնը 22 ոտնաչափ:

Բացի սրանցից՝ կան նաև Մեծ-Մէլքանում Ս. Յակոբայ և Բեթղէհէմի եկեղեցիները, իսկ Նոր-Ջուղայից մի քիչ դուրս գտնւում է «Ս. Գէորգի եկեղեցին»: Երևել է խօջա Նազարի ծախքով 1611 թւականին: Այս տեղ են գտնւում այն քարերը, որ Ջուղայեցիք իրենց հետ բերել են Ս. Էջմիածնից:

Նոր-Ջուղայում, նաև կաթողիկոսներն ունին մի Վանք և Եկեղեցի, իսկ բողոքականները մի ժողովարան:

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԱՌԱՋ ՆՈՐԴԱՐԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

Նոր-Ջուղայի Հայոց Ա. Ամենափրկչեան Վանքը Պարսկա-Հնդկաստանի արքեպիսկոպոսանիստ առաջնորդարանն է։ Նրա հոգևոր իշխանութեան տակ են գտնւում, բացի Ռաշաից, Էնզելիից, Բուշերից, Շիրազից, Թէհրանից նաև Գեարվանդ, Փէրիա, Չարմահալ, Սաղանգրան, Խորասան և այլն գաւառների և գիւղերի հայերից, այլև ամբողջ Հնդկաստանի և Ջավայի կղզիների հայերը։

Առաջնորդարան-Խորհրդարանը։ Վանքն ունի նաև իր Առաջնորդական-Խորհրդարանը, ուր քննւում են ու վերջանում տեղիս և շրջակայքի հայերի զանազան՝ քաղաքական, կալւածական, ամուսնական, կրօնական, վարչական, ընտանեկան և այլ բնոյթ կրող խնդիրներն ու վէճերը՝ առանց տեղական կառավարական իշխանութեան միջամտութեանը։*) Այս պատկառելի հաստատութեան հիմնադիրն եղել է Նսայի Արքեպիսկոպոս Աստածատրեանը։

Առաջնորդը։ Խորհրդարանի նախագահն է թեմիս առաջնորդը։ Նա ճանաչւում է կառավարական իշխանութիւնից ոչ միայն իբրև հոգևոր պետ Պարսկաստանի հայ ժողովրդի համար, այլև նա ճանաչւում է միևնույն ժամանակ հայ ժողովրդի քաղաքական գործերի պատասխանատու անձն։

Նա վայելում է որոշ արտօնութիւններ և իշխանութիւն։ Նրան է վերապահւած դաւանա-կրօնական, քաղաքական, հաստրական, վարչական և այլն խնդիրները։

Նրա բարձր հոգատարութեանն է յանձնւած Նոր Ջուղ

*) Խորհրդարանի այս լայն իրաւասութիւնը և արտօնութիւնները տանում է մեզ դարեր յետ և յիշեցնել է տալիս այն ազատութիւնը, որ վայելում էին թ. գարում Լեհաստանի՝ Իլլովի և Կամենցի հայերը։ Նրանք ունէին իրենց անկախ հայկական դատարանները հայ դատաւորներով, որ զործ էին անում թ. գարի նշանաւոր օրէնսգէտ՝ Միխիթար Դուշի «Իստաստանագիրքը»։

ղայի «Ա.գգ. երկսեռ դպրոցներն» իր ուսուցչական խմբով և աշակերտ-աշակերտուհիներով։

Նա է կառավարում և թեմիս գործերը՝ նշանակում է քահանաներ քաղաքների, գաւառների և թէ գիւղերի համար ու հսկում է նրանց գործունէութեան վրայ։

Բացի այդ՝ նա յարաբերութիւնների մէջ է մտնում տեղական իշխանութեան, հաստատութիւնների և օտար բարձրաստիճան պաշտօնեաների հետ այլևայլ վարչական գործերի առիթով։

Ծանօթ. Սկզբնական շրջանից մինչև այսօր Նոր-Ջուղայի առաջնորդներն ընտրւում են և կարգւում Ա. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով և թեմն անմիջական կախում ունի Նորին Վեհափառութիւնից։

Ս. ԱՄԵՆԱՓՐԿԶԵԱՆ ՎԱՆՔԻ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ

1606—1918

Գրաւոր արձանագրութիւնները մեզ ցոյց են տալիս, որ վանքում պաշտօնավարել են հետեւեալ առաջնորդները և շնորհիւ այդ արձանագրութիւնների մենք գաղափար ենք կազմում այս կամ այն առաջնորդի կամ վանահայրերի գործունէութեան մասին: Խօսենք այստեղ նրանց մասին համառօտակի ընդգծումներով:

Մեսրոպ Եպիսկոպոս: 1606—1613: Դժբախտաբար սրա կեանքի ու գործունէութեան մասին ծանօթութիւններ չկան:

Խաչատուր Ա. Կեսարացի: 1620—1646: Սա եզակի տեղ է գրաւում վանքի տարեգրութեան մէջ: Լուսամիտ, ուսումնասէր և գործունէ այն մի առաջնորդ լինելով՝ վանքում հիմք է դնում տպարանին: Սրա մասին կենսագրական ծանօթութիւններ պակասում են մեզ, միայն այսքանը յայտնի է, որ նա իբրև նւիրակ Էջմիածնից եկել է Նոր-Ջուղա և հասարակութեան խնդրանք ստանձնել է առաջնորդական աթոռը: Ուսումն ստացել է Գրիգորիս վարդ. Կեսարացու և Մովսէս կաթողիկոսի մօտ: Թողել է «Աստուածաբանական», «Տրամաբանական», «Ճարտասանական» և այլն բազմաթիւ գրաւորքներ: Բացի այդ՝ դաստիարակել է մի շարք աշակերտներ, որոնցից նշանաւորներն են՝ Յովհաննէս վարդապետ, Դաւիթ Զուղայեցի, Յակօբ Զուղայեցի, Սիմէօն վարդապետ, Ոսկան վարդապետ: Մեռնում է 1646 թւին, Նոր-Ջուղայում, ուր մարմինն ամփոփւած է վանքի եկեղեցու սեղանի ներքև:

Դաւիթ Ա. Զուղայեցի: 1652—1683: Ուսումնասէր առաջնորդ և գիտնական: Ծնւել է Ն.-Ջուղայում աղւաւտոհմ, բարեսէր ծնողներից: Ուսել է յայտնի գիտնական Խ. Կեսա-

րացու մօտ: Զուղայեցիների խնդրանք դնում է Երուսաղէմ և Եպիսկոպոս ձեռնադրւելով, ապա 1652 թւին վերադառնում է Նոր-Ջուղա և սկիզբ է դնում վանքի երկրորդ շինութեանը: Հայրաբար և գովելի ազգասիրութեամբ կառավարելով իր հօտը՝ ձեռք է բերում մեծ համակրանք և ժողովրդականութիւն: Վանքում բաց է անում մի դպրոց, ուր մօտ 29 աշակերտներ հաւաքելով սկսում է ուսուցանել և պատրաստում է ապագայի համար եպիսկոպոսներ և քահանաներ, որոնցից նշանաւորն է Յովհաննէս վարդապետ: Թողել է բազմաթիւ աշխատութիւններ՝ «Քերականութիւն», «Տրամաբանութիւն», «Աստուածաբանութիւն», «Ճաշակեցեալ», «Մեկնութիւն սաղմոսացն Դաւիթ», «Գիրք մի աղօթից» ի դէմս ամենասուրբ Երուդուրեան, և այլն: Մեռնում է 1683 թւին և թաղւում է իր ուսուցիչ՝ Խաչատուր Կեսարացու մօտ:

Ստեփաննոս Զուղայեցի: 1684—1697: Յայտնի գրականագէտ և գիտնական: Ծնւել է Նոր-Ջուղայում: Ուսել է Տէր Դաւթի մօտ: Զուղայեցիների ընտրութեամբ նստում է առաջնորդական աթոռի վրայ 1684 թւին պարսից Շահ Սուլէյմանի թագաւորութեան օրով: 1688 թւին մեծ խռովութիւն է ծագում Զուղայու պապա-լուսաւորչական հայերի մէջ: Ահա կրօնական այդ խնդիրների առթիւ մեծ դեր է խաղում Ստեփաննոսը: Բողոքում է Շահ Սուլէյմանին և արքայական հրամանով քանդել է տալիս պապականների եկեղեցին, Յիսուսեան կրօնաւորներին Նոր Զուղայից արտաքսում և այդ առթիւ լոյս է ընծայում իր «Հակառուքիւն» գիրքը: 1697-ին Էջմիածնից հրաւիրւում է գահակեց Նահապետի տեղ կաթողիկոսանալու, բայց պապականների չարախօսութեամբը՝ թէ Ղուրանի վարդապետութեան դէմ է գրել՝ մատնւում է Երևանի խանի ձեռքը և 1000 թուման տուգանքի ենթարկւելով՝ դրւում է բանտ, ուր և մեռնում է 1697 թւին:

Ալեքսանդր Զուղայեցի: 1699—1706: Հեղափոխութեան ժամանակ Զուղայեցիները ծնւել ու սնւել է Նոր-Զուղայում: 1699 թւին Զուղայեցիների ընտրութեամբ նստում է առաջնորդական աթոռի վրայ, սակայն 1706 թւին Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրւելով, արքունի հրովարտակով՝ գնում է Էջմիածին: Այնուհետև լցած հայրենիքի կարօտով, հայոց 1711 թւականին, գալիս է Նոր-Զուղա և ութ ամիս իր հայրենակիցների մօտ անցնել է յետոյ, նորից վերադառնում է Ս. Էջմիածին, ուր շէնացնում է գեղեցիկ շինութիւններով: Ապա Հռոմի Կղեմէս պապի հետ յարաբերութեան մէջ մըտնելով, վերջ է դնում պապա-լուսաւորչական խռովութիւններին: Այսպէս իր ազգը հայրաբար խնամելուց յետոյ՝ մեռնում է 1706 թւին: Ա.

Մովսէս Ա. Զուղայեցի: 1706—1725: Վեհանք, մեծահոգի այս առաջնորդը ծնւել և սնւել է Նոր-Զուղայում: 1706 թւին նստում է առաջնորդական աթոռի վրայ, Ալեքսանդր արքեպիսկոպոսի Ս. Էջմիածին գնալուց յետոյ: Սրա ժամանակ, 1722 թւին, տեղի է ունենում պարսկա-աֆղանական պատերազմը: Աֆղանների Էմիր-Միր Մահմադն օգուտ քաղելով թուլամորթ Շահ-Սուլթան-Հիւսէյնի քաղաքականութիւնից տպտամբում է և անարգել հասնում Սպահանի վրայ: Իսկ այդ պատերազմի անմիջական հետեւանքը և արդիւնքը լինում է Զուղահայերի անլուր մարտիրոսագրութիւնը: Հայերն անպաշտպան են մնում և ստիպւում են Աֆղաններին տալ 1600 թուման և 40 աղջիկ ու այդպիսով ազատւում են աֆղանական բռնութիւններից:

Մովսէսի օրով ընդարձակում է վանքի կալաւածքները և եկեղեցին աւելի ճոխանում այլ և այլ զարդերով և սպասներով: Մեռնում է 1725 թւին և թաղւում է վանքի եկեղեցոյ հիւսիսային դրան մօտ:

Դաւիթ Բ. Զուղայեցի: 1725—1728: Զգնասէր, բա-

րեպաշտ և բարեկարգիչ կաթողիկոս: Ծնւել և սնւել է Նոր-Զուղայում: Նստում է առաջնորդական աթոռի վրայ 1725 թւին: Սա տեսնելով, որ իր ժամանակի հոգեւորականութիւնը կանգնած չէ իր կոչման բարձրութեան վրայ, գծում է մի շարք կանոններ և դրանով պարտաճանաչութեան և գիտակցութեան ոգին արձարծում նրանց մէջ: Այսպէս նա արգելում է քահանաներին թախտի գործածութիւնը, ժողովրդի տները մենակ գնալը — «Միայնակ ի տուն ժողովրդեան ոչ երթիջիք, այլ երկու, երկու», արգելում է հրապարակներում, փողոցներում պարապ շրջելը, մանաւանդ խանութների մօտ նստել և զրուցատրութիւն անելը՝ փոխանակ Ս. Գիրքը կարդալու: Արգելում է տաբատով (շաւվար) մանգալը: Բացի այդ Ս. Տաճարի մայր եկեղեցին յատակից մինչև երեք կանգուն՝ յախճապակիով զարդարել է տալիս և ապա գեղեցիկ, ոսկեզօծ գոյներով յախճապակիի վրայ նկարել է տալիս Գր. Լուսաւորչի չարչարանքները: Մեռնում է 1728 թւին և թաղւում է Ս. Տաճարի հիւսիսային դրան մօտ:

Ասուածասուր Եպիսկոպոս: 1729—1745: Յայտնի է իր հեզ և խաղաղասէր բնավորութեամբը: Ծնւել է Փահրապատում: 1729 թւին նստում է Նոր-Զուղայի առաջնորդական աթոռի վրայ և հայրաբար կառավարում է իր հօտը: Գթբախտաբար սրա գործունէութեան մասին տեղեկութիւններ պակասում են: Մեռնում է 1745 թւին և թաղւում է Ս. Տաճարի հիւսիսային կողմի գաւիթում:

Պողոս Եպիսկոպոս: 1745—1754: Զուղայեցի: Սա վանքի տարեգրութեան մէջ յայտնի է իր անարժան և դատապարտելի գործունէութեամբը, որի համար պաշտօնազուրկ է լինում: Սրա օրով վանքը մեծամեծ վնասներ է կրում և ընկնում 1000 թուման պարտքի տակ:

Զափաւիա Եպիսկոպոս: Տփիսեցի: Սա նոյնպէս դրական ոչ մի գործունէութիւն ցոյց չի տալիս և շուտով գա-

հրնկէց է լինում:

Գէորգ Եպիսկոպոս: 1754 — 1768: Վանքի միաբաններից: Ծնւել է և ուսել Բասրայում: 1754 թւին նստում է Նոր-Ջուղայի առաջնորդական աթոռի վրայ: Սա իր անդուլ գործունէութեամբ և ջանքերով կարողանում է վանքի բըռնաբարւած անօթները յետ առնել: 1760 թւին անցնելով Բասրա՝ ստանձնում է այնտեղի առաջնորդական աթոռը: Այնուհետև Նոր-Ջուղայի թեմը առաջնորդի բացակայութեան պատճառով մնում է անխնամ և ահա այդ ժամանակ կորսւում են վանքի բազմաթիւ ձեռագիր մատենները: 1763 թւին, Գէորգ Եպիսկոպոսը, Ջուղայեցիների խնդրանքով քերականութեամբ է և նորից ստանձնում իր աթոռը: Մեռնում է 1768 թւին և թաղւում Ս. Տաճարի արևմտեան դրան մօտ:

Մկրտիչ Եպիսկոպոս: 1769 — 1787: Ծնւել և սնւել է Նոր-Ջուղայում: Կնոջ մահից յետոյ մանում է վանք և ապաշխարում, ապա գնում է Երուսաղէմ, այնտեղից էլ Ս. Էջմիածին և Եպիսկոպոսութեան աստիճան ստանալով 1768 թւին վերադառնում է Նոր-Ջուղա և Գէորգ առաջնորդի մահից յետոյ, 1769 թւին ստանձնում է առաջնորդական աթոռը: Սրա օրով Պարսկաստանում սկսում են ներքին խռովութիւնները: Ամեն կողմ տիրում է կատարեալ անարխիա: պարսիկ խաներն ապստամբելով գահակէց են անում Շահին, որով երկիրն արիւնահեղութիւնների և ասպատակութեանց ասպարէզ է դառնում: Այդ խառնակութիւնների ժամանակ Նոր-Ջուղան անասելի ցաւերի է ենթարկւում: Այլ Մուրադ խանը կողոպտում է հայոց վանքի և եկեղեցիների սրբազան սպասները և ոսկու, արծաթի անօթներն ու ծանր հարկերի տակ ճնշում ժողովրդին: Մկրտիչ Եպիսկ. ժողովրդի քաջածանրութեամբ տանջանքներին չըդիմանալով՝ անհուն կսկիծը սրտին՝ մեռնում է 1787 թւին և թաղւում Ս. Տաճարի արևմտեան դրան մօտ:

Յակոբ Եպիսկոպոս: 1788 — 1793: Ծնւել և սնւել է Նոր-Ջուղայում: Առաջնորդական աթոռի վրայ է նստում 1788 թւին՝ արեան, զուլումի օրերում, որին յաջորդում է և սովը: Սակայն Յակոբ Եպիսկոպոսը մեծ հոգածութեամբ խնամում է սովի ճիրաններում գալարող ժողովրդին, որով ոչ մէկը՝ սովամահ չի լինում: Եւ որպէս զի վանքի թանկագին անօթներն ու սպասները խաների ձեռքը չընկնի, Հրնդկաստան տանելով վաճառում է և փողը կտակում է վանքին: Մեռնում է 1793 թւին Մադրաս քաղաքում, ուր մարմինն ամփոփւում է եկեղեցու գաւիթում:

Այնուհետև մինչև առաջնորդի ընտրութիւնը վանքը ղեկավարում են Միքայէլ, Ղազար եւ Գէորգ վարդապետները:

Յարութիւն Եպիսկոպոս: 1801 — 1810: Ծնւել և դաստիարակւել է Նոր-Ջուղայում: 1798 թւին Գէորգ Եպիսկոպոսի հետ գնալով Էջմիածին, ստանում է Եպիսկոպոսութեան աստիճան և ապա 1801 թւին վերադառնալով Նոր-Ջուղա, նստում է առաջնորդական աթոռի վրայ: Սրա օրով վանքը 4000 թուման պարտք է ունենում, ուստի 1803 թ. նւիրակներ ուղարկելով Հնդկաստան, Ռուսաստան հանգանակել է տալիս յիշեալ գումարը և ազատում է վանքն իր ծանր պարտքից: Մեռնում է 1810 թւին և մարմինն ամփոփւում Ս. Տաճարի հիւսիսային գաւիթի մօտ:

Յովհաննէս Եպիսկոպոս: 1812 — 1817: Բարեպաշտ և ժողովրդասէր: Ծնւել և դաստիարակւել է Էջմիածնում: 1812 թւին նւիրակութեան պաշտօնով գալիս է Նոր-Ջուղա. իր հեզ ու քաղցր բնավորութեամբ մեծ ժողովրդականութիւն վայելում՝ ապա Ջուղայեցիների խնդրանքով ստանձնում է առաջնորդական աթոռը: Սրա օրով Նոր-Ջուղայում սով է ընկնում և արքունի գանձերի կորստեան պատճառով նորից սկսում են ներքին խռովութիւնները: Բայց նա իր հեռատե-

սուլթեամբ և աշալըջուլթեամբ կարողանում է ժողովուրդը փրկել թէ սովից և թէ բռնութիւններից: Մեռնում է 1817 Ապրիլ 22-ին և մարմինն ամփոփւում վանքի գանգակատնում:

Կարապետ Եպիսկոպոս: 1818—1832: Ծնւել և դաստիարակւել է Նոր-Ջուղայում: Հեզահոգի և բարեսիրտ: 1817 թւին գնալով Ս. Էջմիածին Եպիսկոպոս է ձեռնադրւում և 1818 թւին վերադառնալով Նոր-Ջուղա՝ նստում է առաջնորդական աթոռի վրայ: Սրա օրով սկսում են Հաճի Հաշէմ-խանի բռնութիւնները, որը իր քրոջը Սֆահանի գաւառապետ՝ Աբդուլխանին կնութեան է տալիս և նրա շընորհիւ մուտք գործելով քաղաք՝ սկսում է իր բռնութիւնները թէ Սֆահանում և թէ Ջուղայում: Կարապետ Եպիսկոպոսը, շնորհիւ իր խոհեմ քաղաքականութեան գրաւում է խանի սիրտը և ժողովրդին ազատում նրա բռնութիւններից: Մեռնում է 1832 թւին և թաղւում Ս. Տաճարի արեւմտեան զրան մօտ:

Յովհաննէս Բ. Եպիսկոպոս: 1832—1836: Էջմիածնի միաբան: 1832 թւին նստում է՝ առաջնորդական աթոռի վրայ: Այդ ժամանակ Ֆաթալի Շահի մահւան պատճառով սկսում են երկրի ներսում խռովութիւնները, որին յաջորդում է և սովը: Յովհաննէս Եպիս. մեծ հոգածութեամբ կառավարելով իր հօտը կարողանում է փրկել նրան թէ սովից և թէ հարստահարութիւններից:

Մեռնում է 1836 թւին և իր ցանկութեան համաձայն թաղւում է վարդապետների յատկացրած գերեզմանատնում:

Խաչատուր Եպիսկոպոս: 1838—1842: Ծնւել է Վաղարշապատում: 1838 թւին առաջնորդական կոնդակով ստանձնում է Նոր-Ջուղայի աթոռը, բայց ակտիւ գործունէութիւն ցոյց չէ տալիս և 1842 թւին նորից վերադառնում է Ս. Էջմիածին:

Յովհաննէս Գ. Եպիսկոպոս Սուրենեան: 1842—1848:

Յայտնի գիտնական և բանագէտ: Ծնւել է Ղրիմում: 1842 թւին նստում է՝ առաջնորդական աթոռի վրայ: 1843 թւին հիմնում է մի դպրոց հոգեորականներ պատրաստելու համար, սակայն նիւթականի պակասութեան պատճառով գոցւում է: Եւ որպէս զի վանքի տնտեսական դրութիւնը աւելի հաստատուն հիմքերի վրայ դրւի՝ գնում է «Սիմեօնեանց» տունը: Մեռնում է 1848 թւին, վեց տարի պաշտօնավարելուց յետոյ: Մարմինն ամփոփւում է Ս. Տաճարի հիւսիսային գաւիթում:

Այնուհետեւ պաշտօնավարում են Ասուածատուր Եւ Անդրէաս վարդապետներ, մինչև 1851 թւականը:

Թադէոս Եպիս. Բէգնապարեան: 1851—1863: Յայտնի գրականագէտ և բարեկարգիչ: Ծնւել է Երևանում: 1851 թւին Ներսէս Աշտարակեցու կոնդակով ստանձնում է Նոր-Ջուղայի առաջնորդական աթոռը: Սա իր իմաստուն և խոհեմ կառավարութեամբ մեծամեծ ծառայութիւններ է մատուցանում վանքին և իր աշալըջ քաղաքականութեամբ կարողանում է թէ եկեղեցիների, թէ վանքի և թէ գաւառների բռնաբարւած արտօնութիւններն ու իրաւունքները ձեռք բերել: Նաև ժողովուրդն ազատում է զինուորակոչութիւնից, ծանր հարկերից և զանազան հարստահարող կեղեքիչների ձեռքից: Բարեկարգում է եկեղեցական կանոնները և արգելում է հարսանիքի, տօների և յուղարկաւորութեան ժամանակ՝ աւելորդ ծախքերը: Ոչնչացնում է պապականների ազդեցութիւնը: Բայց է անում դպրոցներ: Նորոգել է տալիս վանքի թէ արտաքին և թէ ներքին մասերը և առնում է նոր կալւածներ ու այգիսով զարկ է տալիս վանքի տնտեսականին: Նաև շինել է տալիս Մէլգանի հրապարապարակում խանութներ և կրպակներ: Ապա՝ իւրաքանչիւր գաւառի բարեկարգութեան համար կարգում է գործակատար քահանաներ և ալլն, և ալլն: Ժողովուրդն էլ ի նշան

յարգանքի և երախտագիտութեան շնորհակալութեան նամակ է գրում Սինոդին, դրւատելով Թադէոսի վսեմ գործունէութիւնը: Այդ առթիւ Ռուսաց կայսրից ստանում է երրորդ աստիճանի խաչ: Մեռնում է 1863 թւին:

Մովսէս Բ. Եպիս. Գանձակեցի: 1871—1874: Ծընւել ու սնւել է Գանձակում: Նստում է առաջնորդական աթոռի վրայ 1871 թւին: Սրա օրով կառուցւում է վանքի «Առաջնորդարան»: Մեռնում է 1874 թւին:

Գրիգորիս Եպիս. Յովնաննէսեան: 1874—1888: Ծընւել է Ֆիլիպպոլպօլիս: 1874 թւին ստանձնում է Նոր-Ջուղայի առաջնորդական աթոռը, որ վարում է մինչև 1888 թւականը: Այնուհետև անցնում է Կ. Պօլիս և ստանձնում «Ազգ. Կենտրոնական Վարչութեան» կրօնական ժողովի ատենադպրութեան պաշտօնը: Սրա օրով Նոր-Ջուղայում կառուցւում է տղայոց «Կենդրոնական» դպրոցը:

Եսայի աբ-Եպիս. Ասուածատրեան: 1891—1896: Ռուսահայ: Սա մեծ գործունէութիւն է ցոյց տալիս Նոր-Ջուղայում: Համարւում է բարեկարգիչ: Եկեղեցիների վարչութիւնները կանոնաւորելու համար սահմանում է որոշ «կանոններ», որոնց համաձայն մինչև այսօր ընթանում են եկեղեցիները: Այնուհետև կրթական և կրօնական հաստատութիւնների տարեկան հաշիւները, որ մինչև այդ ժամանակ չէր հրատարակւում, տպագրել է տալիս, որպէսզի ժողովուրդը կարդա և գաղափար կազմէ: Բացի այդ՝ հաստատում է այժմեան «Առաջնորդական Խորհրդարան»: Ազատում է վանքը և Ազգ. Կենտրոնական դպրոցը պարտքից: Միացնում է «Ազգ. երկսեռ ուսումնարաններ»: Հաստատում է «Կենսոգնական գրալմանաւանդը» և այլն:

Մաղափա Եպիս. Տէրունեան: 1898—1900: Սրա ջանքերով և հանգանակութեամբ կառուցւում է Վ. Կասաբինեան օրիորդաց և Ամենափրկչեան Հոգեւոր գիւմբուշիկի շէնքերը:

Սահակ Աբ-Եպիս. Այվասեան: 1902—1912: Առաջնորդական աթոռի վրայ նստում է Մաղաքիայից յետոյ, 1902 թւին: Շինում է վանքապատկան «Մէյդան» հրապարակի կրկնակները: Գնում է Ազգ. երկսեռ դպրոցների համար, Փէրիա գաւառի, հայաբնակ «Բոլորան» գիւղը Ս. Կատարինեան օրիորդաց դպրոցի յօբելեանի առթիւ հանգանակած գումարով: Ապա հնդկահայ Ջուղայեցի պ. Թադէոս Յարութիւնեանի ծախքով շինել է տալիս Նոր-Ջուղայի «Ս. Ամենափրկչեան վանքի Մասնադարան»:

Բագրատ վ. Վարդապարեան (այժմ Եպիսկոպոս): 1901—1909: Սա Խաչատուր Կեսարացուց յետոյ Նոր-Ջուղայի տարեգրութեան մէջ եզակի տեղ է բռնում: Համարւում է Նոր-Ջուղայի շինարարը: Նա ամէն ջանք ու եռանդ ներդրում է Նոր-Ջուղայի և նրա բոլոր ազգային հաստատութիւնների առաջադիմութեան և բարգաւաճման գործին: Այսպէս հիմնում է «Գեորգ Բանանեան դպրոց», «Շեւամասունք», «Ս. Կասաբինեան Որբանոցը» և Վ. Կաս. Արհեստանոցը: Ապա երկար տարիներ վերատեսչի պաշտօնով՝ տեսչական ամբողջ ծանրութիւնն իր վրայ վերցնելով՝ ազգ. երկսեռ դպրոցներն աւելի կանոնաւոր հիմքերի վրայ է դնում, աշակերտ-աշակերտութիւնների թիւը 300-ից հասցնելով մօտաւորապէս 700-ի: Աւելացնենք այս գործունէութեան վրայ նրա հրատարակչական եռանդը, որի արդիւնքն է «Նոր-Ջուղայի Լրաբերը»: Բայց հ. Բագրատի ամենանշանաւոր գործը, այնուամենայնիւ, կմնայ նրա շինարարական գործունէութիւնը, որի արդիւնքները մի-մի կոթող կանգնած են Նոր-Ջուղայում: Այսօր հ. Բագրատ Վարդապարեանի անունն երախտագիտութեամբ և յարգանքով են յիշում Ջուղայեցիք:

Եզնիկ Ժ. վարդ. Երկարակեցեան: 1912: Բաղեցեցի (Պիթլիս): Զարմահալ և Փէրիա գաւառների գիւղերի վրայ մօտ 10 տարի հովելուց յետոյ, ապա նստում է Ն.-Ջուղայի

առաջնորդական աթոռի վրայ, որ շարունակում մինչև այսօր:

1917 թվին Ս. Էջմիածնի Սինոդից կանչելով, իր հա-
ւատարիմ և երկարատև գործունեութեան համար ստանում
է «Ծայրագոյն» տիտղոսը:

Ունի մի շարք թէ ինքնուրոյն և թէ թարգմանական
գործեր՝ «Ուղեւորութիւն Ս. Էջմիածնից Նոր-Ջուղա», «Ուսում-
նարան շինեմք», իսկ թարգմանութիւններից՝ «Ալլադին», «Գո-
ղացւած Իսխանուհի» և այլն:

1917—8 թվին, Ն.-Ջուղայի տնտեսական տագնապի ժա-
մանակ՝ ամէն ջանք թափեց ժողովուրդը սովի ճիրափներից
փրկելու համար:

Ս. ԱՄԵՆԱՓՐԿԶԵԱՆ ՎԱՆՔԻ ՏՊԱՐԱՆԸ

Պատմական համառօտ ակնարկ

1620 — 1918

Վաքն ունի նաև մի տպարան, որ իր անցեալի պատ-
մութեամբ փառաւոր տեղ է գրաւել Հայկական տպագրու-
թեան պատմութեան էջերում և պատկառելի դեր է կատա-
րել և կատարում Ջուղահայերի մտաւոր և բարոյական վե-
րածնութեան գործում: Նրա շնորհիւ Ջուղահայութիւնը
զարթել է իր քնից և այսօր նա կանգնած է զարգացման
աստիճանի վրայ:

Տպարանի հիմնադիրն է վաքի առաջնորդ Խաչատուր
Կեսարացին, մի լուսամիտ և գործունեայ մարդ, որ ըմբռնե-
լով ժամանակի ոգին ու պահանջները, իր միաբան ընկերներով
մամուլ է շինում, տառեր է փորագրում և այսպիսով հիմք
դնում տպարանին, ուր 1640 թվականին առաջին անգամ
նա տպագրում է «Վարդ հաբանց» անունով գիրքը: Դա բա-
րոյագիտական մի գիրք է, անպաճոյճ տառերով զարդարւած:
Ասելն աւելորդ է, որ սկզբնական այգպիսի մի աշխատանք
անշուշտ, խոշոր պակասութիւններ պիտի ունենար և իրաւ,
անդրանիկ այդ տպագրութիւնն անշուք էր և թերի: Բայց
այգպիսի մի գործ, այն էլ պարսկաստանի խորքերում մի
մեծագործութիւն էր, որ պատիւ էր բերում «ազգոսէր» տպա-
գրողին, մանաւանդ, երբ ինկատի ունենանք այն հանգաման-
քը, որ Խաչատուր վարդապետն առանց սովորելու տպագրա-
կան արւեստը, առանց որևէ վարպետի օգնութեան, իր սե-
փական ջանքերով յօրինում է ամենայն ինչ՝ և մեծամեծ
դժւարութիւնների և խոչընդոտների յաղթելուց յետոյ կա-
րողանում է լոյս ընծայել իր գիրքը: Ահա թէ, այդ առթիւ
ինչ է գրում ինքը՝ Խաչատուր Կեսարացին:

«1641 ՚ի քաղաքն շօշ, որ է Սպահան, յանապատն Զուղայու, ՚ի թագաւորութեան պարսից Շահ Սէֆւոյն յիշխանութեան զիւղաքաղաքիս Զուղայու իշխանաշուք պարոն Խօջայ Սարֆրաղին իմաստնոյ և բարեպաշտի, ձեռամբ Խաչատուր վարդապետի Կեսարացու, որ բազում աշխատութեամբ հանդերձ միաբան ուխտիս հազիւ կարողացաք այսչափս ՚ի յայտ բերել, զի ոչ յուսաք յուսմքէս:

(Յիշատակարան Հարանց վարք մատենին),

Այնուհետև Խաչատուր Կեսարացին 1639 թւին Եւրոպա է ուղարկում իր աշակերտներից Յովհաննէս վարդապետին, տպագրութեան արհեստը լաւ սովորելու համար: Մինչև վարդապետի վերադարձը, նոյն տպարանից 1642 թւին լոյս է տեսնում մի «Ժամագիրք»: Դա ցոյց է տալիս, թէ այնուհետև՝ վանականները կանգ չեն առնում, այլ նրանք մի կողմից եռանդով առաջ են տանում սկսւած գործը: Իսկ Յովհաննէս վարդապետը թողնելով Զուղան, մի ամբողջ տարի թափառելէ վերջ՝ հասնում է Խալիս, ապա Վենետիկ, Հռոմ, Լիվորնօ, Ամստերդամ և այլ քաղաքներում տարիներ շրջելուց և շատ դժւարութիւնների յաղթելուց յետոյ, նա յաջողում է բերել Նոր-Ջուղա մի տպարան, իր տառերովը, ուր առաջին անգամ հրատարակում է «Պարզասումար» վերնագրով գիրքը: Սակայն նա շուտով թողնում է իր սկսած գործը և ինչ-ինչ պատճառներով ստիպւած է լինում գնալ Էջմիածին, ուր նրան եպիսկոպոս են ձեռնադրում և ուղարկում են հին-Ջուղա: Յովհաննէս վարդապետի հեռանալով՝ փակւում է տպարանը: Անցնում են տարիներ: 1680 թւականներին, Նոր-Ջուղայում լուսաւորչական և կաթոլիկ հայերի միջև առաջ է գալիս կրօնական մի մեծ վէճ, որի պատճառով շատ խռովութիւններ են ծագում: Ահա այդպիսի մի ժամանակ, վանքի առաջնորդ՝ Ստեփաննոս եպիսկոպոսի ջանքերով նորից բացւում է տպարանը, ուր նա 1687 թւին տպագրում է «Գիրք հակաճառական ընդդէմ պա-

պականաց» հեղինակութիւնը: Իսկ հետեւեալ տարին՝ 1688 թւին, լոյս է տեսնում մի այլ միաբան՝ Յովհաննէս Մրքուզ վարդապետի «Գիրք համառօտ վասն իսկապես եւ ճամարիս հաւասոյ» հակաճառական աշխատութիւնը: Այնուհետև նորից փակւում է տպարանը: Սակայն 1844 թւին բացւում է տպարանի համար մինոր շրջան: Նոր-Ջուղայեցի «բարեպաշտ և ազգասէր» Մանուկ Յորդանանեանն ուղարկում է Բատաւիայից մի նոր պարբերական մամուլ, իր բոլոր պարագաներով, բայց նոր մամուլը կարգի բերող չունենալուն պատճառով՝ երկար ժամանակ՝ ուղիղ 33 տարի մնում է անգործածական: Յետոյ 1877 թւին Գրիգորիս Արք-եպիսկոպոս Յովհաննիսեանի ջանքերով կարգի բերւելով՝ գործածութեան մէջ է մտնում, որ շարունակւում է մինչև 1903 թւականը: 1892 թւին Եսայի արք-եպիսկոպոս Աստուածատրեանը Թիֆլիսից բերել է տալիս նոր տառեր, որով տպարանը դրւում է քիչ թէ շատ կանոնաւոր հիմքերի վրայ: Իսկ առաջ. փոխանորդ Բագրատ վարդապետ Վարդաղարեանը, որ մեծ ծառայութիւն է արել Նոր-Ջուղայի հայերի կուլտուրական և տնտեսական առաջադիմութեան գործին, 1904 թւին աւելի հաստատուն հիմքերի վրայ է դնում վանքի տպարանը: Նա դիմում է Բագւաբնակ Յովսէփ Թումայեանին և նրա ծախքով բերել է տալիս մի արագատիպ մամուլ, իր տառերով և տպարանական բոլոր պարագաներով: Սակայն, այսօր այդ տառերը շատ մաշւած են: Իսկ եւրոպական տառեր տպարանը ոչինչ չունի, մինչ զեռ նրանց կարիքը միշտ էլ զգացւում է: Այդ պակասը կարելի է լրացնել մի ձուլարանով: Այսօր բարոյական այդ պարտականութիւնն ընկնում է Զուղահայ հարուստ ազգայինների վրայ, ժամանակն է, վերջապէս, որ նրանք գիտակցեն և լրացնեն տպարանի այդ պակասը: Այդ է պահանջւում հրամայողաբար այսօր Զուղայեցի հարուստ Հնդկահայերից:

Այս տպարանն իր սկզբնական շրջանից մինչև այսօր, բացի զպրոցական տեղեկագրերից, օրացոյցից, հաշիւներից, կանոնագրերից և բրօշիւրներից, տպագրել է մօտ 70 հատոր գիրք, մեծ մասամբ կրօնական բովանդակութեամբ, զպրոցական դասագրքեր, թարգմանութիւններ: Ընդունում է նաև զանազան պատւէրներ: Այժմ տպարանը բաղկացած է երեք մեծ, լուսատու սենեակներից և ունի չորս աշխատաւորներ: Ահա այս է Նոր-Ջուղայի Հայկական տպարանի շատ համառօտ պատմութիւնը:

Նոյնպէս ցուցակը տպագրւած այն գրքերի, որոնք արժանի են ուշադրութեան:

1. Վարք հարանց—Խաչատուր (կեսարացի) առաջնորդի—1640 թ.
2. Ժամագիրք—1642 թ.
3. Պարգատումար Աղաբիայի—Յովհաննէս վարդապետի—1647 թ.
4. Գիրք որ ասի վիճաբանական—Աղեքսանդր վարդապետի—1687.
5. Գիրք համառօտ վասն իսկապէս և ճշմարիտ հաւատոյ—Յովհաննէս Մրժուզի—1688 թ.
6. Տարերք քերականութեան—հ. Բագրատունու—փոխադր. Տէր Մեսրոպ Կ. Դաւթեանի—1878 թ.
7. Պատմ. Նոր-Ջուղայու երկհատոր —Յարութիւն Տէր Յովհաննէանի—1881 թ.
8. Ապացոյցք Գրիս. հաւատոյ—Տէր Սեդրեւսրոս Բան. Յովհաննէի—սեանի—1886 թ.
9. Սոփերք կացրդականք Զօհրապեանց—Խմբ. Աւետիք Կ. Զօհրապեան—1886 թ.
10. Ժամագիրք Հայաստ. եկեղեցւոյ—1889 թ.
11. Մայրենի լեզու Ա. տարի—Ղազարոս Աղայեանի—1893 թ.
12. Աւագ շաբաթ—1895 թ.
13. Համառօտ դասագիրք Հայոց ազգի պատմ. —Տիգրան Թ. Աբգարեանի—1899 թ.
14. Համառօտ Աշխարհագրութիւն—Անգլ. քարգմ. Ասուածատուր Ղ. Աղայեանի—1899 թ.
15. Աշխ. Քերականութիւն —Ն. Մէլիք Թանգեանի—1900 թ.
16. Գործն. Քերականութիւն Ա. Մ. Գարագաշեանի—փոխ. Նզմիկ աբ. Երկարակեցեանի—1900 թ.

17. Մայր. լեզու Գ. տ. Ղ. Աղայեանի—1900 թ.
18. » » Ա. » » » 1903 թ.
19. Մայր. լեզու Բ. տ.—Ղ. Աղայեանի—1903 թ.
10. » » Գ. » » » »
21. Արեգնազան—Ղ. Աղայեանի—1904 թ.
22. Սալմաստ—Արեակ Աթայեանի—1906 թ.
23. Աղիւսակներ Ռուս. դրամը Պարս. Վերածելու—Կ. Աբեանցի—1906 թ.
24. Երգարան—հրատ. Արեալոյսի—1907 թ.
25. Նախաշաւիղ և Ծաղկաքաղ—Կ. Կոստանեանի—1909 թ.
26. Գրիս. վարդապետութիւն—Գ. ա. Բան. Տէր Գաբրիէլեանի—Բ. տիպ.—1910 թ.
27. Դասընթացք մանկավարժութեան—Ռուսերէնից թարգմ.—Ա. Գեւորգիւսեանի—1911 թ.
28. Դասագիրք ընդհ. պատմութեան—Ֆրանս. թարգմ.—Ա. Գեւորգիւսեանի—1912 թ.
29. «Նոր-Ջուղայի լրարեր» ամսաթերթ—Խմբ. Բագրատ վ. Վարդապետեանի—1904—1908 թ.

Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

1606—1918

Վանքում կայ նաև մի մատենադարան, որի սկիզբը գրել է վանքի հիմնարկութեան օրից, 1606 թվին, Սեփովբ վարդապետի առաջնորդութեան օրով, որը եղել է հիմնադիրներից մէկը: Մատենի ձեռագիր՝ արձանագրութիւնները ցոյց են տալիս, որ սկզբնական շրջանում մատենադարանը հարուստ է եղել մագաղաթեայ գրչագրերով: Երբ հայերը գաղթում են Արարատեան դաշտից, Շահ-Աբբասի ձեռքով դէպի Նոր-Ջուղա, նրանք ունենալով սէր դէպի գրականութիւնը և ըմբռնելով գրչագրերի արժէքն իրենց հետ բերում են բազմաթիւ թանկագին գրչագրեր: Ահա այսպէսով սկիզբ է դրւում մատենադարանին: Սակայն վրայ է հասնում 1750—1790-ական թվականը: Տեղի է ունենում պարսիկների հարստահարութիւններն ու բռնութիւնները: Ահա այդ ժամանակ հին մագաղաթեայ գրչագրերը զրկւում են իրենց ոսկեզօծ և իւղաներկ ընտիր պատկերներից, զոհ գնալով խաչագողների շահամուլութեան, իսկ հին ձեռագիր գրքերից շատ շատերը չնչին գներով վաճառւում են պարսիկ գեղավաճառներին և վառօդագործներին: Եւ դա շնորհիւ ժամանակի տգէտ միաբանութեան:

Ահա, թէ ինչ է գրւում այդ առթիւ վանքի «բազմավիշտ» Մկրտիչ առաջնորդն իր բարեկամներից՝ պ. Մկրտումին:

«Տեղիդ առաջնորդ Յովսէփ վարդապետն երկու անգամ գիր էր լրկել, գրումայ քանի հատոր գիրքայ ուղեցել, Սրբապանը կարծումայ Ջուղայ կամ վանքն էլ էն այ՝ որ ինչ գիրք ուղեանք ճարվի, պիտի լսած լինէք որ Աղատխանի ժամանակին (յամի 1755), գրքերն ղրդրն 300 + դիւան քաղաքի աթարներն և բարութ շինողքն են առնուել»:

1844 թվին վանքի առաջնորդ Յովհաննէս Սուրէնեանը՝ լինելով գիտակից և զրադէտ մէկը, շինել է տալիս փայտէ դարակներ և ցան ու ցրիւ եղած գրքերը կարգի բերելով դասաւորում է և նորից մատենադարանը կանոնաւորում: Իսկ 1853 թվին Տփլիսեցի, ազգասէր-բանագէտ Գալուստ Վարդանեան Շիրմազանեանց նորից դասաւորում և ցուցակագրում է գրքերը: Այնուհետև թեմիս առաջնորդները և հոգևոր իշխանութիւնն առանձին հոգ են տանում մատենադարանի վրայ և այդպիսով դրւում է՝ քիչ թէ շատ կանոնաւոր հիմքերի վրայ: Անցնում են տարիներ: Նոր-Ջուղա է գալիս Սահակ Արք-եպիսկոպոս Այվատեանը: Սա տեսնելով որ, գրքերը տեղաւորւած են անյարմար մի սենեակում, Կալկաթա եղած ժամանակ դիմում է հարուստ Թագէոս Յարութիւնեանին և նրա ծախսով շինել է տալիս այժմեան մատենադարանը, որ կազմում է վանքի զարգերից մէկը և իւրաքանչիւր այցելուի ուշադրութիւնն է գրաւում: Այնուհետև, 1904 թվին, Նոր-Ջուղա է գալիս առաջնորդական փոխանորդ Բազրատ վարդ. Վարդազարեանը: Սա մէկն է այն հազագիւտ հոգևորականներից, որի նմանները շատ քիչ են մեր իրականութեան մէջ: Տեսնելով, որ մատենադարանը և առ հասարակ գրքերն անկանոն դրութեան մէջ են՝ գրքերը դասաւորում և մատենադարանը կանոնաւոր հիմքերի վրայ է դնում: Մատենադարանը դրսից տղիւսաշէն է: Բաղկացած է 4 լուսատու, գեղեցիկ ճաշակով զարդարւած սենեակներից և մի սրահից, որի դռնից ուղիղ դիմացի պատի վրայ դրւած է բարերար՝ Թագէոս Յարութիւնեանի նկարը, որի տակ գտնւում է հետևեալ մարմարեայ արձանագրութիւնը՝

«Կառուցաւ Մատենադարանս ծախիւք
պ. Թագէոս Յարութիւնեան Տէր Յովհաննեանի
'ի յիշատակ հօր իւրոյ»

Ատենադպրի Ս. Ամենափրկիչ Վանացի՝
Հանգուցեալ Յարութիւն Տէր Յովհաննանի»,
1905—1906

Գրքերը դասաւորւած են №-ների կարգով, առանձին ապակեայ փեղկերով՝ դարակների մէջ: Օտար գրականութիւնը դասաւորւած է առանձին սենեակում, գրչագրերը նրա կողքին՝ իսկ նորագոյն գրականութիւնը և պարբերական հրատարակութիւնները գտնուում են երկու առանձին սենեակներում:

Այժմ մատենադարանն ունի 2430 կտոր հին ու նոր գրքեր, որոնց 600-ը ձեռագիր է: Այստեղ գրչագրերը և դասական գրականութիւնն ահագին տոկոս են կազմում, կան նաև նորագոյն գրականութիւնից՝ գիտական, պատմական, թատերական, կրօնական, կենսագրական և այլն գրքեր և պարբերական հրատարակութիւններ: Կայ նաև բաւական թւով Անգլ. Ռսերէն և ֆրանսերէն գրքեր և բազմահատոր հանրագիտարաններ:

Բացի հայերից, սոյն Մատենադարանից օգտւում է նաև Սֆառանի եւրոպական գաղութը, մի հանգամանք, որ ուղղակի պատիւ է բերում Ս. Ամենափրկչեան վանքին:

ՆՈՐ-ԶՈՒՂԱՅԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ

(Պատ. համառոտ ակնարկ)

1606—1918

Ներկայումս, Նոր-Զուղայում գոյութիւն ունեցող կուլտուրական հաստատութիւններից ուշագրութեան արժանի են «Ազգ. կենդրոնական», «Ս. Կասարիկեան» և «Գեորգ Քանանեան» դպրոցները, որոնք գտնուում են միևնոյն ուսուցչական խմբի ձեռքում: Այդ երեք դպրոցները լուսաւորութեան, կուլտուրայի ջահ են հանդիսացած և ակտիւ դեր են կատարում Զուղահայերի քաղաքակրթութեան-առաջադիմութեան գործում և ունին մօտ 60 տարւայ պատմութիւն: Կանգ առնենք համառոտակի՝ այդ դպրոցների պատմութեան վրայ առանձին, առանձին:

Ա.

Ա.Զ.Գ. ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

«Ազգ. կենդրոնական դպրոց հայոց, հիմնւեցաւ յամի 1880 ի թաղաւորութեան վեհափառ Նասրէտին Շահին պարսից և ի Հայրապետութեան Տ. Տ. Գեորգայ սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն հայոց և յառաջնորդութեան Նոր-Զուղայի Տ. Գրիգորի Արքեպիսկոպոսի, իսկ աւարտումն եղև յամին 1893 ձեռամբ Եսայի Կպիսկոպոսի»:

Ահա այս արձանագրութիւնն է կրում դպրոցն իր դռան ճակատին, որ մօտ 40 տարւայ կեանք ունի: Բայց նրա անցեալի մասին շատ քիչ բան է յայտնի: Դպրոցի արիւնն այնքան անկանոն դրութեան մէջ է, որ նրանից բաւարար տեղեկութիւններ քաղելն անկարելի է եղել, չկայ ոչ մի կանոնաւոր յիշատակարան, որից կարելի լինէր տեղեկութիւններ ստանալ դպրոցի պատմութեան, նրա անցեալի, նրա

կատարած դերի, տւած արդիւնքի մասին, ուստի ստիպւած ենք եղել դիմելու դպրոցական գործիչների և մասամբ էլ վերջին տարիներում հրատարակող դպրոցական տեղեկագրերի օգնութեանը:

1880 թւին, Նոր-Ջուղայի առաջնորդ Գրիգորիս Արքեպիսկոպոս Յովհաննիսեանի նախաձեռնութեամբ և Խաչատուր վարդապետ Կարապետեանի ջանքերով Նոր-Ջուղայից, Հնդկաստանից, Բրմաստանից և Ջալայից հանգանակւած գումարներով հիմնւում է յիշեալ դպրոցը և 1883 թւին արդէն գոյութիւն ունեցող՝ Ս. Աստուածածնի եկեղեցու Յարութիւն Սրգարեանի «Հայկեան հայրենասիրական», Ս. Մինաս եկեղեցու տ. Մարիամ Յարութիւնեանի և Ս. Ստեփաննոս եկեղեցու Մարգար Սուքիասեանի հիմնարկած երեք դպրոցները միացւում են և կազմում «Ազգային Կենդրոնական դպրոցը»:

Դպրոցի շէնքը փռւած է Նոր Ջուղայի Չարսու թաղում, մի տափարակ, գեղեցիկ և օգասուն դիրքի վրայ:

Սկզբնական շրջաններում դպրոցն եղել է խալիֆայական, Տէր-Թէօդիկեան և գրեթէ բացակայել է այնտեղ սիստեմատիկ դաստիարակութիւնը, իրենց կոչման բարձրութեան վրայ կանգնող ուսուցիչների բացակայութեան պատճառով: Սակայն, ժամանակի ընթացքում դպրոցը հիմնական և աստիճանական բարեկարգութիւնների՝ ծրագրային էական փոփոխութիւնների և դաստիարակչական միջոցների լաւագոյն սիստեմների մշակումով՝ ենթարկւում է աստիճանական զարգացման և բարելաւման ու իր նախկին քարացած դոգմատիք վիճակից ելնելով ստանում է որոշ կերպարանք ու ձև: Եւ այսօր նա համարւում է Նոր-Ջուղայի ամենաբարձր դպրոցը: Այժմ բաղկացած է երկու նախակրթարանից և վեց դասարաններից ու իր կուրսով համապատասխանում է հոգեւոր միջնակարգ դպրոցին: Այս դպրոցը մեծ դեր է խա-

ղացել Ջուղահայերի կեանքում և իր տեղական միջոցների ներածին չափով տւել է ազգին մի նոր կրթւած սերունդ: 1900-ից սկսած, դպրոցը միշտ էլ կանոնաւոր ընթացքի մէջ է եղել և առանց ընդհատումների առաջ է տարւել: Բայց մի հանգամանք, որ շատ աչքի է ընկնում դպրոցում, դա այն է, որ գրասեղանների կողմից շատ անմխիթար վիճակ է ներկայացնում: Գրասեղաններից շատ-շատերն աշակերտներին անյարմար են: Բայց դա պէտք է վերագրել նիւթականի բացակայութեան: Աւելորդ եմ համարում կանգ առնել նաև աշակերտների ֆիզիքական դաստիարակութեան վրայ, քանի որ այդ ուղղութեամբ շատ քիչ բան է տրւում դպրոցում:

Դպրոցը պահպանւում է Փէրիա գաւառի իր սեփական Ձիգան գիւղում ունեցած կալւածով և դպրոցի թոշակատու աշակերտների վճարով: Այժմ դպրոցն ունի մօտ 200 աշակերտ:

Այս դպրոցը, 1892 թւին, առաջնորդ Եսայի Արքեպիս. Աստուծատրեանը միացնում է օրիորդաց դպրոցի հետ և անւանում «Նոր-Ջուղայի Ազգ. երկսեռ դպրոցներ»:

Դպրոցի դահլիճում, արևմտեան պատի վրայ փակցւած է մի պղնձե տախտակ, որի վրայ կայ հետևեալ արձանագիրը՝

«Յամի տևառն 1843. հայկեան հայրենասիրական ուսումնարան Նոր-Ջուղա կառուցաւ արդեամբք հանգ. Կարութիւնի և Գրիգորի Արդարեանց որք ՚ի Կալիթա երկոցունց որդոց հանգ. Արգարու Աղազարայ Սնթեանց և Սանդխտոյ ամուսնոյն իւրոյք ՚ի Ջուղա. և արդեամբք հանգ. աղա Յովհաննիսի Երիզան որ ՚ի Կալիթա. ՚ի յիշատակ իւրեանց ապա պայմանաւ իւրիք. միայնալ ընդ Ազգային Կեդրոնական ուսումնարանին հաստատուիլոյ աստ ՚ի Ջուղա յամի տևառն 1880»:

Սոյն բովանդակութիւնը միևնոյն տախտակի վրայ փորագրւած է նաև Անգլերէն լեզուով:

Այս դպրոցում է կանգնած «Նոր-Ջուղայի Ազգ. թատրոնը»:

Իսկ ձախ պատի վրայ կայ նաև մի ուրիշ մարմարեայ արձանագիր, որ պատկանում է նոր շինութեանը՝

Արձանագիր

Հիսուսացաւ Ս. Կատարինէ օրիորդաց ուսումնարանս գեր զովկի արդեամբք և տրուք հայոց Զուղայու, Հնդկաստանի և Զալայի, ի թագաւորութիւն պարսից Մուղհեդդին արեղանափայլ Շահի, ի հայրապետութեան Տ. Տ. Մկրտիչ Ա. Ամ. Հայոց Վեհ. Կաթողիկոսի, յառաջնորդութեան Տ. Մաղաքիա սրբազան, ևպիոկոպոս Տեոփեհեանի, յամի տեառն 1900 նշանաւոր դարձան թեւականի:

Յիշատակ համայն նւիրատուաց և աշխատաւորաց օրհնութեամբ և զիցիս:

1908 Մայիս 25-ին թեմիս առաջնորդական փոխանորդ՝ Հ. Բազրատ վարդ. Վարդապետեանի նախաձեռնութեամբ տօնուում է դպրոցի 50-ամեայ յօրելեանը և այդ առիթիւ նոր-Զուղայի կանանց բարեգործական ընկ. վարչութեան և Կալկաթայի վիճակաւոր քհնյ. Տ. Վարդան Վարդանեանի միջոցով հանգանակուում է 5000 թուման «անձեռնմխելի դրամազուխը»: Ապա այդ դրամազուխով Առաջնորդ Սահակ Արքեպիս. Այվատեանը Փէրիա գաւառի հայաբնակ Բոլորան գիւղը գնում է, որով ապահովեցնում է դպրոցի տնտեսականը:

Դպրոցն իր գոյութեան օրից՝ շատ մեծ դեր է խաղացել է Զուղահայերի կեանքում և մեծ զարկ է տւել իգական սեւի կրթութեանը: Այժմ ունի 155 աշակերտուհի 5 դասարանով, որի Ա. դասարանն ունի զուգ. և հիմնական:

Այս դպրոցում է գտնուում ուսուցչական-մանկական զբաղարանը, ուր կայ մօտ 1500 կտոր գիրք:

Գ.

ԳԵՈՐԳ-ՔԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Բացի վերոյիշեալ երկու դպրոցներից, ն. Զուղայում գոյութիւն ունի նաև «Դեռագ Բանանեան» դպրոցը, որ հիմնել է

Տ. Վառվառէ Քանանեանը 1901 թւին՝ ի յիշատակ իր ամուսնոյ՝ հանգուցեալ Գէորգ Քանանեանի: Դպրոցը կանգնած է Զարսու թաղում «Ս. Կատարինեան օրիորդաց» դպրոցին կից և գտնուում է Ազգ. երկսեռ դպրոցների միջևն ժանկավարժական խորհրդի իրաւասութեան ներքոյ:

Դպրոցն ունի երեք նախակրթարան, չորս դասարան և մի մանկապարտեզ: Շէնքը երկյարկանի է և բաղկացած 13 մեծ, օդատուն սենեակներից և մի գեղեցիկ դահլիճից:

Նախ՝ տանք այստեղ հանգուցեալ բարերարի կենսագիրը:

Գ. Քանանեանը ծնւել է 1834 թւին Ղզլարում: Նախնական ուսումն ստացել է Ստաւրոպօլի գիմնազիայում: Այնուհետև 1854 թւին մտնում է Սոսկւայի համալսարանի պատմա-լեզւագիտական ֆակուլտէտը: Նոյն 1854 թւին Պատկանեանի նախաձեռնութեամբ կազմուում է մի փոքրիկ գրական ընկերութիւն «Գամառ Բաթիպա» անունով, որ կազմուում է եղել մասնակցողների անւան և ազգանւան սկզբնատառերից: Ընկերութիւնը բաղկացած էր երեք անդամներից՝ որոնց նպատակն էր գրքեր հրատարակել և այդպիսով զարկ տալ թէ նորածին աշխարհիկ գրականութեան և թէ ժողովրդի ընթերցանութեանը: Ահա այդ ընկերութեան գործօն անդամներից մէկն էր Գէորգ Քանանեանը:

1858 թւին նա աւարտելով ֆակուլտէտն, ստանձնում է նոյն դպրոցում ուսուցչի պաշտօնը: Այնուհետև Քանանեանին տեսնում ենք Լազարեան ճեմարանում վերատեսչի պաշտօնով, որ ստանձնում է 1861 թւին և շարունակում մինչև իր մահը:

Գ. Քանանեանի տեսչութեան օրով Լազարեան ճեմարանը մի մեծ քայլ առաջ է գնում: Զնայած այն բոլոր անըպատ պայմաններին, որոնց մէջ գտնուում էր դպրոցական գործը՝ Քանանեանը կարողանում է բարեկարգել ուսումնարանը, որքան այդ հնարաւոր էր: Այդ նպատակով նա մի

շարք կարեոր բարեփոխումներ է մտցնում դպրոցում և այդպիսով զարկ է տալիս դպրոցական գործին: Սրա շրջանը կազմում է դպրոցի ամենափայլուն շրջաններից մինը:

Մեռնում է՝ 1897 Յուլիսի 4-ին:

Քանանեանը, դեռ իր կենդանութեան ժամանակ ցանկանում է հայաբնակ որևէ վայրում մի դպրոց հիմնել, բայց այդ նրան չի աջողում: 1899 թվին, Տ. Վառվառէ Քանանեանն իրագործում է իր ամուսնու ցանկութիւնը, այդ նըպատակով նա Վեհ. Կաթողիկոսի հետ թղթակցութեան մէջ մտնելով 1900 թվին Հ. Բազրատ վ. Վարդապետեանի ջանքերով կառուցել է տալիս դպրոցը Նոր-Ջուղայում, որի համար յատկացնում է 47,000 ռուբլի: 1903 թվին ձեռնարկւում է դպրոցի շինութեանը, 1905 թվին աւարտւում է և Սեպտ. 26-ին շքեղ հանդէսով բացւում է դպրոցը ու միանում «Նոր-Ջուղայի Ազգ. երկսեռ դպրոցների» հետ:

Ամէն տարի Ս. Գէորգ Զորավարի տօնին Նոր-Ջուղայի Ս. Գէորգ եկեղեցում տօնւում է հանգուցեալ բարերարի յիշատակը:

Դպրոցն ունի այժմ 347 աշակերտ-աշակերտուհի: Գրտնւում է Վեհափառ կաթողիկոսի և թեմիս առաջնորդի ու ընտրւած հոգաբարձական մարմնի հովանաւորութեան ներքոյ: Ծառայում է իրրև նախակրթարան «Ազգ. Կենդրոնական դպրոցի» և ղեկավարւում է նոյն դպրոցների ծրագրի միութեամբ և յաջորդականութեամբ:

Դպրոցի երկրորդ յարկի, տեսչանոցի մօտ, արևելեան պատի վրայ կայ հետևեալ մարմարեայ արձնագիրը.

Գէորգ Քանանեան Ազգային դպրոց

«Ի Հայրապետութեան Տ. Տ. Սկրսիյ սրբադնադոյն կաթողիկոսի Ամենայն հայոց, կառուցաւ դպրոցս յանուն և ի յիշատակ հանգուցեալ գիտնականի Գէորգայ Քանանեանի՝ վերատեսչի Լազարեան ձեմարանի՝ արդեամբ և ծախիւք վսեմաշուք տիկնոջ նորին Վառվառէից Քանանեան:

Օրհնութիւն հիմնարկութեան դպրոցիս եղև ՚ի 11 Մայիս 1903 ամի:

Պաշտօնական բացումն ՚ի 25, Սեպտեմբերի 1905 ամի:

Սրանք են ահա Նոր Ջուղայի կուլտուրական կրթական հիմնարկութիւնները, այժմ դառնանք դպրոցների պատմութեանը:

* *
*

Դպրոցական-կրթական գործը Նոր-Ջուղայում ունի իր երկար տարիների պատմութիւնը: Ջուղահայ ժողովուրդը վաղուց շատ վաղուց է զգացել դպրոցների ահագին նշանակութիւնը և դեռ Նոր-Ջուղայի հիմնարկութեան առաջին տարիներից սկսել է դպրոցներ ունենալ: Առաջին դպրոցը հիմնւել է Ս. Ամենափրկչեան վանքում, ուր առաջին ուսուցիչը լինում է Խաչատուր Կեսարացին: Սրան յաջորդում են ուսուցչութեամբ Դաւիթ, Ստեփաննոս եպիսկոպոսները և Կոստանդին դպիրը¹⁾: Այնուհետև դպրոցներ բացւում են և եկեղեցիներում, ուր սովորեցնում են հասարակ զրազիտութիւն, կրօնական աւարկաներ, ժամագիրք, շարական, եկեղեցական ժամասացութիւն, առևտրական հրահանգներ և այլն: Այդ դպրոցներում ուսուցանում էին ընդհանրապէս առաջնորդները և քահանաները: Ազգբնական շրջանում դպրոցական կեանքը շատ տխուր պատկեր էր ներկայացնում, հետևաբար դպրոցները գտնւելիս են եղել շատ անմխիթար վիճակում: Կրթութիւնն առաջ է տարւել անխնամ ու անսխտէմ կերպով: Ահա մի այսպիսի թշուառ դրութիւն էին ներկայացնում Նոր-Ջուղայի սկզբնական դպրոցները: Բայց այնուհետև մի շարք նպաստաւոր հանգամանքներ գալիս են արմատապէս յեղաշրջելու դպրոցական-կրթական կեանքը: Այդ երևոյթը տեղի է ունենում 1895 թվ. դարում: Նոյն դարում Ս. Ամենափրկչեան վանքի դպրոցը դրւում է առողջ հողի վրայ,

1) Տես Նոր-Ջուղայի Պատ. Բ. հատոր:

որը գալիս է ընթացք տալու Զուղաճայերի կրթական-գաս-տիարակչական գործին, տալով պատրաստած անձնէր հոգե-ւորականներ, որոնցից նշանաւոր են՝ Յովհաննէս վարդա-պետը, որ թողել է բազմաթիւ գրական աշխատութիւններ: Աստուածատուր վարդապետը, որ գրական մեծ յեղաշրջում է առաջ բերել Կ. Պօլսում: Վերջապէս Ստեփաննոս և Ոս-կան վարդապետները, որոնք նշանաւոր են տպագրական պատմութեան մէջ իրենց մատուցած ծառայութիւններով: Այսպէս ուրեմն՝ դպրոցները Նոր-Ջուղայում զգալի յառաջա-դիմութիւն են ցոյց տալիս ԺԶ. դարից սկսած: Ասես այնու-հետեւ դպրոցները Զուղաճայերի համար մի անհրաժեշտու-թիւն են դառնում և ահա մէկիկ-մէկիկ դպրոցներ են բաց-ւում, Նոր-Ջուղայի զանազան թաղերում շինւում են դպրո-ցական շէնքեր կամ այդ նապատակին են յատկացնում եկե-կեղեցիների գաւիթները: Այսպէս ԺԶ. դարում կամոց-կա-մաց կրթական գործն առանձին կենդանութեան նշաններ է ցոյց տալիս և այդ ուղղութեամբ գործը շարունակւում է մօտ 30 և աւելի տարիներ:

✓ 1710 թւին, Մովսէս առաջնորդի ջանքերով բացւում են երկու դպրոցներ. մէկը Մուրադեանց Ս. Յակոբ եկեղեցում և միւսը Ս. Ստեփաննոս եկեղեցում: Իսկ 1833 թւին Մադ-րասաբնակ Գրիգոր Սամեան երևելի վաճառականը 20,000 ռ. կտակելով Ամենափրկչ. վանքում հիմնել է տալիս մի դպրոց, որի համար Յովհաննէս Բ. առաջնորդը Ս. Էջմիածնից ուսու-ցիչ է հրաւիրում յայտնի գիտնական-բանաստեղծ Մեսրոպ Թադիս-դեանին: Սա միայն երկու տարի պաշտօնավարելով հրաժարւում է, իսկ դպրոցը 1837 թւին ինչ-ինչ հանգա-մանքների շնորհիւ փակւում է: 1840 թւին, Յովհաննէս Զօհրաբեանի ջանքերով նորից բացւում է, ուր աւանդւում է հայերէն, քերականութիւն, թւաբանութիւն, վայելչագը-րութիւն, աշխարհագրութիւն, Անգլ. Պարսկերէն: 1853

թւին նիւթականի պակասութեան պատճառով վերջնականա-պէս փակւում է և այնուհետեւ աշկերտները ցիր ու ցան եղած պարագ-սարագ թափառում են փողոցներում: Այդ հանգամանքը մեծ ցաւ է պատճառւում թեմիս առաջնորդ՝ Սրբազան Թադէոսին, ուստի նա դիմում է Հնդկահայ աղ-գայիններին և խնդրում նրանց աջակցութիւնը: Առաջնորդի կոչն արձագանք է գտնում և ահա Կալկաթաբնակ Զուղա-յեցի Յարութիւն Աբգարեանը, 1843 թւին Նոր-Ջուղայի Մէյգան թաղի Ս. Աստուածածնի եկեղեցում հիմնել է տա-լիս «Հայկեան հայրենասիրական» դպրոցը, ուր աշակերտում են մօտ 80 հոգի: Այս դպրոցն իր գոյութիւնը պահպանում է ուղիղ բառասուն տարի և մի քանի գրագէտ սերունդ է արտադրում: Իսկ 1844—1847 թւականներին երկու դպրոց-ներ ևս բացւում են՝ մէկը Ս. Ամենափրկչեան վանքում Յով-հաննէս Սուրենեանի նախաձեռնութեամբ և միւսը Դաւրէթ թաղի Ս. Մինաս եկեղեցում՝ Բատալաբնակ մի անյայտ բա-րերարի ներատուութեամբ, բայց երկուսն էլ շատ կարճ կեանք են ունենում: Այնուհետեւ 1853 թւին, տ. Մարիամ Յակոբ Յարութիւնեանը և օր. Թադուհի Մանուկեան եր-կու քոյրերը Նոր-Ջուղայում Դաւրէթ թաղի Ս. Մինաս ե-կեղեցում մի դպրոց են հաստատում, որ իր գոյութիւնը պահպանում է ուղիղ երեսուն տարի: Նոյն 1853 թւին, Զաւայաբնակ Նոր-Ջուղայեցի Մարգար Սուքիասեանը Նոր-Ջուղայի Յակոբջանեան թաղի Ս. Ստեփաննոս եկեղեցում բաց է անում մի դպրոց, որ նոյնպէս ուղիղ երեսուն տարի պահպանում է իր գոյութիւնը: Այս դպրոցներում ուսանում են մօտ 100 աշակերտներ և աւանդւում է՝ քերականութիւն, թւաբանութիւն, ընթերցանութիւն, վայելչագրութիւն և պարսկերէն: Երկու դպրոցներն էլ իրենց գոյութեան ամբողջ ընթացքում զարկ են տալիս Նոր-Ջուղայի մատաղ սերնդի կրթութեանը:

Անցնում են տարիներ: 1867 թվին Հնդկաբնակ տիկին Մադիկ Յովսէփեանն իր ամուսնու լիշատակին մի դպրոց է բաց անում «Գէորգ Յովսէփեան» անունով, որ միայն հինգ տարւայ կեանք է ունենում:

Այսպէս, դպրոցները Ն.-Ջուղայում այս կերպարանքով շարունակւում են մինչև 80-ական թւականները, երբ գալիս է Գրիգորիս արքեպիս. Յովհաննիսեանը և դնում է կանոնաւոր դպրոցի հիմքը: Սա Խաչատուր վարդապետի աջակցութեամբ Ն.-Ջուղայից, Հնդկաստանից, Բրմոստանից և Զաւայից հանգանակութիւն կատարելով՝ Զարսու թաղում կառուցանում է մի նոր դպրոց, որի հետ 1883 թվին արդէն գոյութիւն ունեցող դպրոցները միացնելով կազմում է Ազգային Կեդրոնական դպրոցը: Այս է ահա Նոր-Ջուղայի կրթական գործի անցեալի պատկերը: Այժմ տեսնք մի քանի խօսք էլ որոշ շրջանները մասին:

* *

Ինչպէս տեսանք, Նոր-Ջուղայում կրթական գործն ունի իր երկար տարիների պատմութիւնը: Ինչպէս ամեն տեղ, այնպէս էլ Նոր-Ջուղայում դպրոցներն անցել են երեք փառքերից-խալիֆայական, անկերպարան ու կանոնաւոր: Համարեա մինչև Ժ. Գարի վերջին քառորդը դպրոցները Նոր-Ջուղայում գտնւելիս են եղել խալիֆայական և անկանոն դրութեան մէջ: Ժ. Գարի վերջին քառորդում միայն դրպրոցական կեանքը զգալի առաջադիմութիւն է ցոյց տալիս և այդ տարեշրջանը համարւում է Նոր-Ջուղայի դպրոցների ամենափայլուն շրջաններից մինը: Այնուհետև դպրոցները այս կերպարանքով շարունակւում են մինչև 50-ական թւականները, երբ գալիս է հ. Թադեոս արքեպիսկոպոս Բեգնազարեանը: Սրա անունը նշանակալից տեղ է բռնում Նոր-Ջուղայի դրպրոցական պատմութեան մէջ և սա է, որ առաջին անգամ լինելով հիմք է դնում Նոր-Ջուղայում օրիորդաց դպրոցին:

Այնուհետև դպրոցական պատմութեան մէջ նշանաւոր են հետեւեալ տեսութները. —

ա. Պողոս Մարտիրոսեան. սրա օրով դպրոցները մի քաջ աւելի առաջադիմում են: ա. Նիկոլայ Տէր Դրիգորեան, որի պաշտօնավարութեան ժամանակ գրասեղանները մուտք են գործում դպրոցում: ա. Համբարձում Տէր Գ. Բաբսեպեան. սրա օրով դպրոցը զգալի առաջադիմութիւն է ցոյց տալիս: ա. Մարտիրոս Յարութիւնեան. սա պաշտօնավարել է ուղիղ երեք տարի և այդ կարճ ժամանակամիջոցում նա դպրոցը կանոնաւորել և դրել է հաստատուն հիմքերի վրայ: Տէր Վարդան Բեգ. Վարդանեան. սա իր գործունէութեամբ, որոշ չափով զարկ է տալիս կրթական գործին: ա. Մարտիրոս Յարութիւնեան, (երկրորդ անգամ). նոր ուղղութիւն է մտցրել գասաւանդութեան մէջ և հիմք է դրել աշակերտ. գրագարանին: Ապա գալիս է հ. Բագրատ վարդ. Վարդապետեանը՝ կրթական գործին նւիրւած մի մարդ, որ անցնելով գործի իր հմտութեամբ և անսահման եռանդով զգալապէս բարձրացնում է դպրոցների կրթութեան մակարդակը: Սրա օրով վերանում է ծեծը, տեղի են ունենում մանկավարժական ժողովներ և աւանդելիք առարկաների մէջ մտցւում է որոշ բարեփոխութիւն: Նոյնպէս նրա ջանքերի շնորհիւ, աչքի ընկնող մի քանի գիւղերում բացւում են դպրոցներ: Այնուհետև գալիս է ա. Արմենակ Գեաքիմեանը, որ ըստ իր հայեցողութեան և բարեխղճութեան, ամբողջ չորս տարի պաշտօնավարում է և իր մեծ հաւատով ու եռանդուն գործունէութեամբ դպրոցական գործը և մատաղ սերնդի կրթութիւնն ու դաստիարակութիւնը դնում է առողջ հիմքերի վրայ և մտցնում իրեն վայել ուղիղ հունի մէջ: Գրեթէ սրա տեսչութեան տարեշրջանը կազմում է դպրոցի ամենափայլուն շրջաններից մինը և այդ շրջանում է, որ 175 նորեկ աշակերտ-աշակերտուհիներ են արձանագրւում դպրոցների սաների շարքում: Բացի այդ՝

պատրաստել է մի ընդարձակ «ծրագիր», որի մէջ մտցրել է նոր առարկաներ՝ հոգեբանութիւն, մանկավարժութիւն: Կազմել է ընդարձակ «ներքին կանոնադրութիւն» մշակել է աշակերտական, ծնողական կանոններ. հրատարակել է մանրամասն տեղեկագիր, որոնց մէջ հանգամանօրէն պարզաւ թէ դպրոցների ընթացքն և աշակերտութեան բարոյական, կրթական-դաստիարակչական պատկերը: Նաև ջանացել է ստեղծել դասաւանդման եղանակների և դաստիարակչական միջոցների միանմանութիւն: Կազմել է ծնողական ժողովներ, բացի այդ դպրոցում հիմք է դրել «աշակերտական միութեան»: Աշակերտների գրադարանն աւելի կանոնաւորել, նոյնպէս և մանկապարտէզն աւելի հաստատուն հիմքերի վրայ է դրել: Աշակերտներին տարին երկու անգամ բժշկական քննութեան է ենթարկել և Քանանեան դպրոցում հաստատել փոքրիկ դեղատուն: Մի խօսքով նա ամեն ջանք ու եռանդ չի խրնայել ազգային դպրոցների բարեկարգութեան ու յառաջադիմութեան համար: Նրա պաշտօնավարութեան ընթացքում դպրոցները միշտ էլ ցոյց են տւել յարաճուն զարգացում և բարեփոխութիւն: Ահա թէ ինչ է գրում 1911—12 թվականի ուսումն. տարեշրջանի տեղեկագրում Հոգաբարձութիւնն այ. Ա. Գերասիմեանի մասին.

... «Հոգաբարձութիւնս նախորդ ուսումնական տարւայ վերջին ի նկատի ունենալով աւագ-ուսուցչից այ. Ա. Գերասիմեանի եռանդուն ու գովելի գործունէութիւնը՝ յարմար դատեց յանձնել նրան դպրոցների տեսչական պաշտօնը, որն և ուրախութեամբ յանձն առնելով իր գործը վարեց ամենայն բարիխղճութեամբ՝ դրա հետ միասին աւանդելով շաքաթական 14 դաս և կատարելով երգչիկ խմբի ղեկավարութիւնը:

Այժմ ուսուցչական խումբը բաղկացած է 31 հոգուց, որոնցից մի մասը վերջացրել է միջնակարգ տիպի դպրոցներ: Աշակերտութեան թիւը 700 է (երկսեռ), որոնք տեղա-

ւորւած են 23 դասարաններում: Իսկ մանկապարտէզն ունի երեք տարւայ բաժին: Դպրոցում աւանդոււմ են հետեւեալ առարկաները. — Կրօն, Եկեղեցական պատմութիւն, Կրօնների պատմութիւն, Հայոց լեզու հին և նոր, Հայոց պատմութիւն, Ընդհանուր պատմութիւն, Մանկավարժութիւն, Բանահիւսութեան տեսութիւն, Բնագիտութիւն, Աշխարհագրութիւն, Թւաբանութիւն, Երկրաչափութիւն, Գր. պատմութիւն, Վայելչագրութիւն, Նկարչութիւն, Զեւագործ և Կարու ձև: Իսկ օտար լեզուներից՝ Անգլերէն, Ռուսերէն և Պարսկերէն:

Դ.

Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՇԵՐՈԹԻԿ ԴՊՐՈՅԸ

Բացի այդ դպրոցներից՝ Ս. Ամենափրկչեան վանքը պահոււմ է մի «գիշերօթիկ Հոգեւոր» դպրոց, որի նպատակն է պատրաստել թեմիս հայութեան և շրջանիս հայաբնակ գիւղերի համար զարգացած քահանաներ և ուսուցիչներ: Դպրոցը գտնոււմ է Պարսկա-Հնդկաստանի թեմակալ առաջնորդի, փոխանորդի և Առաջն. Խորհրդարանի անմիջական հսկողութեան տակ: Դպրոցը պահոււմ է այժմ 8 աշակերտ, որոնցից երեքը Փէրիա գաւառի Նամակերտ գիւղից են, երկուսը Թէհրանից, իսկ միւսները՝ համադանից, Հնդկաստանից և Զուղալից: Նրանք իրենց ուսումն ստանոււմ են տեղիս Ազգ. Կեդրոնական դպրոցում, իսկ եկեղեցական կրթութիւնը՝ Ս. Ամենափրկչեան վանքում, առանձին քահանայ-ուսուցչի դասաւանդութեամբ: Աշակերտները կիւրակէ և տօն օրերին պարտաւոր են սպասաւորել Ս. Տաճարում, երբ ժամերգութիւն կամ պատարագ է լինում: Դպրոցի ծախսը հոգացոււմ է Բաթաւիայից և Խոյզան ու Բոլորան գիւղերի կալաւածներից ստացւած գումարներովը:

Որպէսզի ընթերցողին որոշ գաղափար տանք՝ յարմար

ենք նկատում տուլ ալտեղ դպրոցի ծրագիր-կանոնագրի էական մասերը:

Ծրագիր՝

1. Դպրանոցը 1914—1915 ուսումն. տարեկազմից ունենալու է ընդամենը 12 ձրիավարժ աշակերտ:
2. Դպրանոցիս աշակերտներ կընդունուին միայն այնպիսիներին, որ կենսական քաղցրի գոնէ Ա. դասարանի համապատասխան պատրաստութիւն կունենան:
3. Աշակերտ չեն կարող ընդունուել նրանք, որոնք մարմնական որեւէ արատ կունենան:
4. Նոր աշակերտներ կընդունուին միմիայն եղածների հետամալուց յետոյ՝ ըստ հերթի:
5. Դպրանոցիս աշակերտները բնաւ իրաւունք չունին մասնակցելու որեւէ ընկերութեան, կամ ներկայանալու որեւէ ժողովի, կամ անդամակցելու որեւէ խմբակցութեան:

Կանոնագիր՝

1. Առաւօտը վերակացուի կամ հերթադասի ազգաբարութեամբ զարթնելուն պէս պէտք է հագնուին, անկողիները կանոնաւորին, մօրուր լւացւին, սանրին և քաղաքավարութեամբ ու աւանց ազմուկի մանեն սեղանատուն թէ՛ խմելու, ապա վերակացուի առաջնորդութեամբ գնան դպրոց և կէսօրին ու իրիկնապահին նոյն կարգով վերադառնան վանք:
2. Աւանց աւուցչի կամ վերակացուի իրաւունք չունեն որեւէ տեղ քնալ:
3. Առաւօտ և երեկոյ պիտի աղօթեն:
4. Արգելուած է ծխելը:
5. Արգելուած է որեւէ շրջաբերական թուղթ ստորագրել կամ համամիտ գտնուել ձեռնարկողներին:
6. Դպրանոցի աշակերտներ իրար վերաբերմամբ պարտական են ունենալ քաղցր, ներողամիտ և եղբայրասէր վերաբերմունք: Սրա հակառակ չպէտք է ունենան կուսակց. նախանձու և չարամիտ բնաւորութիւն: Մեծերը դէպի փոքրեր, և թոյլերը պէտք է լինեն բարի:
7. Յիշեալ կանոններին զանցառութիւն անող աշակերտը կենթարկուի պատժի. զեղծումը կրկնած դէպքում կը հետաքրքիր դպրանոցից:

Ե.

Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ ԱԶԳ. ՈՐԲԱՆՈՅԸ

Նոր-Ջուղայում գոյութիւն ունի նաև «Ս. Կատարինեան Որբանոցը», որ հիմնուել է 1907 թւին, Ս. Կատարինեան Մե. նաստանում և գտնուում է Պարսկա-Հնդկաստանի թեմի հոգեւոր Բշխանութեան հովանաւորութեան և Հայուհեաց Բարեգործ. Ընկերութեան Վարչութեան հսկողութեան ներքոյ:

Որբանոցի նպատակն է շրջանիս գիւղերի դպրոցների համար պատրաստել վարժուհիներ և հասարակութեան օգտակար անդամուհիներ: Որբանոցում ընդունուած են անօգնական, որք երեխաներ, նաև գիշերօթիկ սանուհիներ (վրճարով): Նոր ձրիավարժ որբուհիներ կընդունուեն միմիայն եղածների հետամալուց յետոյ՝ ըստ հերթի:

Սանուհիները պարտաւոր են մասնակցել վանքի տնտեսական գործերին: Որբանոցը հնարաւորութիւն ունի տալ յոյժ պահել 6 ձրիավարժ որբուհիներ, 10 զեղչած վճարով և 14 լրիւ վճարով սանուհիներ:

Որբանոցի եկամուտներ են կազմում՝ դրամագլխի տոկոս, Ազգ. հաստատութեանց օժանդակութիւններ, կամաւոր նւիրատուութիւններ և պատահական նպաստներ:

Որբանոցի նիւթական միջոցները ներելիս՝ բաց է անում «Զբի ճաշատան», ուր կէսօրները ճաշում են Ազգ. երկսեռ դպրոցների չքաւորագոյն աշակերտ-աշակերտուհիները:

Որբանոցն ունի առողջարար և օգտուուն շէնք իր բոլոր յարմարութիւններով:

Մանօր. Որբանոցի Ծրագիր-Կանոնագիրը համապատասխանում է Ս. Սանահիւրկեան Վանքի գիշերօթիկ դպրոցի Ծրագիր-Կանոնագրին. դրա համար էլ աւելորդ ենք համարում տալ այստեղ:

Ինչպէս տեսնում ենք՝ Որբանոցի նպատակը շատ բարի է ու վսեմ և միևնույն ժամանակ Նոր-Ջուղայի համար դա կարեւոր մի հաստատութիւն է, բայց որբանոցը դեռ տնտեսապէս շատ անմխիթար դրութեան մէջ է գտնւում, այսօր նա կարիք ունի նիւթական լայն աջակցութեան: Յանկալի էր որ, Հնդկաբնակ Ջուղայեցիներն այդ հանգամանքն ի նրկատի առնելով՝ աջակցէին իրենց նիւթական միջոցներով, աւելի հաստատուն հիմքերի վրայ դնելու համար այն հաստատութիւնը, որի կարիքը գոնէ այժմ այնքան զգալի է Նոր-Ջուղայում:

* *

Բացի հայոց ազգային կուլտուրական-կրթական հաստատութիւններից, Նոր-Ջուղայում կաթոլիկները և բողոքականներն էլ ունեն իրենց դպրոցները: Բողոքական միաթոնարները հաստատում են մի դպրոց 1876 թւից սկսած, իսկ կաթոլիկների դպրոցը բացւում է 1878 թւին, հ. Յարութիւն վարդ. Առաքելեանի ջանքերով: Իրանցից բողոքականների դպրոցն անհամեմատ աւելի բարձր է, թէ իր կազմով և թէ ծրագրային գործունէութեամբ:

Այս երկու դպրոցներն էլ իրենց գործունէութեամբ մեծ ծառայութիւն են մատուցել Ջուղայի կրթական գործին: Այժմ այս դպրոցներում սովորում են 200-ից աւելի աշակերտ-աշակերտուհիներ:

ՆՈՐ-ՋՈՒԴԱՅԻ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նոր-Ջուղայում կան մի քանի ազգային բարեգործական կուլտուրական ընկերութիւններ, որոնք իրենց եռանդուն գործունէութեան շնորհիւ կարողանում են գոնէ քիչ-շատ շօշափելի օգուտներ տալ:

Ահա այդպիսի ընկերութիւնների շարքում առաջնակարգ և պատկառելի տեղ են բռնում հետեւեալները. —

Ա.

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(Պատ. համառօտ տկնաբկ)

1892—1918

Սա իր եռանդուն գործունէութեամբ և վե՛հ նպատակով նշանակալից դեր է խաղում Ջուղահայ ժողովրդի կեանքում և ունի 26 տարւոյ պատմութիւն: Տանք այստեղ այդ ընկերութեան գործունէութեան պատմութիւնը համառօտակի ընդգծումներով:

Ա. Շրջան 1892—1908 թ.

Ընկերութիւնը և իր հաստատութիւնները գտնւում են թեմակալ առաջնորդի անմիջական հսկողութեան և հովանաւորութեան ներքոյ: Հիմնւել է 1892 թւին, Նոր-Ջուղայեցի մի համեստ ուսուցիչ՝ Յովսէփ Բարսեղեանի և Ս. Կատարինեան օրիորդաց դպրոցի բարձր դասարանի աշակերտուհիների նախաձեռնութեամբ, որոնք տեսնելով, որ բազմաթիւ աշակերտուհիներ զուրկ են թէ՛ հագուստից և թէ՛ դասական պիտոյքներից, կազմում են մի ընկերութիւն և մի որոշ գումար հաւաքելով, սկսում են նիւթեր տռնել, զանազան տեսակի ձեռագործներ պատրաստել, վաճառել և գոյացած հասոյթով որբ, չքաւոր աշակերտուհիների համար հագուստ և դասական պիտոյքներ գնել: Այսպէս աշակերտու-

Հիններն իրենց ուսուցչի առաջնորդութեամբ, 1892 թւին կազմում են սոյն ընկերութիւնը Ռբուհեաց խնամակալ ընկերութիւն անունով: Այնուհետեւ ընկերութեան գործոն մասնակցութիւն ցոյց են տալիս գրոսի կանանցից և օրիորդներից շատերը, որով ընկերութիւնն աւելի է ընդարձակւում և դրւում աւելի որոշ Հիմունքների վրայ: Առաջին տարիներում ընկերութիւնը դրամի պակասութեան պատճառով նպաստում է միմիայն Ս. Կատարինեան օրիորդաց դպրոցին՝ տալով չքաւոր, աղքատ-աշակերտուհիներին հագուստ, դասական պիտույքներ: Այդ է միայն եղել 1892—97 տարւոյ նրա գործունէութիւնը, աւելին էլ նա չէր կարող անել, քանի որ դեռ նոր էր որոշ կազմակերպութեան բնուորութիւն ստացել և մանաւանդ նրա նիւթական պայմաններն էլ այնքան յաջող չէին: 1897 թւից սկսեալ ընկերութիւնը, բացի զբարոցական պիտույքներից, տալիս է 20—25 չքաւոր երեխաներին, Ձատկական կամ Ծննդեան տօներին զգեստ կամ վերարկու: Այնուհետեւ, ընկերութիւնը, այգպէս մի քանի տարի էլ շարունակում է իր գործունէութիւնը մինչև 1900 թրւականը, երբ գրեց ստացւած նիւթական աջակցութիւնը նոր եռանդ է ներշնչում ընկերութեան ղեկավարներին և այնուհետեւ ընկերութիւնն աւելի հարստանալով և առաջագիմելով, մտածում է անդամուհիների ինքնակրթութեան մասին՝ բերել է տալիս ընթերցանութեան գրքեր և մի քանի պարբերական հրատարակութիւններ՝ «Իրօշակ», «Արմէնիա», «Աղբիւր-տարագ» և այլն: Յաջորդ 1901 տարւոյ շրջանի սկզբում, ընկերութիւնը մի քաջ առաջ է դնում, կարիք է գգացւում ընդարձակելու ընկերութեան ծրագիր-կանոնագիրը և գործունէութեան շրջանը: այդ նպատակով ընկերութիւնը կուսանոցից փոխադրւում է նորակառուց «Ս. Կատարինեան» օրիորդաց դպրոցը, ընթրւում է մի նոր մասնախումբ և փոխ-տեսուչ պ. Գաբրիէլ Պապեանի ու վարչու-

թեան անդամների նախաձեռնութեամբ մշակւում է մի նոր և աւելի ընդարձակ կանոնադրութիւն, ընկերութիւնն ևս կոչւում է այնուհետեւ Նոր-Ջուղայի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն: Այդ կանոնադրութիւնը հաստատւում է թեմիս առաջնորդ Մաղաքիա եպիս. Տէրունեանի կողմից և ընկերութիւնն այնուհետեւ իր գործունէութիւնը շարունակում է այդ կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, որը շարունակւում է մինչև այսօր, ենթարկւելով միայն մի քանի որոշ փոփոխութիւնների:

Ահա այդ կանոնադրութեան էական մասերը.—

1. Ընկերութեան նպատակն է նպաստել լուսաւորութեան տարածմանը հայերի մէջ. Նոր-Ջուղայում, իսկ միջոցները ներկիս՝ նաև շրջակայ գաւառներում և գիւղերում:

2. Աոյն նպատակին հասնելու համար, ընկերութիւնն րոտ իր ոյժերի զարգացման՝

Ա. Պահպանում է գոյութիւն ունեցող Հայոց ազգային երկսեռ դպրոցները, նիւթապէս նպաստելով նրանց:

Բ. Բացում է արհեստագիտական դործարաններ Նոր-Ջուղայում:

Գ. Սգնում է չքաւոր աշակերտութեան ուսման ընթացքում, կամ ուսումն շարունակելու՝ նրանց, որոնք ապագայում ուսուցչական պաշտօն պիտի վարեն ընկերութեան օժանդակութեամբ կամ հովանաւորութեան ներքոյ գտնուող դպրոցներում:

Դ. Հիմնում է ընթերցարան-գրադարաններ:

Ե. Սգնում է տառապեալներին ժողովրդական թշուաութիւնների ժամանակ, որպիսիք են՝ սով, տարափոխիկ հիւանդութիւններ, ախտ և այլն:

Զ. Գաւառների կամ գիւղերի լուսաւորութեան դործին նպաստելու նպատակով, Ընկերութիւնն օրդեգիրներ կամ օրդեգրուհիներ է զետեղում Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան Հոգեւոր դպրանոցում կամ Ս. Կատարինեան Որբանոցում: Այդ սան-սանուհիները պէտք է լինեն Նոր-Ջուղայեցիներ կամ գաւառացիներ և ընկերութեան խնամքը կը վստիւն այն պայմանով, որ ուսման ընթացքն աւարտելուց յետոյ ուսուցչական կամ հոգեւոր կոչումն ընդունեն՝ իրենց

ընադաւառում գործելու համար:

Է. Կարեւոր դէպքերում, եթէ ի վիճակի է, նպաստում է և այլ ազգայնական և բարենպաստական ընկերութիւններին:

Այսպէս ընկերութեան ղեկավարները հաստատուն հիմքերի վրայ են գնում գործը և աւելի ընդլայնում իրենց գործունէութեան շրջանը: 1902 թւին ընկերութիւնը կարիք է զգում բանալ կար ու ձեռք արհեստանոց, ուր անդամուհիները դրսից աշակերտուհիներ հաւաքելով, ձեռագործ են սովորեցնում և գրանով նպաստում մի կողմից աշակերտուհիների առաջագիմութեանը և միւս կողմից զարկ են տալիս ընկերութեան տնտեսական զարգացմանը:

Նոյն՝ 1902 թւին՝ Ազգ. երկսեռ դպրոցների Հոգեբարձութեանը փոխադարձ համաձայնութեամբ Ս. Կատարինեան Օրիորդաց դպրոցի ձեռագործի ճիւղն լանձնուում է ընկերութեան իրաւասութեան. մատակարարելու աշակերտուհիներին հարկաւոր նիւթերը և հսկելու նրանց գործունէութեան վրայ, որ շարունակուում է մինչև այսօր: Պատրաստուած ձեռագործները պատկանում են ընկերութեանը, որ վաճառում են հանգէսների, ներկայացումների և վիճակախաղերի ժամանակ: Պէտք է անել, որ այդ գործը զրուած է կանոնաւոր հիմքերի վրայ և առաջ է տարւում շատ գոհացուցիչ կերպով:

Յաջորդ 1903 թւին ընկերութիւնը նկատելով, որ շրջանին բազմաթիւ հալ գիւղերի գիւղացիութիւնը խորհուրդում է խոր ագիտութեան մէջ և մանաւանդ լատկապէս աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ այդ տեսակետից իգական սեռի կրթութիւնը շատ մնաց մի պատկեր է ներկայացնում՝ սրտում է, և իրան նպատակ դնում, իր բարոյական և նիւթական կարողութեան չափով նպաստել կրթական գործի առաջագիմութեանը:

Ահա այս շատ կարեւոր գործն ի նկատի ունենալով՝ ընկերութիւնը 1903 թւին որոշում է Փէրիս գաւառի Սան-

գիբարան գիւղում բաց անել օրիորդաց մի դպրոց, բայց ուսուցչուհու բացակայութեան պատճառով, նա իր այդ նպատակն իրագործում է 1904 թւականին. ինչեւայ գիւղում ուղարկում է մի վարժուհի, հոգալով նրա տարեկան ուսմանը 100 թուման: Այնուհետև ամեն տարի վարչութիւնը հոգում է մի գիւղական վարժուհու ուսման 60—100 թուման վրձարով: Բացի ուսմանից մի տարի էլ նա ուղարկել է չքաւոր աշակերտուհիների համար երկու թօփ համազգեստի կտոր և մի սարք քարգախ և դասական պիտույքներ:

Այսպիսով ընկերութիւնն իր գործունէութեան շրջանը սկսում է նաև գիւղերում:

1905 թւին ընկերութիւնը ձեռնարկում է երեկոյթներ կազմակերպումների և այնուհետև առնուազն տարին 2-3 անգամ ներկայացումներ է տալիս, յօգուտ կամ ընկերութեան կամ որբանոցի:

1906 թւին բաց է անում՝ մի խանութ կենդրոնական դպրոցի կից, ուր վաճառուում են զանազան ապրանքներ և ընկերութեան դպրոցում պատրաստած ձեռագործները, բացի այդ ընդունում է պատուէրներ շորեր կարելու: Այնուհետև ընկերութեան վարչութիւնն իր գործունէութիւնը շարունակում է նոյն ուղղութեամբ, մինչև 1908 թւականը: 1908 թւին, վարչութիւնը ներկայացնելով ընկերութեան անդամուհիներին — ընդհ. ժողովում-իր գործունէութեան տեղեկագիրը՝ հրաժարուում է:

Ահա այս է ընկերութեան Ա. շրջանի գործունէութեան էական զճերը:

Բ. Շրջան 1908—1913 թ.

Բացում է 1908 թւի շրջանը: Ընտրւում է մի նոր վարչութիւն, բաղկացած չորս հոգուց. — տ. Թագուհի Կարապետեան՝ նախագահ, տ. Ծաղիկ Աբգարեան՝ քարտուղար,

տ. Ծաղիկ Յարութիւնեան՝ զանձապահ, օր. Մարիամ Յարութիւնեան խորհրդակից անգամ: Վարչութիւնը պաշտօնի զլուխ անցնելով, Ա. Կատարինեան Օրիորդաց դպրոցի 50-ամեայ յօբելեանի առթիւ շրջում է Զուգայի բոլոր տները և հանգանակում մօտաւորապէս 1000 թումանի մի գումար, յօգուտ նոյն դպրոցի «անձեռնմխելի» ֆօնդին: Ապա իր վրայ է վերցնում Ազգ. երկսեռ դպրոցների չքաւոր աշակերտաշակերտութիւնների ճաշարանի ծախքերի հոգացողութեան գործը, նոյնպէս և հերթով հսկելու պարտականութիւնը:

Այնուհետեւ ընկերութիւնն ի նկատի առնելով զբաղարան-ընթերցարանի օգտակարութիւնն ու անհրաժեշտութիւնը և ընդհանրապէս իգական սեռի մէջ ընթերցանութեան բացակայութիւնը՝ յատկապէս կանանց և օրիորդների մօտաւոր և բարոյական զարգացմանը նպաստելու համար, 1909 Սեպտեմբերի 13-ին հ. Բագրատ վարդ. Վարդապետեանի նախաձեռնութեամբ բաց է անում արհեստանոցի մի բաժանմունքում մի «ընթերցարան», նախաձեռնող «Իգմիրլեան» կաթողիկոսի լիշատակին, որի կառավարչի և զբաղարանապետի պաշտօնը լանձնում է նախ՝ օր. Վարդուհի Խաչիկեանին՝ և ապա օր. Եղիաբեկ Բարայէլեանին: Այժմ ընթերցարանն ունի մօտ 250 հասար գիրք և ստանում է մի քանի պարբերական հրատարակութիւններ:

Որպէսզի ընկերութեան համար եկամուտի մի նոր աղբիւր ևս աւելացի, բաց է անում զգեստ կտրելու բաժանմունք, որի համար վարձւում է մի կար անոց օրիորդ: Այսպէս ընկերութիւնը մի կողմից ձգտում է աւելի ընդլայնել իր գործունէութիւնը, միւս կողմից աշխատում է զարկ տալ տնտեսականին, որպէսզի կարողանայ աւելի ամուր և հաստատուն հիմունքների վրայ դնել իր ձեռնարկութիւնները: Այդ նպատակով նա ձգտում է իր մօտ եղած 1000 թումանի զբաղմունքով Փէրիտ գուլտուի նամակերտ գիւղից մի յարմար

կալածք գնել, բայց այդ չի աջողւում, ուստի սոյն գրամագլուխը ապահովեցնում է Ռուսաց փոխտու բանքումը, չորս տարով և հարելին՝ վեց տոկոսով:

Այնուհետեւ ընկերութեան խանութը, որ առաջ գտնւում էր Ս. Կատարինեան Օրիորդաց դպրոցում, յարմար է համարում՝ Սրբազան Սահակ արք. եպիսկոպոսի հրամանով տեղափոխել զբաղմունքների կից սենեակը: Այդպիսով ընկերութիւնն ընդարձակում է իր խանութը և աւելի արդիւնք ստանում, ի հարկէ համեմատած նախկին տարիների:

Ինչպէս անցեալում, նոյնպէս էլ այս 1908—13 ուսումն. տար. շրջանում, ընկերութիւնը Ս. Կատարինեան Օրիորդաց դպրոցի չքաւոր աղջիկներին տալիս է 150—200 թումանի դասագրքեր և ուսման պիտոյքներ: Բացի այդ, բաժանում է բրդեայ կտորից ձեռք շապկացուներ, համազգեստի կտոր և կօշիկներ: Նոյնպէս գիւղի համար ուղարկում է մի վարժուհի և Բուրբան գիւղի չքաւոր աշակերտութիւնների համար համազգեստ և նամակերդի դպրոցի համար քարգախ:

Նոյն 1908—13 տար. շրջանին ընկերութիւնն Ազգ. երկսեռ դպրոցների ուսուցչական խմբի և սիրողների բարեհաճ մասնակցութեամբ տալիս է երկու ներկայացում, ունենում է երեք անգամ բուֆէտ և չորս անգամ վիճակախաղ:

Ընկ. 1908—13 տարեշրջանի տնտեսական պատկերը կազմում է՝

Ռուսաց բանքում	.	.	.	1000	թուման
Խանութի պատրաստ ապրանք	.	.	.	920	»
Կահ-կարասիք և նիւթեր	.	.	.	80	»
Ընդամենը				2,000	»

Ահա ընկերութեան վարչութեան Բ. շրջանի գործունէութեան պատկերը:

Գ. Շրջան 1913—1917 թ.

1913 թվին ընտրուում է մի նոր վարչութիւն, բաղկացած հինգ հոգուց. — տ. Ծաղիկ Դուքուրեան՝ նախագահ, տ. Ծաղիկ Աբգարեան՝ քարտուղար, տ. Վարդուհի Գալթեան՝ գանձապահ, օր. Եղիսարեթ Իսրայէլեան՝ Գորգագործարանի և Որբանոցի կառավարիչ, օր. Աշխէն Գալթեան՝ խորհրդակից անդամ: Վարչութիւնն անցնելով գործի՝ 1913 թվին Նոր-Ջուղայի Ազգ. թատրոնի յօբելեանական հանգէսի առթիւ նւիրում է 655 ղուանի արժողութեամբ զգեստներ:

Յաջորդ 1914 Փետր. 6-ին, Առաջնորդական Խորհրդարանը լանձնում է Ս. Կատարինեան Գորգագործարանի և Ազգ. Որբանոցի կառավարութեան գործը: Որբանոցի համար, վարչութիւնը խմբագրում է և տպագրել տալիս մի կանոնադրութիւն, որի համաձայն ղեկավարւելու են որբանոցի սանուհիները: Եւ որպէսզի Որբանոցի նիւթական պայմանները հաստատուն հիմքերի վրայ դրւին՝ Առաջնորդական Խորհրդարանի հետ համաձայնութեան գալով, որբանոցի 400 թուման անձեռնմխելի գրամագրութիւն վերածելով անգլիական դրամի փոխադրում է Լօնդոն, անգլիական կառավարութեան բանքն, աւելի տոկոս ստանալու նպատակով: Բացի այդ 1914 թվին, վարչութիւնը 1170 թուման գրամագրութիւնով Վարդուն գիւղից մի կալուած է առնում, որից ստանում է տարեկան 6 խալվար ցորեն:

Ինչպէս ամեն տարի, նոյնպէս էլ 1913—17 ուսումն. տարեշրջանում վարչութիւնը հոգում է չքաւոր աշակերտուհիների դպրոցական պիտոյքները, տրամադրելով 900 ղուանի չափ մի գումար: Կազմակերպում է նոյնպէս երեկոյթներ և ներկայացումներ և ակտիւ գործունէութիւն է ցոյց տալիս հասարակական նպատակներով կազմակերպւող ներկայացումներին և որից ստացւած գումարի մեծ մասը յատկացնում է Որբանոցին կամ ընկերութեան:

Վրայ է հասնում 1916 թվականը: Այդ այն տարին էր, երբ շրջանիս գիւղացիութիւնը տնքում էր աւազակ վանդաւների ձեռքում, որոնք անվերջ հարստահարում, կեղեքում և քայքայում էին աշխատաւոր գիւղացիութեան, սպառնալով նոյնիսկ նրա ֆիզիքական գոյութեանը: Ահա այդ տարին էր, որ Միլիներտ հայաբնակ գիւղն աւազակապետ Սալար-Մախսուտի հարստահարութեան և կեղեքումին զոհ գնաց: Գիւղացիութիւնը յուսահատ, թողնելով իր տունն ու տեղը, խափքն ու արօրը, սրտի անհուն կսկիծով փախչում էր դէպի Նոր-Ջուղա: *

Հարկաւոր էր շուտափոյթ օգնութեան հասնել այդ տարագիր ժողովրդին: Ահա այս տեղ ասպարէզ է գալիս ընկերութիւնը: Նա մի կոչով հրաւիրում է ժողովրդի ուշադրութիւնն այդ հանգամանքի վրայ, բայց ակնկալւած արգիւնքը չի ստանում: Այդ առթիւ ընկերութիւնը տալիս է իւր առաջ միջոցներից ինչ որ կարողանում է՝ վերմակներ, հագուստներ և փող: Այնքան մեծ չէր նրա տւածը, բայց խնդիրն այդ չէ, այլ նրա գիտակցութեան ոգին, նրա զգալու և օգնելու տենչը: Բացի այդ 1916 թվին, «Կարմիր խաչ» մասնակցութեամբ, Ռուսաց զօրքի համար պատրաստում է 320 կտոր սպիտակեղէն և նւիրում է նոյն զօրքի գործածութեան համար: Նոյն թվին Արժանապատիւ Տէր Եսայի քհնյ. Յովհաննիսեանի յօբելեանի առթիւ վարչութիւնը պարտք է համարում գնահատել յօբելեարին և այդ առթիւ նւիրում է մի արծաթեայ շրջանակ:

1917 ուսումն. տարւայ Մանկավարժական Խորհրդի նախաձեռնութեամբ բացւած «Ձրի ճաշարան»-ին նւիրում է մի խալվար ցորեն, նաև նոյն ճաշարանի օգտին բաց է անում ձեռագործարան: Իսկ Ծինդեան տօների առթիւ վարչութիւնն ընկերութեան գումարից, մօտ 160 թուման յատկացնում է

* Տես այս մասին իմ յօդւածը՝ «Բարբիկներ Ն.-Ջուղայից» վերնագրով «Քննիչ» 1916—17 տ. 272 և 56 խօսքում: Ղարաբաղ-Արամ կեղծ անունով:

Ջուղայի չքաւորներին բրինձ և ածուխ մատակարարելու համար: Ծիշտ է ընկերութիւնն իր նպատակներն իրագործելու համար ունեցել է կողմնակի նւէրներ և օժանդակութիւն, բայց նրա աղբիւրներն են եղել հանգէս-ներկայացումները, վիճակախաղերը, բիւֆէտ, ձեռագործերից գոյացւած եկամուտները և անգամուհինների վճարները:

1918 թւի վարչութիւնը վերամշակել է մի նոր կանոնադրութիւն և աշխատում է ընկերութեան ձեւեր հաստատել Հնդկաստանում և Զուլայում:

Եզրակացութիւն. Խնչպէս տեսանք ընկերութիւնն իր գործունէութիւնն սկսել է սովորաբար անգամուհիններով և մի աննշան դրամագլխով: Իսկ այժմ ունի խոշոր դրամագլուխ, թէև անգամուհինների թիւը 80-ի է հասնում, բայց մի հանգամանք, որ աչքի առաջ պէտք է ունենալ, այն է, որ գործող անգամուհինները կանայք և օրիորդներ են, որոնք մեծ չափով նպաստել են ընկերութեան առաջագիմութեանը, թէ նիւթապէս և թէ բարդապէս: Այդ անգամուհինների ջանքերի շնորհիւ է, որ ընկերութիւնը կանգնել է այսօր քիչ թէ շատ հաստատ հիմունքների վրայ և մեծ ծառայութիւն է մատուցանում Ջուղայի իգական սեռի առաջագիմութեան և գիւղերի լուսաւորութեան գործին: Բացի այդ ընկերութիւնն իր գործունէութեան ամբողջ ընթացքում իր միջոցները ներածին չափ օգնել է թէ Ջուղայի չքաւոր գասակարգին, թէ գիւղերի չքաւոր երեխաներին և թէ Հայաստանում պատահած դժբախտութիւնների ժամանակ: Նա գործել է մօմէնտի պահանջի համաձայն և չի խնայել իր աջակցութիւնը նիւթական նպատակներով: Այսպէս, ի նկատի ունենալով սոյն ընկերութեան կատարած մեծ դերը՝ ցանկալի էր, որ Ջուղահայ իգական սեռն աւելի լայն և գործօն մասնակցութիւն ցոյց տար՝ ընկերութիւնն աւելի հաստատ հիմքերի վրայ դնելու համար, որ իսկապէս արժանի է մեծ խը-

րախուսանքի և ամեն տեսակ քաջալերութեան:

Ահա այս է «Նոր-Ջուղայի Հայունեաց Բարեգործական Ընկերութեան» 26 տարւայ համառօտ պատմութիւնը:

Բ.

ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Նոր-Ջուղայում գոյութիւն ունեցող բարեգործական ընկերութիւնների շարքում ուշագրաւ տեղ է բռնում նաև «Աղքատախումբ Ընկերութիւնը», որ իր բարի նպատակով մեծ դեր է խաղում Ջուղահայերի ցառոտ կեանքում:

Ընկերութիւնն օգնում է Ջուղայի չքաւոր և կարօտեալ ընտանիքներին, սահմանելով նրանց տարեկան մի որոշ գումար, որը ստանում են՝ ամսէ-ամիս: Բացի դրանից ընկերութիւնն իւրաքանչիւր ձմեռ բաժանում է չքաւորներին ածուխ, իսկ գալոցական չքաւոր աշակերտ-աշակերտուհիներին՝ հագուստ:

Ընկերութիւնն իր այս նպատակը իրագործելու համար, ունի եկամուտի աղբիւրներ: Այսպէս ստանում է Կալկաթայից 1460 ղաան, Բատաւիայից 6700 ղաան, Յովսէփ Պօղոս-խանեան կոսակից 7400 ղաան, Մարտիրոս Գաւթիսանեանի գումարից 450 ղաան, և ուրիշ նւէրներ ու հանգանակութիւններ:

Վարչութեան անդամներն են՝ Վարդան քհնյ. Վարդանեան, Համբարձում քհնյ. Վարդանեան, և Գարեգին քհնյ. Կիրակոսեան:

Ընկերութիւնն օգնում է այժմ 140 ընտանիքի:

Գ.

ՀԱՅՈՅ ԱՐԱՆՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Ուշագրութեան արժանի է նաև Նոր-Ջուղայում գոյութիւն ունեցող բարեգործական ընկերութիւնների շարքում

«Արանց Բարեգործական Ընկերութիւնը», որի հիմքը դրւել է 1914 Մարտ 13/26-ին. մի քանի անձերի նախաձեռնութեամբ Ընկերութիւնը նպատակ ունի.

Ա. Նիւթական օգնութիւն հասցնել Նոր-Ջուղայի չքաւոր ազգաբնակիւթեան, կարիք ունեցող աշակերտ-աշուկերուն հիներին:

Բ. Նպաստել կրթութեան զարգացման Նոր-Ջուղայում, իսկ ապագային միջոցները՝ ներսւմ հանգամանքում նաև՝ գիւղերում:

Գ. Տարածել գիւղատնտեսական գիտելիքներ, բերել տալ այդ ճիւղի վերաբերեալ գրքեր, թերթեր և տրամեր՝ գիւղերում ցրւելու համար. և գիւղացիներին զործնականապէս ծանօթացնելու համար երկրագործական և գիւղատնտեսական նորագոյն ձևերի հետ, բերել տալ նաև գիւղատնտեսական գործիքներ ելիէ դրամական միջոցները ներկն:

Ահա այս է Նոր-Ջուղայի «Արանց Ընկերութեան» նպատակը:

Ինչպէս տեսնում ենք՝ նրա նպատակը շատ համակրելի է և օգտակար: Համակրելի է մանաւանդ այն տեսակէտից, որ նա իր նպատակի մէջ աւելի լայն տեղ է տալիս գիւղին և գիւղացիութեան, որն իսկապէս կարօտ է ամեն տեսակ աջակցութեան:

Այսպէս ի նկատի ունենալով նրա կատարելիք ահագին դերը Ջուղահայերի և գիւղացիութեան կեանքում, ցանկալի էր, որ այդ Ընկերութիւնն աւելի ու աւելի ծաւալ ստանար և դրէր աւելի հաստատուն և կանոնաւոր հիմքերի վրայ, իր ընդգրկած նպատակին արժանաւորապէս ծառայելու համար:

Դ.

Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԸ

Նոր-Ջուղայում բարեգործական հաստատութիւնների շարքում կայ մի հաստատութիւն ևս, որ բաւական օգուտ

է տալիս թէ նիւթապէս և թէ բարոյապէս իգական սեռի չքաւոր դասակարգին. դա «Ս. Կատարինեան Արհեստանոցն» է, որ հիմնւած է 1901 թւին, Նոր-Ջուղայի Ս. Կատարինեան Մենաստանում և գտնւում է թեմակալ Առաջնորդի հովանաւորութեան և Հայուհեաց բարեգործական ընկերութեան վարչութեան հսկողութեան ներքոյ:

Արհեստանոցի նպատակն շատ համակրելի է. տարածել Նոր-Ջուղայի օրիորդների և կանանց մէջ օգտուէտ արհեստներ, որպէսզի դրանով միջոց տրւի իգական սեռից շատերին (մանաւանդ չքաւոր և աղքատ դասակարգին) աղնիւ աշխատանքով հայթալթելու իրենց օրական պարէնը:

Արհեստանոցը յատկապէս մեծ ուշադրութիւն է դարձնում գորգագործութեան վրայ, զարգացնելով և ընդարձակելով տնայնագործութեան այս օգտակար ճիւղը հայոց մէջ:

Արհեստանոցի գորգագործարանը 1903—1907 տարեշրջանում գործել է 141 հատ զանազան մեծութեամբ գորգեր և 20—25 քառակուսի գազ մեծութեամբ ավտոնի և բարձի երեսներ: Պատրաստել է նաև մասնաւոր պատուէրով մի քանի մեծ գորգեր, հին ծաղկանկարներով Լօնդոն ուղարկելու համար: Գորգագործարանն այժմ ունի 20 գործիքներ և աշխատում են 25-ից աւելի հայ օրիորդներ:

Արհեստանոցի եկամուտներն են կազմում. —

Ա. Ջուղայի, Հնդկաստանի և այլ տեղերի եկեղեցիներից և բարեգործական հաստատութիւններից օժանդակութիւն:

Բ. Բարերար ազգայիններից կամաւոր ներատուութիւն:

Գ. Արհեստանոցի գործաւորներից գոյացած դումար-բներ և այլն:

Ե.

ԿԱՆԱՆՑ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Նոր-Ջուղայում գոյութիւն ունի նաև «Կանանց կարմիր Խաչի միւսիւնը», որը թէև անգամուհինների թւով սակաւ-

Թիւ է և ունի ամբողջ հինգ տարւոյ կեանք սակայն օրէց-
օր աւելի և աւելի առաջաւոր տեղ է գրաւում և նշանա-
կալի գեր խաղում Զուգահայ իգական սեռի մտաւոր զար-
գացման կեանքում:

Այդ ընկերութեան գլխաւոր նպատակն է՝

Ա. Նպատակ տեղիս իգական սեռի կրթական գործի
առաջադիմութեանը: Մշակել անդամուհիների միտքը, ազնը-
ւացնել նրանց տիմպերամէնտը, կուսկով սխալաստիկ հասկա-
ցողութիւնների դէմ:

Բ. Ոգնել պատերազմում նահատակւած ընկերների կա-
րօտ այրիներին ու որբերին, վիրաւորներին:

Գ. Միութիւնն իր այս նպատակն իրագործելու հա-
մար սարքում է գրական երկնայթեր, կազմում հանգստա-
կութիւն և վիճակախաղեր:

Դ. Միութեան անդամուհիների թիւը կարող է լինել
սահմանափակ՝ նրանք բաժանուում են երկու կարգի՝ գործօն
և օժանդակ:

Ահա «Վարմիր խաչի միութեան» ծրագրի էական գծերը:
Միութիւնն ունի իր հաւաքատեղին ուր ամեն երկուշաբ-
թի հաւաքում են, կազմակերպում պարբերական դաստիո-
սութիւններ, զանազան հետաքրքիր և օգտակար նիւթերի
մասին, ինչպէս կրթական, բարոյական, զբաղման, ազգային,
հասարակական և այլն:

Ստոյգ է, նրանք անցել են բազմապիսի դժարութիւն-
ներից, բայց հակառակ այդպիսի բարդ հանգամանքների,
հայրենիքը, առանց յուսահատութեան, մեծ եռանդով շա-
բունակում են իրենց գործունէութիւնը և ձգտում գէպի
մտաւոր և բարոյական խառնադիմութիւն:

Թէ որպէս է գործում այդ միութիւնը երևում է հե-
տեւեալ պատկերից:

«Հարիզոն»-ի խմբագրութեանն ուղարկել են՝

1915 թ. հայ կամաւորների օգտին 511 ր. 83 կ.

1915 թ. » » » 663 դառն,

1916 թ. գաղթական որբիկների օգտին 200 ր.

1917 թ. սպանած կամաւորների ընտանիքներին 200 ր.

1917 թ. Ռուսաց զինւորների համար 95 թուման.

1917. Միլիտերտի գաղթական գիւղացութեան 50 ր.

Այսպէս ի նկատի ունենալով Նոր Զուգայի կանանց
«Վարմիր խաչի միութեան» գործունէութիւնը, իսկապէս ար-
ժանի է այդ միութիւնն ամեն տեսակ գնահատութեան:

Այժմ նրանք ստանում են «Արև», «Հարիզոն», «Աղբիւր-
տարազ», «Թատրոն և երաժշտութիւն», «Համբաւաբեր» պար-
բերական հրատարակութիւնները, որոնցից շատերը նւէր-
ներ են:

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆՆԵՐԸ

«Կարդալն աղօթել է»

Ընթերցանութիւնը Ջուղահայերի մէջ տարածւած չէ, այդ տեսակէտից պատկերը մօռյալ տեսարան է ներկայացնում և դա հասկանալի պատճառով, որովհետեւ ժողովրդի մեծամասնութիւնը գեռ խորխափում է խոր տգիտութեան մէջ, բայց չնայած դրան, Նոր-Ջուղայում կան մի քանի գրադարան-ընթերցարաններ, որոնք հիմնւել են մի քանի ինտելիգէնտ երիտասարդների նախաձեռնութեամբ և մեծ դեր են խաղում Ջուղահայ ժողովրդի մտաւոր և բարոյական զարգացման գործում: Տանք այստեղ նրանց համառօտ պատկերները:

Ա.

ԻԱՖՖԻ ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ

Նոր-Ջուղայում գոյութիւն ունեցող գրադարան-ընթերցարանների շարքում առաջնակարգ տեղ է բռնում ժողովրդական «Իաֆֆի» գրադարան-ընթերցարանը: Իա 1886 թվականին հիմնւած «Մեսրոպեան» գրադարան-ընթերցարան է, որ այսօր «Իաֆֆի» անունն է կրում: Պահպանում է իր գոյութիւնը տեղիս հասարակութեան օժանդակութեամբ և ներկայացումների ու հանդէսների հասոյթով: Գրադարանի գրքերի թիւն է հայերէն՝ 640 կտոր, օտար լեզուներով՝ 200 կտոր:

Հայ պարբերական թերթերից ստանում է՝ «Արև», «Հորիզոն», «Աշխատանք», «Հայաստան», «Ժայռ», «Համբաւաբեր», «Աշխատաւոր», «Մշակ», «Աղբիւր—Տարազ» և այլն:

Ընթերցարանը բաց է համարեա ամեն օր, կէսօրից յետոյ՝ ժամը 3, 4—6, 7:

Բ.

ԵՐԿՈՒՆՔ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Ուշադրութեան արժանի է նաեւ «Երկունք գրադարանը»: Հիմնւել է 1910 թ. Մարտ 16-ին մի քանի երիտասարդների նախաձեռնութեամբ: Նրանք նպատակ են դրել ընթերցանութիւն տարածել և նպաստել Ջուղահայ ազգաբնակչութեան մտաւոր զարգացմանը: Սկզբնական շրջանում գրադարանն ունեցել է շատ աննշան քանակութեամբ գրքեր, բայց վարչութեան ջանքերի շնորհիւ հետզհետէ գրքերն աւելանում և կանոնաւորւում են: Գրադարանն այժմ ունի 500 կտոր հայերէն գիրք, և 60՝ օտար լեզուներով: Գրտնւած գրքերի մէջ պատմա-սօցիալական, լեզուաբանական և հասարակական գրւածքներն իրենց քանակութեամբ առաջին տեղն են բռնում: Պարբերական հրատարակութիւններն երկրորդ տեղ: Կան նաեւ չնչին տոկոսով վիպական, գիտական, բանաստեղծական, թատերական, քննադատական, կենսագրական գրւածքներ: Գրադարանից օգտւողների ամենամեծ տոկոսը, գրեթէ կէսից աւելին կազմում են դպրոց աւարտած պատանիները, ապա ուսուցիչ-ուսուցչուհիները և արհեստավարները: Հասարակութիւնը շատ չի օգտւում և դա հասկանալի պատճառով, որովհետեւ նրա մէջ գեռ չէ արթնացած ընթերցանութեան սէրը:

Գրադարանն իր գոյութիւնը պահպանում է գլխաւորապէս տրւած ներկայացումների և հանդէսների հասոյթով: Գրադարանն ձրի է և օգտւելու իրաւունք ունեն բոլորը: Ուրախութեամբ պիտի ասել, որ Գրադարանի վարչութիւնը վերջին երեք տարիները ոչ մի ջանք չէ խնայում գրադարանի կանոնաւորութեան համար: Նա ամէն կերպ աշխատում է նոր գրքեր և հրատարակութիւններ ձեռք բերել:

Գ.

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ

Նոր-Ջուղայում ուշագրաւ տեղ է բռնում նաև Ազգային երկսեռ դպրոցների «Կենտրոնական գրավաճառանոցը», որ գտնւում է հոգևոր Իշխանութեան և դպրոցական Հոգաբարձութեան հսկողութեան և կառավարութեան տակ:

Հիմնւել է 1893 թւին առաջնորդ Եսայի Արքեպիսկոպոս Աստուածատրեանի նախաձեռնութեամբ: Սկզբում գրավաճառանոցը հաստատւում է Կենտրոնական դպրոցում, ապա տեղի անյարմարութեան պատճառով 1905 թւին տեղափոխւում Գ. Քանանեան դպրոցի կից ընդարձակ խանութք: Վերջապէս 1908 թւին, Անգլ. փոխ-հիւպատոս Մ. Աղանուրն ի յիշատակ իր քրոջ՝ տ. Լուիզա Ս. Դաւիթխանեանցի, Կենդրոնական դպրոցին կից կառուցանում է երկյարկանի մի շինութիւն, որի մի մասը յատկացրւում է գրավաճառանոցին: Այդտեղ կարելի է գտնել հայոց լեզուի, Անգլերէնի, թւաբանութեան, ընդհանուր և հայոց պատմութեան դասագրքեր և ամեն տեսակ դասական պիտոյքներ:

Գրավաճառանոցն իր գոյութեան օրից՝ մեծ ծառայութիւն է մատուցել և մատուցանում է թէ՛ Նոր-Ջուղայի մզգ. երկսեռ դպրոցների և թէ՛ գիւղական դպրոցների աշակերտութեան:

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԼՐԱԲԵՐԸ

(Պատմական ակնարկ)

1904 — 1908

ՆԵՐԱԾՈՒՐԻՆ

90-ական թւականների սկզբում Ջուղահայ գրական-կուլտուրական կեանքն սկսում է կենդանութեան նշաններ ցոյց տալ: 1904 Յունւար 1-ին Ջուղահայ հորիզոնի վրայ բացւում է մտաւոր վերածնութեան և հայ լրագրութեան պատմութեան համար մի նոր արշալոյս, որովհետեւ այդ ժամանակ է ծնունդ առնում մի նշանաւոր ձեռնարկութիւն, որը Ջուղայի ժամանակակից թանձր խաւարի մէջ փայլում է որպէս մի լուսատու աստղ: Այդ օրը, սրանից ուղիղ տասն և չորս տարի առաջ՝ հ. Բագրատ վարդապ. Վարդազարեանը հիմնում է Նոր-Ջուղայի Լրաբեր ամսաթերթը, որ տպւում է Ս. Ամենափրկչեան վանքում, որով և սկիզբ է առնում մի նոր շրջան: Այդ Լրաբերը նշանաւոր է, իբրեւ առաջին լրագիրը Ջուղահայերի մէջ:

Նպատակը: Լրաբերի գլխաւոր նպատակն է հրատարակել պարսկաստանի հոգևոր իշխանութեան կարգադրութիւնները, այլև ազգային, եկեղեցական-կրօնական, կրթական, բարեգործական հաստատութիւնների մասին՝ նրանց տեղեկագիրն ու հաշիւները և ընդհանրապէս Նոր-Ջուղայի հայ ժողովրդի ու մասնաւորապէս շրջանիս գիւղերի գրութեան մասին և ուրիշ յարմար յօդաձևեր ժողովրդական ընթերցանութեան համար: Ահա Լրաբերի գլխաւոր նպատակը:

Խմբագիր-հրատարակիչը: Երբ Բագրատ վարդ. Վարդազարեանն սկսեց հրատարակել Նոր-Ջուղայի Լրաբերը, նա օժտւած էր խմբագիր-հրատարակչի տաղանդով: Այդ վեհ կոչման արժանաւորապէս ծառայելու համար նա ունէր նա-

խապատրաստութիւն, բազմակողմանի զիտութիւն, ծանօթ էր ֆրանսերէն, Ռուսերէն լեզուներին: Այս մտաւոր հարուստ պաշարի հետ, նա միացրել էր նաև երկաթէ կամք, անկուն ոգի և հաստատամտութիւն: Այդ ամենն ունէր Բագրատ վարդապետն: Միայն հազաւակաւ հոգևորականներից է, որ կարճես կոչւած է ծառայելու հայ ժողովրդին: Նա մի մխիթարական բացառութիւն է հայկական տխուր իրականութեան մէջ: Ահա այդպիսի յատկութիւններով օժտւած հրատարակչի խմբագրութեամբ է, որ ասպարէզ է գալիս Լրաբեր:

Ն.-Ջ. Լրաբեր Բովանդակութեան կողմից: Լրաբեր բաւական ճախ է բովանդակութեան կողմից: Բաղկացած է 4 6 մեծագիր էջերից: Սկզբում հրատարակւում է ամիսը մի անգամ, իսկ 1905 Ապրիլ ամսից յետոյ դառնում երկամսեայ: Հրատարակելով Լրաբեր դառնում է Ջուղա հայ ժողովրդի զգացմունքների միակ արտայայտիչը: Նրա գրօշի շուրջ համախմբւում են անմիջապէս ժամանակի նորագոյն իդէալներով սնած և առաջադէմ գաղափարներով համակւած ինտելիգենտ ոյժերը, որոնք հրապարակի վրայ գնում են մի շարք հասարակական, բնտանեկան, գրական, կրթական և այլն խնդիրներ: Այստեղ դուք կրտեսնէք նաև Ջուղա հայ կինը, որ դուրս գալով բնտանեկան նեղ շրջանից և արհամարելով ամէն տեսակ նախապաշարում՝ մասնակցում է ժամանակի կուլտուրական հոսանքին:

Լրաբերի ամենափայլուն բաժինը կազմում են խմբագրականները: Լուրջ, մտածւած, կենդանի, հմայիչ գունաւորումներով և խորունկ, անկեղծ զգացմունքով տոգորւած առաջնորդներ են դրանք, որ հմայում, ոգևորում են և կարգացողն առանձին հաճոյքով է թերթում այդ էջերը: Գրեթէ՝ ոչ մի գրւածք, ոչ մի կտոր, այնքան խոր ազդեցութիւն չի թողնում ընթերցողի վրայ, որքան այդ վարդապետի

վառվառն, անկեղծ ոգով տոգորւած յօդւածները: Բաց արէք օրգանը, շրջեցէք թերթիկները և ահա նրանք շարան-շարան կը պատկերացնեն ձեր առաջ՝ «Նոր տարւայ առթիւ», «Մեր գաղութների վիճակը», «Քրիստոս յարեալ է մեռելոց», «Զբսփովենք անցեալով», «Հայոց տառերի գիւտի 1500-ամեակի առթիւ», «Խօսքերան տարածւում է, պատրաստ և զգուշ պիտի լինել», «Դժբախտ է գիւղացին», «Բարոյական հրէշներ շատ ունիք», «Յուսահատ մի թողէք թշւառներին», 1904 թ.: «Նոր տարւայ առթիւ», «Պէտք է շուտով օգնութեան հասնել մեր գիւղացիներին», «Ցաւալի է», «Ի՞նչ է պատճառը», «Առաջ և այժմ», «Արհամարում ենք...», «Պէտք է օգնել», «Ո՛րպիսի հակապատկեր», 1905 թ.: «Քննադատութիւնը թշնամութիւն է», «Պարսկա-Հնդկաստանի թեմի հայերն», «Քննադատութիւն, թէ թշնամութիւն», «Ի՞նչ կարող ենք անել», «Իրաւունքն ու պարտականութիւնը շաղկապւած են», «Ի՞նչ անուն տալ», «Պարսկաստանի ազգային ժողովը», «Արհեստագիտական դպրոց Նոր-Ջուղայում», 1906 թ.: «Պէտք չէ անտարբեր մնալ», «Վեհափառ Հայրիկը», «Երկաթուղու հարցը Պարսկաստանում», 1907 թ.: «Անպայման կ'տուժենք», «Մեր գիւղացիները», «Կացութիւնը ծանր է», «Գոհացուցիչ պատասխան չէ», «Զեզ ենք դիմում, յարգելի Ջուղայեցիներ», «Նոր-Ջուղայի Ս. Կատարինեան Ազգ. Օրինորդաց դպրոցի 50-ամեայ յօբելեանը», «Տաճկաստանի սահմանադրութեան առթիւ», «Անհրաժեշտ է», «Ապասում ենք», 1908 թ.:

Այս բոլորի մէջ կը նշմարէք դուք տաղանդաւոր վարդապետի ամբողջ աշխարհայեացքը, նրա առաջադէմ գաղափարներն ու ոգին: Նա հետևում է ժամանակակից կեանքի երեւոյթներին, մերկացնում մեր բարոյական ախտերը և կոչ է անում զէպի աշխատանք, զէպի ինքնաճանաչութիւն և ինքնաքննութիւն:

Այնուհետև լրաբերում առաջնակարգ տեղ է բռնում բա-
նասիրական բաժինը և կամ Ֆելիետոնը: Այդ տեղ դուք
կը գտնէք պատմական լուրջ ուսումնասիրութիւններ՝ «Ե.-րդ
դարու նշանակութիւնը մեր պատմութեան մեջ» — Ա. Ղազարեա-
նի. «Մեր 19-րդ դարու գրականութեան մասին» — Ռ. Քաջբերու-
նու. «Տպաւորութիւններ» — Ուստանովի. «Արձագանքներ» — Հը-
րանդ Փայեանի. «Դժեր» — Ա. Բէնի. «Աւակերտի յիշատակարա-
նից» — Հովսարի. «Կրթական գործը Սալմաստում» — Երանդ
Ֆրանգեանի. «Դիւղական ցաւերից» — Իրանցու: Կան նաև ար-
տատպումներ՝ «Հայդուկի նոր տարին» և «Արիւնոս քթմոր» —
Աւետիս Ահարոնեանի. «Զրոյցներ» — Վր. Փափազեանի:

Լրաբերի գլխավոր բաժիններից մէկն է նաև գիւղական աշխարհը: Հայ գիւղացու տունն ու տեղը, վարք ու բարքը, նախապաշարումները, սովորութիւնները, ուրախութիւններն ու վշտերը, խոշտանգումներն ու սարսափներն՝ իր հորստահարիչ, կեղեքող վանդալներով — բոլորը լուսանկարչական ճշտութեամբ անդրադառնում են թերթում: Թերթը լիքն է նաև Զուղահայ կեանքի բազմազան տեսարաններով: Զուղայցու տուն ու տեղը, նրա կեանքի զանազան ելևէջներն իր գրական ու բացասական կողմերով, թերթում հանդէս են գալիս:

Աչքի է ընկնում նաև քննադատական բաժինը, որի մէջ անդրադառնում է ժամանակակից Զուղաճայ հասարակական կեանքի մի տխուր էջը: Քննադատութիւնն այդտեղ լուրջ կերպով առաջ տանողներից մէկն է պ. Տիգրան Աբգարեանը, որ խիստ կերպով բողոքում է Զուղաճայ մանուկ-պատանիների դէպի Հնդկաստան դաղթի մասին, որոնք մանկութիւնից բաժանւելով ընտանեկան օջախից, այլասեռւում, կորչում են:

Այնուհետև մեծ տեղ է գրաւում զպրոցական բաժինը և զանազան բարեգործական ընկերութիւնների և հաստատու-

Թիւնների գործունէութիւնը: Երևում է նաև ամսագրի մէջ
բանաստեղծութիւնը՝ «Պատկերիդ առաջ» — Նորեկի և «Սև և
օսարիւն» — Հրանդ Ֆալեանի: Կայ նաև սգապատկ «Խրիմեան
Հայրիկի» մահւան առթիւ, ինչպէս նաև բժշկական, թարգ-
մանական գրաւածքներ:

Բացի բազմաթիւ ինքնուրոյն, քննադատական, թարգմանական գրաւծքներից, այստեղ կարելի է գտնել Հարուստ տեղեկութիւններ, վերաբերեալ Սինգաբուրի, Ռանգունի, Պինանգի, Կալկաթայի, Բոմբայի, Ջալայի և այլ Հայերի կեանքից և նրանց բարեգործական-կուլտուրական հաստատութիւնների մասին:

Այնուհետև պատկառելի տեղ է բռնում արտաքին և ներքին լուրերը: Ազգային կեանքից լուրեր: Արտատպումներ «Մեակից», «Մուրճից»: Կայ նաև յայտարարում թիւնների և նւէրների բաժին:

Եզրակացութիւն: Զուգահայ զրականութեան պատմութեան մէջ Նոր-Ջուղայի Լրաբերի նշանակութիւնը մեծ է: Նա բարերար ազդեցութիւն է անում Զուգահայերի գրական ճաշակը զարգացնելու և մտքերն աւելի բարձր իդէաների նախապատրաստելու գործում: Նրա քարոզած գաղափարների նորոգիւ ժողովուրդը զարթնում է իր դարևոր քնից և ձրգտում դէպի յոյս:

տուում զէպի լոյսը։
Ս.սպարէզ զալով Լրաբերը հրապարակ է հանում մի
շտրք, կենսական նշանակութիւն ունեցող խնդիրներ, որոնք
մնացել էին անուշադիր և որի մէջ խեղդւում էր ժողովուր-
դը։ Հարկաւոր էր մի հզօր խթան, մի գործօն ոյժ, որ մեր-
կացնէր, պարզէր այդ երևոյթները և ուղղութիւն տար հա-
սարակական կեանքին, նրա զգացումներին, իսկ ո՞վ պիտի
կատարէր այդ հսկայական դերը, ո՞վ պիտի կենդանացնէր
ժողովուրդն իր անշարժութիւնից, ո՞վ պիտի ցոյց տար նրա
պոկասութիւնները։ Ս.հա այդ բոլոր տխուր երևոյթների
առաջ կանգնած Լրաբերը, յարատև պայքար է մղում ժա-

մանակի խաւար ոգուն և անշարժութեան դէմ՝ քարոզելով
դէպի ինքնաճանաչութիւն, դէպի նոր դաւանանք և նոր
հորիզոններ: Եւ նա շրջում է մարդկանց մէջ, հնչեցնում
լուսաւորութեան ղողանջը, զարկում քնած սրտերին, զար-
թեցնում նրանց, առաջնորդելով դէպի լոյս . . . Այսպէս ահա
Լաբերն իր ամենամաքուր իդէալներով դառնում է վերանոր-
ոգիչ, յեղափոխիչ Ջուղահայ կեանքի մտաւոր, բարոյական
վերածնութեանը: Նրանով Ջուղահայ մտաւոր հորիզոնն ըն-
դարձակում է և հարստանում: Իսկապէս Ջուղահայ ժողո-
վուրդն իր կուլտուրական յատկութիւններով շատ բան պար-
տական է Նոր-Ջուղայի Լաբերնին: Եթէ երբէք Ջուղահայ հա-
սարակութիւնը հասել է որոշ ազդային ինքնագիտակցութեան,
եթէ նա այսօր ձգտում է ազդային դաստիարակութեան, նա
մեծ մասամբ պարտական է այդ Լաբերնին: Թէև ամսագիրն
ամբողջ չորս տարւայ կեանք է ունենում, 1908 թւին ինչ
ինչ հանգամանքների պատճառով դադարում՝ սակայն նա
կարմիր թելի նման անմոռանալի մի հետք է թողել իր ե-
տեւից և այսօր պատկառելի տեղ է գրաւում Ջուղա-
հայ տարեգրութեան և հայ լրագրական պատմութեան մէջ,
ուր ցայտուն կերպով ցուցադրւում է հ. Բագրատ վարդ.
Վարդազարեանի պատկերը:

1919 թ. Յունւար 1-ին լրանում է Լաբերնի տասն և
հինգ ամեակը. դա մի շատ խոշոր և աչքի ընկնող նշանակա-
լի է Ջուղահայ հասարակական-կուլտուրական կեանքում: Ցան-
կալի էր, որ Ջուղահայ ժողովուրդն տօնէր այդ տօնը, որպէս
մի բարոյական համեստ կոթող ի յիշատակ այդ պատմական
լրագրի:

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԱԶԳ. ԹԱՏՐՈՆԸ

(Պատմական ակնարկ)

1888—1918

Ներածութիւն

Գեղարեստաւէ ժողովուրդն երբէք չի մեռնիլ . . .
Ա. Ե.

Մտէք Նոր-Ջուղայի Ազգ. Կենդրոնական դպրոցից ներս
և կանգ առէք դպրոցի դահլիճում. ահա այնտեղ կանգնած
է Նոր-Ջուղայի Ազգ. Թատրոնը, ծածկւած շքեղ, իւզաներկ
մի վարագոյրով, որը ներկայացնում է գեղարեստական մի ամ-
բողջ պատկեր: Դա հայ տաղանդի լաւագոյն ստեղծագործու-
թեան մէկ պատկերն է, որի մէջ երևան է բերում գեղար-
եստական ուժեղ թափ, պատկերաւորութիւն և մի նուրբ
գծագրութիւն, որ թափանցում է իւրաքանչիւր դիտողի հո-
գին և համակում նրան հայրենի յոյզերով և գեղեցկի ու
վսեմի զգացումներով: Այդ վարագոյրով պատկերանում է
Ջուղահայ տարագիր ժողովրդի հայրենի կարօտով տանջւած
սիրտը, իր մտորումներով և տենչանքներով: Վարագոյրի ձախ
անկիւնը. սրտառուչ ներդաշնակութեամբ պատկերանում է
աւերակների մի կոյտ, որի վրայ, մենաւոր ուռննու տակ նստած
է ագաւոր Մայր հայաստանը, որն իր խորհրդաւոր և հոյա-
կապ տեսքով, հայրենի վիշտն է ներշնչում: Նրա մօտ, մէջտե-
ղում կանգնած է ձիւնադադաթ, հսկայ վիթխարի Մասիսը, որի
լանջից հոսում է կախարդիչ, հարազատ պատկերացումով հին
Արաքսը, որ ողջունում է մի քանի մնացորդ, աւերակ ու
փշրւած պարիսպների, որոնք իրենց խորհրդաւոր կեցւած-
քով, վկայում են հայ ցեղի անցեալ ստեղծագործութեան
փառքը: Անհի պարիսպներն են նրանք: Վարագոյրի վերի
մասում գծագրւած է երաժշտական-գեղարեստական մի ամ-

բողջ աշխարհ, իսկ երկու կողմերում միմեանց վրայ կանգնած են մի քանի աւերակ եկեղեցիներ, տաճարներ, որոնք տխուր զգացումներ են զարթեցնում իւրաքանչիւր դիտողի սրտում: Իսկապէս հոյակապ այս վարագոյրը, համարձակութեամբ կարելի է ասել հայ հանճարի ստեղծագործութեան մի կատարելապատկերն է: Եւ այս գեղեցիկ վարագոյրով ծածկւած Զուղահայ թատրոնը, ունի իր պատմութիւնը, որը տալիս ենք համառօտակի ընդգծումներով:

Ա. Շրջան

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԱԶԳ. ԹԱՏՐՈՆԻ ԾԱԳՈՒՄԸ

Նոր-Ջուղայի թատրոնական ծագման և սկզբնաւորութեան առաջին շրջանը կազմում է 1888 թւականը: Կուլտուրական առաջախաղացումների և գեղարւեստական ապրումների մի շրջան է դա, որի մէջ վերածնւում է և Զուղահայ թատրոնը: 80-ական թւականների վերջերում բացւում է Նոր-Ջուղայի մտաւոր գործունէութեան ասպարէզը, որի վրայ երևում են ժամանակի լաւագոյն ձգտումներով և ազնիւ իդէալներով տոգորւած երիտասարդներ՝ (Մէլքում Մարգարեան, Մայիլ Ս. Եսայեան, Յարութիւն Տէր-Կարապետեան, Պօղոս Մարտիրոսեան, Աստուածատուր Սարգսեան), որոնք ըմբռնելով ժամանակի ոգին ու պահանջը և մանաւանդ թատրոնի կատարած հսկայական դերը և նրա նշանակութիւնը, համախմբւում են թատրոնի դրօշի տակ, կազմակերպւում և մի շրջաբերականով կոչ անում հայ հասարակութեան զգացումներին՝ շեշտելով թատրոնի նշանակութիւնը, հանգանակութիւն են կատարում և այդպիսով ղեկավար հանդիսանում Նոր-Ջուղայի Ազգ. թատրոնին: Նորակազմ այս խումբն ըսկսում է գործունէութեան: Կազմում է գերասանական խումբ և ահա առաջին ներկայացումը տրւում է 1888 թւականին:

Դա մի անմոռանալի թւական է Նոր-Ջուղայի թատրոնական պատմութեան մէջ, որի վրայ կառուցւում է գեղարւեստական դպրոցը: Այնուհետև ներկայացնում են մի քանի պիեսներ (հայրենասիրական մօտիւով) և վոդևիլներ:

Ահա այսպիսով սկիզբ է առնում Զուղահայ թատրոնը, շնորհիւ ժամանակի լաւագոյն մտաւորականութեան: Բայց աւաղ առաջին շրջանում սրանք առաջին և վերջին ներկայացումներն են լինում: Այնուհետև ներկայացումներ չեն տրւում: Հանգամանքները փոխւում են: Թատրոնը բարոյական սարսափելի հարւած է ստանում: Նոր-Ջուղայի թեմական առաջնորդ՝ Եսայի արքեպիս. Աստուածատրեանը խոչընդոտ է հանդիսանում և այնուհետև թատրոնը լռում է ուղիղ եօթը երկար տարիներ:

Բ. Շրջան

ՋՈՒՂԱՀԱՅ ՕՐԻՈՐԴԸ ՀԱՅ ԲԵՄԻ ՎՐԱՅ

Նոր-Ջուղայի Ազգ. թատրոնի վերածնութեան 2-րդ շրջանը կազմում է 1897—1905 թւականը: Այս 2-րդ շրջանն աւելի ուշագրււ, անմոռանալի տարեթիւ է կազմում Նոր-Ջուղայի թատրոնական պատմութեան մէջ: 97 թւականին թատրոնի շուրջը համախմբւում են թատրոնի յառաջագիմութեան և զարգացման նախանձախնդիր լաւագոյն ուժեր՝ (Մկրտում Կարապետեան, Տիգրան Աբգարեան, Ներսէս Տէր Յարութիւնեան, Յարութիւն Յորդանանեան, Մկրտիչ Ս. Յարութիւնեան, Սարգիս Սարգսեան), որոնք ձգտում են թատրոնական գործը դնել հաստատուն հիմքերի վրայ և այդ նպատակով կազմում են թատերասիրաց մի ընկերութիւն և Նոր-Ջուղայում թատրոնը նորից կենդանութիւն է ստանում: Այնուհետև նորակազմ խումբը դնում է բեմի վրայ Գաբրիէլ Սունդուկեանի «Պէպօն», բայց նախքան պի-

եսի խաղաղելիլը, վարչութիւնը հարթում է մի խիստ ուշա-
գրաւ խնդիր: Թատրոնի վրայ դերասաններ կային. իսկ ամե-
նախանձը՝ դերասանուհիներ պակասում էին — հայ օրիորդը
չէր համարձակում բեմ դուրս գալ, այդ բանը պատճառ էր
դառնում ներկայացումների անյաջող ընթացքին: Իսկ դրա
պատճառն էր, տիրապետող հայկական տխուր իրականու-
թիւնը, որից մեծապէս տուժում էր հայ կրթական տաճարը:
Պէտք էր մարտնչել այդ երևոյթի դէմ, պէտք էր արթնաց-
նել հասարակութեան մէջ գիտակցութեան ոգին և ահա այդ
ծանր գործի իրագործումը յանձն է առնում վարիչ մարմի-
նը, որը կռիւ մղելով ժողովրդական նախապաշարումների, ա-
ւանդական դատողութիւնների և կաշկանդումների դէմ, վեր-
ջւապէս հսկայական զահողութիւններից յետոյ, կարողանում է
բեմ դուրս բերել երեք հայ օրիորդների և ահա 1899 թ.
առաջին անգամ լինելով՝ Ջուղա հայ օրիորդն արհամարհելով
նախապաշարումները բեմ է դուրս գալիս: Բեմի վրայ երե-
ւում են այլևս ոչ միայն դերասաններ, այլև դերասանուհի-
ներ՝ (օր. Ուսաննա Սիմէօնեան, օր. Ծաղիկ Մինասեան, օր.
Լուսաբեր Տէր-Յակոբեան), որոնք դուրս գալով ընտանեկան
նեղ շրջանից մասնակցում են ժամանակակից կուլտուրական
հոսանքին և բարոյական քաջութիւն են ունենում ոտ դնե-
լու թատերաբեմի վրայ: Արդէն հնչում էր բեմից հայ
օրիորդի ձայնը, թատրոնը ժողովրդական բնաւորութիւն
է ոտանում, ասպարէզը լայնանում է: Ժողովուրդը սիրով
յաճախում է թատրոնը, ուր լայնանում է նրա մտածողու-
թեան հորիզոնը, ընդունում թատրոնի նշանակութիւնը և
սիրով ձեռք կարկառում թատրոնին:

Գ. Շրջան

Թատրոնի վերածնութեան 3-րդ շրջանը կազմում է
1905—13 թւականը: Այս շրջանում որոշ ընդհատումներով

շարունակում է թատրոնական գործը: Թատրոնի բարգա-
ւաճման նախանձախնդիր անձինք ձեռք են առնում թատ-
րոնը: Այնուհետեւ թատրոնն իր գոյութիւնը շարունակում
է Ազգ. երկսեռ դպրոցների Հոգաբարձութեան, ուսուցչական
խմբի և մանաւանդ Կանանց բարեգործական ընկերութեան
և Յեղափոխական խմբերի ջանքերով և զոհաբերութիւն-
ներով: Նրանք կազմակերպում են թատերասիրաց մասնաժո-
ղովներ, կազմում դերասանական խումբ և բեմի վրայ դնում
մի շարք պիեսներ և վոդևիլներ: Ահա այսպէս 90-ական
թւականներից սկսած բեմական գործունէութիւնը Նոր-Ջու-
ղայում տարւում է բաւարար, շնորհիւ մտաւորական և
գիտակցող ոյժերի:

Ներկայացուած պիեսացներ: Ա. Բ. Գ. շրջանների ընթաց-
քում ներկայացւել են մի շարք լուրջ պիեսներ և վոդը-
վիլներ, որոնցից յայտնի են՝ «Պէպօ» և «Ելի մէկ զոհ» — Գաբ-
րիէլ Սուրբուկեանի, «Ժընէվիէվ» — փոխադր. Մկր. Կաբապե-
սեանի, «Սև հոգեր» — Պ. Գուրեանի, «Ասլան բալասի» — Խա-
չատուր Աբովեանի, «Թագի համար» — Ֆր. Կոպպէի, «Ռուզան» —
Մուրացեանի (Գրիգոր Տէր Յովհաննիսեան), «Պատւի համար», «Եւ-
գինէ», «Աւերակների վրայ», «Արմենուհի» և «Չար ոգի» —
Շիրվանգաղեի (Ալեքսանդր Մովսիսեան), «Արցունքի հովիտ» —
Աւետիս Ահարոնեանի, «Վենետիկի վաճառականը» — Շեքսպիրի,
«Դաւաճանութիւն» — Սուրբաբովի, «Ժայռ» — Վրբանես Փափա-
գեանի, «Վերածննաճը» — Լեոն Մանեկեանի, «Մարեոյ ճը-
րագներ» — Ալեքսանդր Աբեյեանի, «Պատիւ» — Զուդեմեանի, «Մե-
ծապատիւ մուրացիաներ» և «Արևելեան ատամնաբոյժ» —
Յակոբ Պարոնեանի, «Բռնի ամուսնութիւն» — Մոլիերի, «Կեղծ
բժիշկ» — Ֆիլիպեգի և «Թղթամոլի վախճանը» — Հ. Միլերի:

Բացի այդ՝ եղել են նաև գրական-երաժշտական երե-
կոյթներ, կոնցերտներ և տօնածառեր:

Յորելեան: 1888—1913 թւականը: Դա մի ամբողջ շրջ-

ջան է: Ամբողջ քառորդ դար, որի ընթացքում ԶուղաՀայ
Թատրոնը ծառայել է ժողովրդի զարգացման և յառաջխա-
ղացման գործին: Նրա շնորհիւ կազմակերպւել և յեղաշրջւել է
ԶուղաՀայ ժողովրդի կեանքը, նրա աշխարհայեացքները, հաս-
կացողութիւնները, ապրելակերպը և այլն: Բայց դրա հետ միա-
սին, Թատրոնն իր ծագման օրից ի վեր անցել է հսկայական
գոհարարութիւններից և խոչընդոտներից և միշտ կռիւ է մղել
մի շարք աննպաստ հանգամանքների դէմ և վերջապէս կա-
րողացել է կանգնել քիչ թէ շատ հաստատուն հիմքերի
վրայ: 1913 Նոյեմ. 21—23, ուղիղ երկու օր, ԶուղաՀայ հաս-
տարակութիւնը տօնում է հանդիսաւոր կերպով նրա գոյու-
թեան 25-ամեակը և հայ ժողովուրդը գիտակցական այդ վե-
րաբերմունքով՝ գալիս է ապացուցելու, որ սիրում է իր դրպ-
րոցը, գեղարւեստի տաճարը: (Թատրոնը):

Դ. Երջան

Նոր-Զուղայի Թատրոնական վերածնութեան Դ.-րդ շրջանն
սկսում է 1914 թւականից, բայց քաղաքական աննպաստ
հանգամանքների պատճառով Թատրոնը մի որոշ ժամանակ
կանգ է առնում: Այնուհետև 1916 թւին նորից կազմա-
կերպւում է Թատերասիրաց վարիչ մարմինը և Թատրոնա-
կան կեանքը որոշ ընդհատումներով շարունակում է իր ըն-
թացքը:

Նոր-Զուղայում խաղացած պիեսաների յաջողութիւն-
ները ցոյց են տալիս թէ, գաւառում կան բեմական յատկու-
թիւններով օժտւած դերակատարներ, որոնք ապագայ խոս-
տանում են և կարող են բեմին ծառայել, եթէ երբէք
նրանք մշակեն՝ արւեստը դրամատիքական դպրոցում:

Այսօր Թատրոնը Նոր-Զուղայի հայ հաստարակութեան
համար դարձել է կուլտուրական անհրաժեշտ մի պահանջ
և ժողովուրդը սիրով յաճախում է Թատրոն:

ԳՈՐԾԻԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ ԶՈՒՂԱՀԱՅԵՐԻ ՄԷՋ

ԶուղաՀայերը, Պարսկաստանում ապրելով պարսիկների
մօտ, թէև կուլտուրապէս նրանցից աւելի բարձր են կանգ-
նած, բայց ընկած են ուղղակի նրանց ազդեցութեան ներքոյ:
Նրանք ամբողջ դարեր ապրելով պարսիկների հետ և իւ-
րացնելով նրանց աշխարհայեացքները, կորցրել են իրենց
ազգային առանձնայատկութիւններից շատ բան և փոխ են
առել նրանց սովորութիւնները, երգերը, լեզուն, և այլն:
Այսպէս օրինակ ԶուղաՀայերը մոռացել են իրենց ազգային
երգերը: Այսօր նրանց երգերը մեծ մասամբ պարսկական եր-
գեր են. չկայ նրանց մէջ ոչ մի ինքնուրոյն-ժողովրդական
երգ: Նոյնպէս նրանք փոխ են առել պարսիկների նւագա-
րանները: Հին հայկական նւագարանները ԶուղաՀայերի մէջ
հատ ու կտոր են, իսկ այդ էլ շատ աղքատ է և մինչև այ-
սօր ոչ մի յառաջադիմութիւն չի արել:

Ներկայումս ԶուղաՀայերի մէջ գործ են ածւում հետե-
ւեալ նւագարանները.

Ա. Լարականցերից՝

1. Թառ: Սա հինգ մետաղեայ լարերով, պարանոցը եր-
կար և երկու ուռուցիկ՝ բերանները մաշկով պատած մի գոր-
ծիք է: Նւագում են մետաղէ փոքրիկ կտորով, որի վերին
մասը մոմած է: Տեղացիները կոչում են մէզրապ, Այս գոր-
ծիքը՝ շինում են նաև հայերը: Ամենանշանաւոր Թառշինող-
ներն են Մէլքում Գրիգորեան (Թառ-սաղ Մէլքում), նաև իրա-
չատուր Ղուկասեան և Համբարձում Արգարեան:

2. Սեթառ: Թառանման մի գործիք է: Ունի 4 լար և
մի ուռուցք՝ փայտից շինւած: Նւագում են եղջերի կնտնոցով՝
Այս գործիքը շինում են թէ հայերը և թէ պարսիկները:

3. Զօնգուռ: Թառանման գործիք է: Ունի 8 մետաղեայ
լար: Նւագում են մէզրապով:

4. Քամանչէ: Զուլականման գործիք է: Ունի երեք լար: Նւագի տակ կայ երկաթեայ մի ձող, որ նւագելիս դնում են գետնի վրայ: Նւագում են կայելով: Այս գործիքը շինում են պարսիկները:

5. Սանբուր: Այս գործիքը Հայաստանից է բերւած Նոր-Ջուղա: Եռանկիւնաձև լարական մի գործիք է, որ ունի 18 կարճ մետաղէ լարեր, որոնք ամրացած են մետաղեայ սեղ-միջնորդ: Նւագում են երկու փոքրիկ, բարակ փայտերով: Չնայած, որ այս գործիքը Հայաստան տարածւած է, բայց այստեղ գործածութիւնից ընկած է:

6. Մանգոլին: Այս գործիքը Նոր-Ջուղա բերւած է Ռուսաստանից և Հնդկաստանից: Ծիշտ ուտի նման է, բայց նրանից աւելի փոքր է: Սրա լարերը մետաղեայ չնու: Ունի փարտանք: Նւագում են եղջիւրի կնտնոցով: Գեղեցիկ, ու-ժեղ և ներդաշնակ ձայն ունի:

7. Բանջո: Մանգոլէնի ձև ունի, բայց աւելի տափակ է: Ունի 8 մետաղեայ լարեր: Նւագում են հեկալով: Այս գոր-ծիքը Եւրոպայից է բերւած Նոր-Ջուղա:

8. Պիանո (դաւեմամուր): Սա մեղմ, նուրբ ձայն ունի՝ զանազան ելեկշնորով ու մօտիւններով: Եւրոպայից է բերւած այս գործիքը և Նոր-Ջուղայում ընդամենը 4—5 պիանո կայ:

Բ. Փշողականներից:

1. Նէյ: Ֆլութանման եղեգնեայ մի գործիք է, բայց ֆլութից աւելի քաղցր ձայն ունի, որին պարսիկները նւագում են հիւանդի գլխին այն հաւատքով, որ հիւանդը կը-բժշկուի: Այս գործիքը շինում են պարսիկները:

2. Ֆլութ: Եւրոպայից է բերւած այս գործիքը Ջուղա: Նւագում են ուրախութեան և երեկոյթների ժամանակ:

3. Զուռնա: Ֆլութաձև գործիք է: Նւագում են հարսա-նիքի ժամանակ: Ունի ուժեղ և սուր ձայն:

Գ. Թնդականներից:

1. Նաղաւա: Երկու մեծ պտուկներից բաղկացած գոր-ծիք է, որի բերանները պատած են մաշկով: Նւագում են հարսանիքի ժամանակ երկու բարակ և երկար փայտիկներով:

2. Թմբուկ: Մեծ, կլոր, գինու քաժակի ձև ունի, որի

բերանը ծածկւած է եղջերի կաշուով: Նւագում են ձեռքով հարսանիքի ժամանակ:

Այս բոլոր գործիքները գործ են ածում Հայերը, Նոր-Ջուղայում, հարսանիքների, խնջոյքների, ուրախութեան և երեկոյթների ժամանակ: Բայց պիտի ասել, որ լաւագոյն սազանդարները պարսիկների մէջ են գտնւում, որոնք թէ նւագում են և թէ երգում: Ամբողջ Պարսկաստանում յայտ-նի է Դէրվիշ-խանն իբրև թար ածող, որ նւագում է գողտրիկ աւազներ (պարսկերէն կտորներ) Հաֆիզից և Օմար-խայամից: Ծիշտ է, թէև նրանք չունին մշակւած ձայն, բայց օժտւած են ուժեղ և դուրեկան ձայնով: Իսկ գալով երգերի ընթմին, կախւած է երգողից: Նայած թէ երգիչը հոգեկան ինչ տը-րամադրութեան մէջ է գտնւում. նա երգում է միևնոյն երգը տարբեր ձևերով, տարբեր գեղգեղանքներով և մօտիւ-ներով:

Այսպէս կամ այնպէս՝ Ջուղահայերը Պարսկաստանում գտնւելով պարսիկների ազդեցութեան տակ, կորցրել են ի-րենց հարազատ երգն ու նւագարաններն և փոխ են առել պարսիկներից շատ բան:

Այժմ ասենք երկու խօսք էլ աշխատանքի երգի մասին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՐԳԸ ՆՈՐ-ՋՈՒՂԱՅՈՒՄ

Նոր-Ջուղայում տարածւած են պարսկերէն-ժողովրդական բազմաթիւ երգեր: Այդ երգերը հնչում են ընդհանրապէս աշխատանքի ժամանակ, որոնք իրենց տեմպով և երևէջները յաջորդումով ենթարկւում են աշխատանքի ընթացական բնոյթին և իրենց բովանդակութեամբ մեծ մասամբ պատկերացնում աշխատաւորի ներքին աշխարհը, նրա հոգեկան յոյզերն ու զգացումները:

Այդ երգերը Նոր-Ջուղայում, ընդհանրապէս երգւում են զարնան ժամանակ:

Գարուն է: Գաշտ, սար ու ձոր ծաղկել, կանաչ են կապել և ահա երգը հնչում է ամբողջ Ջուղայում: Մի տեղ հնչում է պարսկ գութանաւորի ծանր և ձիգ երգը, որ զիլ բացականչութիւններով արձագանք է տալիս ազատ երկնքի տակ: Մի այլ տեղ մանգաղի զարկի հետ կըլկլում է յուզիչ մեղեդին: Մի ուրիշ տեղ հնչւորի սայլն է առաջ գնում մեղմիկ ճառարով, որի հետ հնչում է հէյ ջուռում-ջուռումը: Այսպէս՝ երգում է ջրհորի մօտ՝ ջուրքաշը, ցորենի արտում՝ հնչւորը, աշխատանքի դաշտում՝ աշխատաւորը, փողոցում՝ դէրվիշը: Եւ այդ բոլորն իրար զրկախաււորը, նըրած՝ կազմում են մի գեղեցիկ ներդաշնակութիւն և կեանք, որդեորութիւն ներշնչում ամբողջ Ջուղային:

Անցիր կանաչազարդ, գալար դաշտերի միջից, կանգ առ ալուալւան, ծաղկալից պարտէզների ու կանաչ արտերի առաջ, և դու կըլսես այդ անուշ գեղեցիկները:

Պարսիկներն ընդհանրապէս երգելով են աշխատում: Ասկայն շատ նահապետական է և չարքաշ պարսկի աշխատանքը և նա իր աշխատանքն առաջ է տանում երգելով: Ահա նրանցից որմնադիրը, նրան ցեխ, աղիւս և կամ կիր է հար-

կաւոր. նա այդ բոլորը խնդրում է գործաւորից երգելով և դիմելով նրան զանազան փաղաքշական խօսքերով՝ «աչքիլոյս», «հարազատ», «եղբայր» և այլն: Այդ խօսքերը պարզ են, անարեւոտ և գիւթիչ:

Սակայն նրանց մէջ ամենից աւելի ուշագրաւն է ջրհորի երգը, որ հնչում է ամբողջ ամառայ ընթացքում, ամբողջ Պարկաստանում և մասնաւորապէս Նոր-Ջուղայում:

Ահա ջուրքաշը կանգնած է ջրհորի մօտ: Նա իր եզան օգնութեամբ ջրում է այգիները, դաշտերն ու պարտէզները, որպէսզի դաշտերը կանաչեն, այգիներն ուռճանան, պարտէզները ծաղկեն ու երկիրը բարգաւաճի: Յոյս և հաւատ համակել է ջուրքաշին և նա տոգորւած ապագայի ոսկէ յոյսերով երգում է ներդաշնակ ձայնի ելեւէջներով, երգում է և եզի զանգի անուշ ղօղանջի հետ խառնում իր զգացմունքները, իր յոյզերն ու տենչերը: Մինչ եզը, հաստ պարանը վզին, տիրոջ առաջնորդութեամբ, ջրհորից քաշում է ջրով լեցուն դոյլը, որ պարպւում է փոքրիկ աւազանի մէջ ու այնտեղից կըլկլալով վազում դէպի այգին, դէպի դաշտերը... Այդ ջուրը կենսական նշանակութիւն ունի իր համար, ուստի նա գովեստ է անում իր եզան, նրա աշխատանքը փառաբանում և իր կեանքը եզին Ղուրբան անում:

Հորից ջուր ենք քաշում, լուսնակ գիշերով
Գաշտ ու այգուն հոր կեանք տալով,
Անցնում է կեանքը, անուշ օրերով
Անուշ օրերով, քաղցը երգերով:

Քաշում ենք ջուրը, ջրում դաշտերը
Բարձրանում են՝ կանաչ խոտերը,
Քաշիր քեզ մատաղ, ե՛վ իմ սև կովիկ
Որ նեղացնում ես ջուր քաշիս,
Քաշիր այ կովիկ:

Կամ

Ուկով, արծաթով կը պատես սմբակը
Եթէ դու գիտնաս քո եզի դադը
Քաշիր այ եզիկ:

Նազը կ'ըջան սև անդին եզիս
Որ տանջում է ջուր քաշիս,
Քաշիր քեզ մատաղ, ա՛յ իմ սև եզիկ...

Այդ երգերն արտայայտութիւն են ջուրքաշի հոգու և տրամադրութեան, որոնց մէջ պատկերացնում է նա իր ներքին հոգեկան աշխարհը, զգացմունքները և զանազան մօմէնտներում ապրած վայրկեանները, անմիջապէս, պարզ ու անարւեստ մօտիւններով, որոնք սակայն հնչուն են, դուրեկան ու ներգաշնակ:

Այս ջուրքաշների մէջ կան նաև պանդուխտներ, որոնք հայրենիքից հեռու ապրելով, հայրենի կարօտն են հեծում և տանջում իրենց ետքի սիրովը և այդ սիրոյ, կարօտի զգացմունքի ազդեցութեան տակ՝ նրանք բաց են անում իրենց թախծոտ սիրտը. զարկում տոչորւող սրտի կարօտ՝ լարերին և բաց երկնքի տակ երգում իրենց անհուն վիշտը բլբուլին.

Սրի բլբուլ կեանք տուր մեր պարտէզներին
Գեղգեղալով խաբար արա ջան իմ ետին,
Ջան իմ ետին, անուշ ետին
Անուշ ետին, ջան իմ ետին:
Ետ, ետ, ջան ետ,
Ետ, ետ, անուշ ետ,
Անուշ ետ, ջան ետ:

Ընդամենը եօթը տող, որի մէջ ջուրքաշը տխուր, անպաճոյճ կերպով հնչեցնում է իր սրտի խորքից ելած հառաչները, իր յոյս ու յոյժերով, տենչ ու կարօտով: Բայց ջուրքաշին չեն սփոփում այդ երգերը, որովհետև

Քանի օր է վաշդի բուրմունք չի գալիս
Բլբուլի գեղգեղալու ձայնը չի գալիս,
Գնացէք վարդաթիրոջը հարցրէք
Թէ ինչո՞ւ բլբուլը վարդին տես չի գալիս:

Եւ նա դարձեալ տխուր է, դարձեալ անմխիթար ու կարօտակէզ: Այնուհետև նա երգը նւիրում է նորից իր եզին՝

Պաշտեմ քո սապատն ու սապատակապ
Պաշտեմ քո երկար եղջիրն ու սև գոյնդ,

Դու Յէր, կորովի դարձուր իմ սեուկին,
Որ հուժկու կուրծք է տալիս ջրի խաւերին:

Ապա պատկերացնում է իր ծանր դրութիւնը.

Վաթանի կարօտը տոչորում է ինձ, Աստած,
Ետքս իմ է վաթանում ինձ յիշում, Աստած,
Ա՛խ, դարդս խառնել եմ սեուկիս հետ, է՛յ Աստած,
Ա՛խ, անճար եմ, անճար, ինչպէս սեուկս, Տէր Աստած:

Դէ, քալիր դէպի ցած¹⁾ իմ անմունչ նազելի
Վերջ կայ քո դարդին, վերջ չկայ իմին, է՛յ նազելի,
Քաշիր, դէ քաշիր, շունչդ պազնեմ ես, է՛յ նազելի
Ա՛յ մեռնեմ ես քո լայն թոքերին և տաք շնչին,
Քաշիր այս վերջին անգամն էլ, իմ նազելի
Ու գնա գոմը, մսուրի առաջ, իմ նազելի:

Ահա այսպիսի մօտիւններ են հնչում և այսպէս է անդրադառնում ջրի աշխատանքը պարսիկ ջուրքաշի երգերում, որոնք իրենց ընթացիկ կազմով և բովանդակութեամբ բաւական համապատասխանում են աշխատանքի բովանդակութեանը և մեծ դեր խաղում աշխատանքի լարաճութեան վրայ:

¹⁾ Այն մասն է, որ եզը ջուր փառելիս դէպի ցած է փայլում:

կան նաև խանութպաններ, վաճառականներ, բայց դրանց թիւն էլ շատ փոքր է: Փոքր տոկոսով կան նաև բժիշկներ, հեռագրիչներ, ուսուցիչներ, քահանաներ, նրկարիչ-քանդակագործներ, ատամնաբույժներ, հացագործներ, ատաղձագործներ, քարտաշներ, բաղնիսպաններ, սափրիչներ և այլ արհեստավորներ:

Շատ քչերն են, որոնք տիրող կառավարութեան կամ օտար հաստատութիւնների մէջ իրենց հաւատարիմ գործունէութեամբ ձեռք բերած լինելով անսահման վստահութիւն, այդ հաստատութիւններում են գործում:

Ապա ղր են հայ պղնձագործները, երկաթագործները, մսավաճառները, ջուլհակները, սեղանավորները, բրուտները՝ և այլ արհեստավորները, որոնցով տաճկահայաստանում հայերը մեծ տնտեսութիւն են ձեռք բերում. ցաւօք պիտի ասել, որ այդ բոլոր արհեստները կենդրոնացած են պարսիկների ձեռքում: Հայերը վաղուց, շատ վաղուց է թողել են այդ արհեստները: Նրանք չեն կարողացել առանձին մեծ յաջողութեամբ զարգացնել իրենց մէջ արհեստներ, առևտուր, արդիւնագործութիւնը և այլն:

Ահա այս է Ձուղահայերի տնտեսական պատկերը: *

* Ծանօթ. Մեր այս աշխատութեան մէջ վրիպել են մի քանի կէտադրական, տառական և դարձաձգների սխալներ, որոնց համար խոնարհաբար խնդրում ենք ազնիւ ընթերցողի ներողամտութիւնը:

Ն Ո Ր — Ջ Ո Ի Ղ Ա.

Ն.-Ջ. Ս. Ամենափրկչեան Վանքը

1.	2.	3.	4.
Մայր եկեղեցի	Առաջն.-Խորհրդարան	Տղարան	Մատենադարան
	5.		
	Հոգաբարձ.-Խորհրդարան		

Ն.-Ջ. Եկեղեցիներ

1.	2.	3.	4.
Ս. Աստածածին	Ս. Գր. Լուսավորիչ	Ս. Ստեփաննոս	Ս. Յովհաննէս
5.	6.	7.	8.
Ս. Նիկողայոս	Ս. Ներսէս	Ս. Մինաս	Ս. Սարգիս
		10.	9.
		Ս. Գէորգ	Ս. Գատարիկ

Ն.-Ջ. Դպրոցներ

1.	3.	4.
Ազգ. կենդրոնական տղ.	Ս. Գատարիկեան օր.	Գէորգ Գանանեան
5.		6.
Ս. Ամենափրկչ. Հոգ. գիշերօթիկ	Ս. Գատ. Որբանոց	

Ն.-Ջ. Բարեգործական ընկերութիւններ

1.	2.	3.	4.
Հայուհեաց բարեգործ.	Աղքատախնամ ընկ.	Կարմիր խաչի միութ.	Արանց ընկ.

Ն.-Ջ. Գրադարան-Ընթերցարաններ


1.	2.	3.	4.
Ռաֆֆի գր.-ընթերց.	Երկունք գր.	Իգմիրլեան գր.	Ազգ. Գենդր. գրավաճառանոց

Ն.-Ջ. Ազգ. Թատրոնը

Ազգ. Գենդրոնական Դպրոցում

Ն.-Ջ. Արհեստներ


1.	2.	3.	4.
Գօշկակարութիւն	Ոսկերչութիւն	Ժամագործութիւն	Այգեգործութիւն
		5.	
	Գուլպայագործութիւն		



Հայկ. Եկեղեցի
 Ղ. Կ. Եկեղեցի և մեծ խորհուրդի Եկեղեցի. 1900 թ.



Ս. Կ. Եկեղեցի և մեծ
 խորհուրդի Եկեղեցի.





ՄՄ Հայագիտական գրադարան



MAL046679

